Թողարկման 15-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2008

ա մ ր ի լ

թիվ 4 (116)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-5-Ն ՀՀ օրենքը

8 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-6-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

10 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները որոշ ՍՊԸ-ների ապահովագրական բրոքերային (միջնորդային) գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «Օսմպ» ՍՊԸ-ին վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիա տրամադրելու, «Լիդեր ապահովագրական բրոքեր» ՍՊԸ ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիան վերաձևակերպելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները ներկայացուցչությունը հաշվառելու, ինչպես նաև արտարժույթի առուվաճառքի և գրավատան կազմակերպման լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները մասնաճյուղերը, մասնաճյուղի գործունեության դադարեցումը գրանցելու և մի շարք արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 103Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 56-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 64-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հուլիսի 13-ի թիվ 175-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 68-Ն որոշումը «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին»

58 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 69-Ն որոշումը «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ը հաստատելու մասին»

66 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 71-Ն որոշումը «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 250-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի մարտի 16-ի թիվ 40 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

88 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 76-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

88 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 78-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

89 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 79-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 578-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

89 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 80-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

90 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 81-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 15-ի թիվ 496-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

91 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող» և «(այսուհետ՝ ավանդատու)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «կամ որպես պարտավորության ապահովման միջոց» բառերը.

2. 3-րդ մասը առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով ավանդատու է համարվում այն ֆիզիկական անձը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը), որը բանկում ունի ավանդ:

Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով համատեղ բանկային ավանդ է համարվում այն ավանդը, որը ներդրվել է երկու կամ ավելի անձանց անունով, և որի նկատմամբ երկու կամ ավելի անձինք ունեն սեփականության իրավունք:».

3. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում (բացառությամբ իր՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերի), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկի մասնաճյուղերում (այսուհետ՝ բանկ) ներդրված ավանդները երաշխավորվում են:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում 2-րդ մասը բոլոր «մեկ ավանդ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ չերաշխավորված ավանդների» բառերով:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):

Բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելը ի վիճակի չլինելու մասին որոշումը (բանկի պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը) Կենտրոնական բանկի խորհուրդը կայացնում է այդ փաստը բացահայտելուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում:»:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Երաշխավորված ավանդների հատուցման կազմակերպումը

1. Կենտրոնական բանկը հատուցման դեպքն առաջանալու մասին նույն օրը տեղեկացնում է Հիմնադրամին:

---

[*] *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2008 թվականի մարտի 18-ին (ՀՀՊՏ N 24 (614), 23.04.08):

2. Հատուցման դեպքին հաջորդող 10 օրվա ընթացքում Կենտրոնական բանկն ապահովում է հատուցման դեպքի օրվա դրությամբ անվճարունակ բանկի՝ ավանդների և ավանդատուների ցուցակների, ինչպես նաև ավանդատուի՝ անվճարունակ բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների, դրանց չափի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների տրամադրումը Հիմնադրամին: Հիմնադրամն իրավունք ունի անվճարունակ բանկից պահանջելու ավանդների և ավանդատուների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ: Անվճարունակ բանկը պարտավոր է եռօրյա ժամկետում Հիմնադրամին տրամադրել պահանջվող լրացուցիչ տեղեկությունները:

Ավանդների և ավանդատուների ցուցակները պետք է ներառեն ավանդատուի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, անվճարունակ բանկում ներդրված բոլոր ավանդների գումարների չափերը, հատուցման դեպքի օրվա դրությամբ հավելագրված տոկոսները, հատուցման ենթակա երաշխավորված ավանդի չափը, ինչպես նաև Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ: Անվճարունակ բանկը պատասխանատու է ավանդների և ավանդատուների ցուցակներում ներառված տեղեկությունների ճշտության համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունների պահպանման և տրամադրման նպատակով բանկերը պարտավոր են ունենալ ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգ: Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման և դրանց տրամադրման պայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

4. Հիմնադրամը հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում և առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին՝ նշելով երաշխավորված ավանդն ստանալու կարգը, ներառյալ՝ անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկը, պայմանները, եղանակները, ժամկետները: Հիմնադրամն այդ հայտարարությունը կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվության այլ միջոցներում կամ օգտագործել ավանդատուներին տեղեկացնելու այլ եղանակ:

5. Հիմնադրամը երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված ավանդների և ավանդատուների ցուցակի, ավանդատուի ներկայացրած՝ իր երաշխավորված ավանդի հատուցումն ստանալու վերաբերյալ գրավոր պահանջի և այդ պահանջը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:

6. Ավանդատուների գրավոր պահանջների ընդունումն իրականացնում է անվճարունակ բանկը, քանի դեռ Հիմնադրամն այլ բան չի հայտարարել: Գրավոր պահանջն ստանալու օրվանից հետո՝ առավելագույնը երեք օրվա ընթացքում, անվճարունակ բանկը պարտավոր է գրավոր պահանջը փոխանցել Հիմնադրամին:

7. Ավանդատուն կարող է գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող մեկ տարվա ժամկետում: Սույն մասում նշված ժամկետում ավանդատուի կողմից գրավոր պահանջը չներկայացնելու դեպքում Հիմնադրամը տվյալ ավանդատուի երաշխավորված ավանդների հատուցում չի իրականացնում:

8. Հիմնադրամը հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսնօրյա ժամկետում մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներում հրապարակում է լրացուցիչ հայտարարություն, որտեղ նշվում են՝

ա) երաշխավորված ավանդների վճարումն իրականացնող բանկի և դրա մասնաճյուղերի անվանումները և հասցեները.

բ) երաշխավորված ավանդի հատուցումն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

9. Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերի: Հիմնադրամի միջնորդության հիման վրա Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երկարաձգել սույն մասում նշված ժամկետը ևս երեք ամսով:

10. Ավանդատուներն անվճարունակ բանկում իրենց ավանդների վերաբերյալ փաստաթղթերին ծանոթանալու և սխալ հայտնաբերելու դեպքում պարզաբանումներ ստանալու համար կարող են դիմել անվճարունակ բանկ: Անվճարունակ բանկը պարտավոր է 5-օրյա ժամկետում գրավոր պատասխանել ավանդատուին:»:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի «ավանդատուների ցուցակը, որի մեջ ներառվում են ավանդատուի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, անվճարունակ բանկում ներդրված

ավանդի գումարի չափը, հատուցման դեպքի օրվա դրությամբ հավելագրված տոկոսները, հատուցման ենթակա երաշխավորված ավանդի չափը և Հիմնադրամի սահմանած այլ տեղեկություններ» բառերը փոխարինել «երաշխավորված ավանդների վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները» բառերով.

2. 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Երաշխավորված ավանդների հատուցումն սկսվում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 8-րդ մասում նշված լրացուցիչ հայտարարությունը հրապարակելու պահից:».

2. 2-րդ մասի «հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «օրենքով հատուցման համար» բառերով.

3. 3-րդ մասի «ավանդատուի դիմումի» բառերը փոխարինել «ավանդատուի գրավոր պահանջի» բառերով:

Հոդված 8. Օրենքի 9-րդ, 10-րդ և 16-րդ հոդվածներում «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» բառերը փոխարինել «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» բառերով:

Հոդված 9. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 (հազար) հայկական դրամից:»:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածում 1-ին և 3-րդ մասերը «գումարի» բառից հետո լրացնել «և հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերի» բառերով:

Հոդված 11. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հիմնադրամին երաշխիքային վճարները կատարում են բոլոր բանկերը, բացառությամբ անվճարունակ բանկերի:»:

Հոդված 12. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով.

2. 1-ին մասի երրորդ նախադասությունը «տվյալ բանկի» բառերից հետո լրացնել «ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող» բառերով.

3. 2-րդ մասի «սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ եկամուտների և միջոցների» բառերը փոխարինել «վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների և նվիրաբերությունների» բառերով:

Հոդված 13. Օրենքի 14-րդ հոդվածում 1-ին մասը «Հիմնադրամի միջոցները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների և նվիրաբերությունների,» բառերով:

Հոդված 14. Օրենքի 19-րդ հոդվածում 4-րդ մասի «ժդ» և 7-րդ մասի «թ» կետերի «վարչակառավարչական ծախսերը» բառերը փոխարինել «տարեկան վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը» բառերով:

Հոդված 15. Օրենքի 20-րդ հոդվածում 3-րդ մասի վերջին նախադասության «վարչակառավարչական ծախսերի» բառերը փոխարինել «Հիմնադրամի ծախսերի» բառերով:

Հոդված 16. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 23. Հիմնադրամի ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը

1. Հիմնադրամի ծախսերն են՝

ա) գործառնական ծախսերը՝

- ավանդների հատուցման հետ կապված ծախսերը,
- ստացված վարկերի, փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսները,
- հիմնադրամի կողմից ակտիվների կառավարման, հատուցման կազմակերպման հետ կապված բանկային կոմիսիոն վճարները,

- ակտիվների վերագնահատումից և հաշվեկշռային արժեքից ցածր գնով իրացումից առաջացած կորուստները,

- Հիմնադրամի աուդիտի և խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարները,

- ավանդների երաշխավորման և հատուցման գործընթացների լուսաբանման հետ կապված ծախսերը.

բ) վարչական ծախսերը՝

- ապարատի պահպանման ծախսերը, այդ թվում՝ աշխատակիցների աշխատավարձ, պարգևատրում, կենսաթոշակային հիմնադրամին մուծումներ, անձնակազմի ուսուցում և վերապատրաստում, գործուղման և ներկայացուցչական ծախսեր, ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսեր, սոցիալական ապահովության այլ ծախսեր,

- ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը,

- լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը,

- տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսերը,

- հիմնական միջոցների մաշվածքի հետ կապված ծախսերը և շենքերի, շինությունների, այլ հիմնական միջոցների ու պաշարների պահպանման, սպասարկման, շահագործման ու ապահովագրման ծախսերը:

2. Կապիտալ ներդրումների ծրագիրն իրենից ներկայացնում է՝

ա) հիմնադրամի հիմնական գործունեության ապահովման նպատակով իրականացվող կապիտալ ներդրումները.

բ) վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումները:

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը Հիմնադրամի ընթացիկ գործունեությունն ապահովելու, նրա կողմից սույն օրենքով սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով հաստատում է Հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը:

4. Հիմնադրամի վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրն իրականացվում են Հիմնադրամի միջոցների հաշվին: Վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը կատարելու համար Հիմնադրամն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում բացելու հաշիվներ:

5. Հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը և կապիտալ ներդրումները չեն կարող գերազանցել երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի՝ նախորդ տարվա բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.03 տոկոսը:

6. Եթե ընթացիկ տարում Հիմնադրամի փաստացի կատարած ծախսերն ավելի քիչ են, քան սույն հոդվածով սահմանված կարգով հաստատված՝ Հիմնադրամի վարչական և գործառնական տարեկան ծախսերը, ապա տարվա արդյունքներով առաջացած տարբերությունը Հիմնադրամը փոխանցում է սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված հատուկ հաշվին:»:

Հոդված 17. Օրենքի 24-րդ հոդվածում 4-րդ մասի «վարչակառավարչական ծախսերի» բառերը փոխարինել «վարչական ծախսերի, գործառնական ծախսերի և կապիտալ ներդրումների» բառերով:

Հոդված 18. Օրենքի 29-րդ հոդվածում 1-ին մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից, բացառությամբ 6-րդ հոդվածի 3-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2009 թվականի ապրիլի 30-ից:»:

Հոդված 19. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 ապրիլի 2008 թ., Երևան, ՀՕ-5-Ն

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թ. նոյեմբերի 6-ի ՀՕ-262 օրենքի 31-րդ հոդվածում 2-րդ կետը 4-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով սահմանված բանկի այլ պարտավորությունները ներառում են նաև Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 ապրիլի 2008 թ., Երևան, ՀՕ-6-Ն

[*] *ՀՀՊՏ 2001 N 40 (172), 15.12.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2008 թվականի մարտի 18-ին (ՀՀՊՏ N 24 (614), 23.04.08):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Ավանգարդ Ինշուրանս Բրոքերս» և «Միտրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ապահովագրական բրոքերային (միջնորդային) գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 110Ա, 111Ա):
- ***Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիա է տրամադրվել*** «Օսմպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշումներ թիվ 127Ա, 128Ա):
- ***Վերածևակերպվել է*** «Լիդեր ապահովագրական բրոքեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 132Ա):
- ***Դադարեցվել է*** «Սեֆ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ստեփանավան» ներկայացուցչությունը (որոշում թիվ 133Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Սթար Դիվայդ» փակ բաժնետիրական ընկերության թիվ 1 և թիվ 2 մասնաճյուղերին (որոշում թիվ 135Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Գրավիչ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 137Ա):
- ***Գրանցվել են*** «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ», «ԲՏԱ Ինվեստբանկ» և «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Գարեգին Նժդեհ», «Բերդ», «Զեյթուն», «Կոմիտաս», ինչպես և «Շուշի», «Վարանդա» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/296Ա, 1/323Ա, 1/336Ա, 1/371Ա):
- ***Գրանցվել են*** «Պատիվ-Հայաստան» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիսային», «Սյունիք», «Լոռի», «Տավուշ» մասնաճյուղերը (որոշում թիվ 1/341Ա):
- ***Գրանցվել է*** «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության թիվ 46 մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/359Ա):
- ՀՀ արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու համար «Պրիվատ ինվեստ» փակ բաժնետիրական և «Արմենբրոկ» բաց բաժնետիրական ընկերություններին ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/299Ա, 1/393Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 103Ա որոշմամբ 2008 թվականի ապրիլի 3-ից ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 6.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 9.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝ 3.5%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգ 2-ի 53 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«53. Պարտադիր պահուստավորման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ներգրավված միջոցները, բացառությամբ Կենտրոնական բանկից ներգրավված վարկերի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միջև թղթակցային հաշիվների, միմյանցից ներգրավված այլ միջոցների, արժութային սվոփի, Կենտրոնական բանկում բացված կուտակման հաշվում հաշվառվող կանոնադրական կապիտալի համալրման նպատակով ներգրավված միջոցների:»:

2) Կանոնակարգ 2-ի 53.1 կետի երկրորդ պարբերության առաջին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. ներգրավվել են ֆիզիկական անձ չհանդիսացող ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող անձանցից/սուբյեկտներից, և»:

3) Կանոնակարգ 2-ի 53.1 կետի երկրորդ պարբերությունը լրացնել նոր 1^1 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«1^1. ներգրավվել են ավելի քան մեկ տարի ժամկետով և ներգրված միջոցի մայր գումարը (կամ մայր գումարի մի մասը) ներգրավման պահից սկսած մեկ տարվա ընթացքում մարման ենթակա չպետք է լինի, և»:

4) Կանոնակարգ 2-ի 53.1 կետի հինգերորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով նախկինում նպատակային ճանաչված ներգրավված միջոցները կամ դրանց մի մասը չեն ուղղվել Կենտրոնական բանկ ներկայացված նպատակային միջոցների ներգրավման և տեղաբաշխման պայմանագրերով նախատեսված ծրագրերի ֆինանսավորմանը կամ օգտագործվել են ծրագրերով նախատեսված ներգրավման պայմաններից զգալի շեղումներով, ապա նշված ժամանակահատվածի համար ներգրավված նպատակային միջոցները համարվում են պահուստավորման ենթակա, իսկ չպահուստավորված գումարի համար բանկերը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ պատասխանատվության են ենթարկվում օրենքով սահմանված կարգով:»:

2. Սույն որոշումը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից արդեն իսկ նպատակային ճանաչված միջոցների վրա:

3. Սույն որոշումը տարածվում է նաև նախկինում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից նպատակային ճանաչված միջոցների այն մասնաբաժինների նկատմամբ, որոնք Կենտրոնական բանկ են ներկայացվելու սույն որոշման ընդունումից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունման պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
12 մարտի 2008 թ., N 56-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. մարտի 11-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.04.08 թ. (ՀՀԳՏ N12 (286), 15.04.08):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հուլիսի 13-ի թիվ 175-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածը և 49-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 21-ը հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 21-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 21) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգ 21-ի 2.4 և 2.5 կետերը.

2) Կանոնակարգ 21-ի 2.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.3. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները դրամարկղային գործառնությունները կանոնակարգող կարգերի մեկական օրինակները ընդունմանը հաջորդող մեկամսյա ժամկետում, այդ թվում՝ փոփոխություններն ու լրացումները, տրամադրում են Կենտրոնական բանկին, իսկ նոր բացված վարկային կազմակերպությունները այդ կարգերի մեկական օրինակները Կենտրոնական բանկին են տրամադրում վարկային կազմակերպության լիցենզիա ստանալուց հետո եռամսյա ժամկետում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
12 մարտի 2008 թ., N 64-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերը, 2-րդ մասի 6-րդ կետը, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերը, 8-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերը, 9-րդ հոդվածի 4-րդ մասը, 10-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 4-րդ կետը, 17-րդ հոդվածը, 18-րդ հոդվածի 3-րդ մասը, 22-րդ հոդվածը, 23-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 119-րդ հոդվածի 2-րդ մասը, 121-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 2-րդ և 3-րդ մասերը, 126-րդ հոդվածի 2-րդ մասը, 127-րդ հոդվածի 1-ին, 4-րդ 8-րդ և 10-րդ մասերը, 207-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 12-ի «Արժեթղթերի գրանցման հայտարարագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 40-ը հաստատելու մասին» թիվ 179-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող բորսաների և օտարերկրյա պետությունների

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. մարտի 11-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.04.08 թ. (ՀՅԳՏ N12 (286), 15.04.08):

արժեթղթերի շուկան վերահսկող պետական մարմինների ցանկերը հաստատելու մասին» թիվ 174-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի ««Թողարկողների, հաշվետու թողարկողների բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատերերի և ղեկավարների կողմից գաղտնի համարվող տեղեկությունների և փաստաթղթերի ներկայացման կարգը» և «Գաղտնիությունը հարգելու մասին» դիմումի ձևը հաստատելու մասին» թիվ 80-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
13 մարտի 2008 թ., N 68-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/04
«ԱԶԴԱԳԻՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՄԱՍ Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող թողարկողների (այդ թվում՝ հաշվետու թողարկողների) կողմից հրապարակային առաջարկի իրականացման, ինչպես նաև կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող ազդագրի (առևտրի ազդագրի) կառուցվածքն ու բովանդակությունը, ազդագրի (առևտրի ազդագրի) պարտադիր հրապարակման պահանջից բացառությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ բաժնի (Արժեթղթերի հրապարակային առաջարկը) դրույթների կիրառման բացառությունները, շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթղթի ձևն ու բովանդակությունը, հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության, ինչպես նաև հրապարակային առաջարկին կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության վերաբերյալ գովազդային նյութի նկատմամբ պահանջները, հաշվետու թողարկողների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանց ներկայացման կարգն ու ժամկետները, հաշվետու թողարկողներին, նրանց արժեթղթերին վերաբերող էական փաստերի և տեղեկությունների հրապարակումը, Կենտրոնական բանկ ներկայացման կարգն ու ժամկետները, թողարկողների (հաշվետու թողարկողների) կողմից գաղտնի համարվող տեղեկությունների (փաստաթղթերի, էական փաստերի) ցանկը, որոնց գաղտնիությունը Կենտրոնական բանկն ամեն դեպքում բավարարում է, դրանց՝ Կենտրոնական բանկ ներկայացման կարգը:

2. Սույն կանոնակարգի 1-ին, 3-րդ, 6-րդ մասերը տարածվում են այն թողարկողների վրա, որոնք նախատեսում են իրականացնել արժեթղթերի հրապարակային առաջարկ. սույն կանոնակարգի 1-ին, 4-րդ, 5-րդ մասերը, ինչպես նաև 6-րդ մասի 30-րդ, 32-րդ գլուխները տարածվում են այն թողարկողների վրա, որոնք նախատեսում են դիմել կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության: Սույն կանոնակարգի 1-ին, 2-րդ մասերը և 6-րդ մասի 30-րդ գլուխը տարածվում են այն թողարկողների վրա, որոնք նախատեսում են իրականացնել հրապարակային առաջարկ ազդագրի հրապարակման պահանջից բացառությունների դեպքում՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն, կամ դիմել կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության ազդագրի հրապարակման պահանջից բացառությունների դեպքում՝ Օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

3. Բաժնետոմսերով կամ պարտատոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթերի թողարկման կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության դեպքում ազդագրերի և հաշվետվությունների կազմման վրա տարածվում են համապատասխանաբար բաժնետոմսերի կամ պարտատոմսերի համար կիրառվող՝ սույն կանոնակարգով սահմանված պահանջները (ըստ կիրառելիության):

4. Սույն կանոնակարգով սահմանված ազդագրին վերաբերող դրույթները տարածվում են նաև ծրագրային ազդագրի վրա:

5. Սույն կանոնակարգում վերջին երեք տարվա համար պահանջվող տեղեկություններ ներկայացնելու պարտավորությունը չի տարածվում այն թողարկողների վրա, որոնց գործունեության ժամկետը պակաս է երեք տարուց (տեղեկությունները ներկայացնելու օրվա դրությամբ): Տվյալ թողարկողները նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացված գործունեության ողջ ժամկետի համար:

6. Կենտրոնական բանկն իրավունք ունի թողարկողից (հաշվետու թողարկողից) կամ նրա պաշտոնատար անձանցից պահանջել թողարկողի (հաշվետու թողարկողի) վերաբերյալ բացատրագիր, տեղեկանք կամ այլ փաստաթուղթ, որն անհրաժեշտ է Կենտրոնական բանկի կողմից վերահսկողություն իրականացնելու նպատակով: Թողարկողը (հաշվետու թողարկողը) կամ նրա համապատասխան պաշտոնատար անձը պարտավոր է գրավոր ձևով Կենտրոնական բանկ ներկայացնել պահանջվող բացատրագիրը, տեղեկանքը և (կամ) փաստաթուղթը՝ նշված պահանջը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի կողմից ներկայացման ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) ***«Օրենք»***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

2) ***«կառավարման մարմինը»*** օրենքով, այլ իրավական ակտերով, թողարկողի կանոնադրությամբ սահմանված և (կամ) կանոնադրությամբ նախատեսված կարգով ընտրված կամ նշանակված մարմինն է (մասնակիցների ընդհանուր ժողովը, տնօրենների խորհուրդը, գործադիր մարմինը, վերստուգիչ մարմինը և այլն).

3) ***«կառավարմանը մասնակցող անձը»***՝ թողարկողի կառավարման մարմիններում ընդգրկված ընտրովի կամ նշանակովի անձինք:

8. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԱԶԴԱԳՐԻ (ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ) ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ: ԱԶԴԱԳՐԻ (ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Թողարկողը կամ տեղաբաշխողը (թողարկողը կամ արժեթղթերի՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն հայցող անձը) ազդագիրը (առևտրի ազդագիրը) գրանցելու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝

1) ազդագրի (առևտրի ազդագրի) գրանցման հայտը ներկայացնում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի.

2) ազդագիրը (առևտրի ազդագիրը) ներկայացնում է համաձայն սույն կանոնակարգի 3-րդ կամ 4-րդ մասերի.

3) թողարկողի պետական գրանցման վկայականի պատճենը.

4) բաժնետոմսերի (պարտատոմսերի) թողարկման, տեղաբաշխման (կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալու) մասին որոշման արձանագրության պատճենը.

5) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

10. Սույն կանոնակարգի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված ազդագրերը (առևտրի ազդագրերը) Կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային կրիչով (1 օրինակ) և էլեկտրոնային տարբերակով: Էլեկտրոնային տարբերակով ազդագրերը (առևտրի

ազդագրերը) ներկայացվում են էլեկտրոնային փոստով (առկայության դեպքում՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով), մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով: Ազդագրերը (առևտրի ազդագրերը) էլեկտրոնային փոստով (առկայության դեպքում՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով) կամ մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով ներկայացնելիս, թողարկողին Կենտրոնական բանկի կողմից կոդ շնորհված լինելու դեպքում, ֆայլերը կոդավորվում են հետևյալ ձևով՝ XXXXX-XXX.xxx, որտեղ XXXXX-ը Կենտրոնական բանկի կողմից թողարկողին շնորհված կոդն է, XXX–ը ազդագիրը (առևտրի ազդագիրը) նույնականացնող տարբերանշանն է, xxx-ը՝ ֆայլի տեսակը: Ազդագրում (առևտրի ազդագրում) ներառվող ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են պաշտպանված ֆայլերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական հաշվետվությունները կարող են ներկայացվել նաև այլ ձևերով՝ Կենտրոնական բանկի հետ նախնական համաձայնեցմամբ:

11. Սույն կանոնակարգի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված ազդագրերի (առևտրի ազդագրերի) թղթային կրիչով օրինակը կարվում և վավերացվում է թողարկողի կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի կնիքով, լրացվում տպագրական եղանակով և համարակալվում է:

Ազդագրի (առևտրի ազդագրի) լրացումները ներկայացվում են ազդագրի (առևտրի ազդագրի) ներկայացման պահանջներին համապատասխան և պարունակում են ազդագրում (առևտրի ազդագրում) ներառման ենթակա այն տեղեկություններն ու փաստաթղթերը, որոնք ազդագրով (առևտրի ազդագրով) նախկինում պատշաճ չեն ներկայացվել կամ փոփոխվել են կամ, որոնք նոր են ի հայտ եկել: Ազդագրի (առևտրի ազդագրի) լրացումը հանդիսանում է դրա բաղկացուցիչ մասը: Ազդագրի (առևտրի ազդագրի) լրացումնե-րի դեպքում ազդագրի (առևտրի ազդագրի) ամփոփաթերթը (և դրա թարգմանությունը, եթե այդպիսին առկա է) լրացվում կամ հրապարակվում է նորովի՝ հաշվի առնելով ազդագրի (առևտրի ազդագրի) լրացման մեջ ներկայացված տեղեկատվությունը, և լրացման հետ ներկայացվում է Կենտրոնական բանկ:

12. Ազդագրում (առևտրի ազդագրում) ներառվող այն տեղեկատվությունը, որը կարող է թողարկողի (հաշվետու թողարկողի) կողմից համարվել գաղտնի, Կենտրոնական բանկ է ներկայացվում սույն կանոնակարգի 30-րդ գլխի համաձայն:

13. Սույն գլխում նշվածից բացի այլ կերպ ներկայացված ազդագիրը (առևտրի ազդագիրը, լրացումը) համարվում է չներկայացված:

ՄԱՍ II. ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ԲԱԺՆԻ (ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ) ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԺԻՆ II. ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ԲԱԺՆԻ (ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ) ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 4. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱՆԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

14. Օրենքի երկրորդ բաժնի դրույթները չեն տարածվում՝

1) սույն կանոնակարգի 16-րդ կետում սահմանված օտարերկրյա պետությունների, նրանց կենտրոնական բանկերի կամ տեղական կառավարման մարմինների կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթերի վրա.

2) Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի թողարկած ոչ բաժնային արժեթղթերի վրա, նաև այն միջազգային կազմակերպությունների թողարկած ոչ բաժնային արժեթղթերի վրա, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը.

3) բանկերի կողմից շարունակական ձևով թողարկվող ոչ բաժնային արժեթղթերի վրա, եթե առաջարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը 12 ամսվա ընթացքում չի գերազանցում 200 միլիոն դրամը (2 500 000 եվրո) և դրանք՝

ա. փոխարկելի կամ փոխանակելի չեն, և

բ. չեն հավաստում որևէ այլ տեսակի արժեթղթերի ձեռքբերման կամ բաժանորդագրման իրավունքներ, ինչպես նաև կապված չեն ածանցյալ գործիքների հետ:

ԲԱԺԻՆ III. ԱԶԴԱԳՐԻ (ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ) ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 5. ԱԶԴԱԳՐԻ (ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ) ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԱՆԱՋԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

15. Ազդագրի (առևտրի ազդագրի) հրապարակման պահանջը չի տարածվում Օրենքի 6-րդ և 121-րդ հոդվածներով սահմանված դեպքերի վրա: Ընդ որում՝ ազդագրի (առևտրի ազդագրի) հրապարակման պահանջը չի տարածվում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև 121-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հետևյալ դեպքերի վրա՝

1) երբ առաջարկն արվում է այն ներդրողներին, որոնցից յուրաքանչյուրի կողմից ձեռք բերվող արժեթղթերի ընդհանուր արժեքը, վաճառքի գնով առաջարկի պայմանների համաձայն, գերազանցում է 20 միլիոն դրամը (50000 եվրո)՝ յուրաքանչյուր առանձին առաջարկի դեպքում,

2) երբ առաջարկվող արժեթղթերի միավոր անվանական արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամը (50000 եվրո),

3) երբ առաջարկվող արժեթղթերի ընդհանուր արժեքը թողարկման կամ վաճառքի գնով 12 ամսվա ընթացքում չի գերազանցում 40 միլիոն դրամը (100000 եվրո),

4) երբ առաջարկվող արժեթղթերի (որոնք թողարկվել են շուկայում արդեն իսկ թույլատրված բաժնետոմսերի թողարկողի կողմից) ընդհանուր անվանական արժեքը 12 ամսվա ընթացքում չի գերազանցում 40 միլիոն դրամը (100000 եվրո),

5) սույն կանոնակարգի 6-րդ գլխով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 6. ԱԶԴԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Ազդագրի հրապարակման պահանջը չի տարածվում հետևյալ օտարերկրյա պետությունների ցանկում ընդգրկված որևէ պետությունում հրապարակային առաջարկին (վաճառքին) և (կամ) առևտրին թույլատրված արժեթղթերի վրա՝

1) Ամերիկայի Միացյալ Նահանգներ
2) Ավստրալիա
3) Ավստրիա
4) Բելգիա
5) Բուլղարիա
6) Գերմանիա
7) Դանիա
8) Էստոնիա
9) Թուրքիա
10) Իսլանդիա
11) Իսպանիա
12) Իտալիա
13) Իռլանդիա
14) Լատվիա
15) Լեհաստան
16) Լիտվա
17) Լյուքսեմբուրգ
18) Կիպրոս
19) Կորեա
20) Հունաստան
21) Հունգարիա
22) Ճապոնիա
23) Մալթա
24) Միացյալ Թագավորություն
25) Մեքսիկա
26) Նիդեռլանդներ
27) Նոր Զելանդիա
28) Նորվեգիա
29) Շվեդիա
30) Շվեյցարիա
31) Չեխիա

32) Պորտուգալիա
33) Ռուսաստան
34) Ռումինիա
35) Սլովակիա
36) Սլովենիա
37) Կանադա
38) Ֆինլանդիա
39) Ֆրանսիա

17. Ազդագրի հրապարակման պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող հետևյալ կարգավորվող շուկաների ցանկում ընդգրկված որևէ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերի հրապարակային առաջարկների վրա՝

1) Աթենքի ֆոնդային բորսա (ASE)
2) Ամերիկյան ֆոնդային բորսա (AMEX)
3) Ավստրալիայի ֆոնդային բորսա (ASX)
4) Ամստերդամի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
5) Բեռլինի ֆոնդային բորսա (AG)
6) Բեռնի բորսա (BX)
7) Բրատիսլավայի ֆոնդային բորսա
8) Բրյուսելի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
9) Բուլղարիայի ֆոնդային բորսա (BSE)
10) Բուխարեստի ֆոնդային բորսա
11) Իսլանդական ֆոնդային բորսա (ICEX, OMX)
12) Իռլանդական ֆոնդային բորսա (ISE)
13) Լիսաբոնի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
14) Լյուբլյանայի ֆոնդային բորսա (LJSE)
15) Լյուքսեմբուրգի ֆոնդային բորսա
16) Լոնդոնի ֆոնդային բորսա (LSE)
17) Կիպրոսի ֆոնդային բորսա (CSE)
18) Կոպենհագենի ֆոնդային բորսա (CSE, OMX)
19) Կորեայի ֆոնդային բորսա
20) Հելսինկիի ֆոնդային բորսա (OMX Helsinki)
21) Մադրիդի ֆոնդային բորսա
22) Մալթայի ֆոնդային բորսա
23) Մեքսիկայի արժեթղթերի բորսա (BMV)
24) Միլանի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
25) Մոնրեալի ֆոնդային բորսա
26) Մոսկվայի միջբանկային արժութային բորսա (MICEX, A գնանշման ցուցակի 1-ին մակարդակ՝ A1)
27) Նագոյայի ֆոնդային բորսա (NSE)
28) Նազդաք (NASDAQ)
29) Նյու Յորքի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
30) Նոր Զելանդիայի ֆոնդային բորսա
31) Պրահայի ֆոնդային բորսա (PSE)
32) «Ջազդակ» ֆոնդային բորսա (JASDAQ, Tokyo)
33) Ռիգայի ֆոնդային բորսա (OMX)
34) Ռուսական առևտրային համակարգ (RTS, A գնանշման ցուցակի 1-ին մակարդակ՝ A1)
35) Սանկտ Պետերբուրգի ֆոնդային բորսա
36) Ստամբուլի ֆոնդային բորսա (IMKB)
37) Ստոկհոլմի ֆոնդային բորսա (OMX)
38) Վարշավայի ֆոնդային բորսա (WSE)
39) Վիեննայի ֆոնդային բորսա
40) Վիլնյուսի ֆոնդային բորսա (VSE, OMX)
41) Տալինի ֆոնդային բորսա (OMX)
42) Տոկիոյի ֆոնդային բորսա (TSE)
43) Տորոնտոյի ֆոնդային բորսա (TSX)
44) Ցյուրիխի ֆոնդային բորսա (SWX)
45) Փարիզի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)

46) Օսակայի ֆոնդային բորսա (OSE)
47) Օսլոյի ֆոնդային բորսա (OMX)
48) Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսա (FWB)

ԳԼՈՒԽ 7. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Ցանկացած թողարկող Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ազդագրի հրապարակման պահանջից բացառության դեպքում, որևէ հրապարակային առաջարկի իրականացման դեպքում արժեթղթերի տեղաբաշխումն ավարտելուց հետո 15 օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի:

ԲԱԺԻՆ IV. ՇԱՀԱԳՐԳԻՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ 8. ՇԱՀԱԳՐԳԻՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՎՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

19. Սույն գլխով կարգավորվում է ազդագրի (առևտրի ազդագրի) հրապարակման պահանջից Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով և 121-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված բացառությունների դեպքում շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթղթի ձևն ու բովանդակությունը:

20. Բաժնետոմսերի և (կամ) տվյալ շուկայում առևտրին արդեն իսկ թույլատրված բաժնետոմսերի դիմաց որպես շահաբաժին վճարվող նույն դասի բաժնետոմսերի հրապարակային առաջարկների, ինչպես նաև այն բաժնետոմսերի հրապարակային առաջարկների, որոնք առաջարկվում են թողարկողի կամ թողարկողի խմբին պատկանող այլ անձի կողմից տվյալ թողարկողի գործող կամ նախկին ղեկավարներին կամ աշխատակիցներին, եթե այդ թողարկողի որևէ արժեթուղթը թույլատրված է Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկայում առևտրին և (կամ) նույն դասի արժեթղթերն արդեն իսկ թույլատրված են տվյալ շուկայում առևտրին, իրականացման դեպքում շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթուղթը ներառում է հետևյալ տեղեկությունները՝

1) բաժնետոմսերի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),

2) թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը, տեղաբաշխվող (վաճառվող) բաժնետոմսերի քանակը,

3) մեկ բաժնետոմսի անվանական արժեքը, արժույթը,

4) փոխարկելի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նշվում են այն արժեթղթերը և դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, որոնց պետք է փոխարկվեն թողարկվող բաժնետոմսերը, փոխարկման ընթացակարգը,

5) բաժնետոմսերի տեղաբաշխման կամ առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը կամ դրանց որոշման կարգը, ներառյալ՝ այդ ժամկետների հնարավոր փոփոխությունները,

6) այն հանգամանքները, որոնց դեպքում բաժնետոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը չեղյալ համարելու դեպքում ներդրողներին գումարները վերադարձնելու կարգը,

7) բաժնետոմսերի դիմաց վճարումների ժամկետը, չափը, պարբերականությունը, այն հաշիվները և բանկի անվանումները, ուր պետք է փոխանցվեն բաժնետոմսերի դիմաց վճարվող միջոցները,

8) բաժնետոմսերի տեղաբաշխման գինը (առկայության դեպքում), եթե առաջարկվող արժեթղթերի վերջնական գինը հնարավոր չէ ներառել ազդագրում, ապա ազդագիրը ներառում է արժեթղթերի առաջարկի վերջնական գնի որոշման մեթոդը կամ պայմանները,

9) եթե թողարկողի բաժնետերն ունի բաժնետոմսի գնման նախապատվության իրավունք, ապա այն գինը կամ դրա որոշման կարգը, որով բաժնետոմսերը տեղաբաշխվում են այդ բաժնետերերի միջև, այդ իրավունքի սահմանափակման կամ չկիրառման դեպքում պատճառների և հետևանքների նկարագրությունը,

10) շահաբաժինների վերաբերյալ տեղեկություններ, մասնավորապես՝ շահաբաժինների չափը կամ դրա որոշման կարգը, վճարման պայմանները (վճարման պարբերականությունը, այն վայրերն ու կազմակերպությունների անվանումները, որտեղ բաժ-

նետոմսերի սեփականատերերը կարող են ստանալ իրենց շահաբաժինները, արտոնյալ բաժնետոմսերի ամրագրված շահաբաժինների չափը), շահաբաժնի ստացման իրավունքի սահմանափակումները, ինչպես նաև ոչ ռեզիդենտներին տրվող շահաբաժինների վճարման ընթացակարգը (առկայության դեպքում),

11) տվյալ դասի և ձևի բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, որոնք սահմանվում են թողարկողի կանոնադրությամբ և (կամ) թողարկման մասին որոշմամբ, մասնավորապես՝ բաժնետոմսերով հավաստվող ձայնի իրավունքի, նույն դասի բաժնետոմսերի բաժանորդագրման դեպքում արտոնությունների վերաբերյալ, բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի, թողարկողի շահույթի մեջ մասնակցության իրավունքի, լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքի վերաբերյալ տեղեկություններ,

12) տեղաբաշխված (տեղաբաշխվող) բաժնետոմսերից ստացվող բաժնետոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը,

13) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ (կազմակերպական-իրավական ձևը, ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը և կապի այլ միջոցները),

14) թողարկման նպատակը:

21. Պարտատոմսերի հրապարակային առաջարկների, որոնք առաջարկվում են թողարկողի կամ թողարկողի խմբին պատկանող այլ անձի կողմից տվյալ թողարկողի գործող կամ նախկին ղեկավարներին կամ աշխատակիցներին, եթե այդ թողարկողի որևէ արժեթուղթը թույլատրված է Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկայում առևտրին, և (կամ) նույն դասի արժեթղթերն արդեն իսկ թույլատրված են տվյալ շուկայում առևտրին, հրապարակային առաջարկների իրականացման դեպքում շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթուղթը ներառում է հետևյալ տեղեկությունները՝

1) պարտատոմսերի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),

2) թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը, եթե թողարկման ծավալը հնարավոր չէ ներառել ազդագրում, ապա ներառվում է պարտատոմսերի առաջարկի վերջնական ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները, տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը,

3) մեկ պարտատոմսի անվանական արժեքը, արժույթը,

4) փոխարկելի պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում նշվում են այն արժեթղթերը և դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, որոնց պետք է փոխարկվեն թողարկվող պարտատոմսերը, փոխարկման ընթացակարգը,

5) պարտատոմսերի տեղաբաշխման կամ առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը կամ դրանց որոշման կարգը, ներառյալ՝ այդ ժամկետների հնարավոր փոփոխությունները,

6) այն հանգամանքները, որոնց դեպքում պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը չեղյալ համարելու դեպքում ներդրողներին գումարների վերադարձման կարգը,

7) պարտատոմսերի դիմաց վճարումների ժամկետը, չափը, պարբերականությունը, այն հաշիվները և բանկի անվանումները, ուր պետք է փոխանցվեն պարտատոմսերի դիմաց վճարվող միջոցները,

8) պարտատոմսերի մարման, ներառյալ, եթե նախատեսվում է վաղաժամկետ մարում, վաղաժամկետ մարման պայմանները,

9) ապահովված պարտատոմսերի դեպքում՝ ապահովման միջոցի վերաբերյալ տեղեկություններ,

10) պարտատոմսերի տեղաբաշխման գինը (առկայության դեպքում). եթե առաջարկվող արժեթղթերի վերջնական գինը հնարավոր չէ ներառել ազդագրում, ապա ազդագիրը ներառում է արժեթղթերի առաջարկի վերջնական գնի որոշման մեթոդը կամ պայմանները,

11) եկամուտների չափը կամ դրա որոշման կարգը, վճարման պայմանները (վճարման պարբերականությունը, այն վայրերն ու կազմակերպությունների անվանումները, որտեղ պարտատոմսերի սեփականատերերը կարող են ստանալ իրենց եկամուտները), ինչպես նաև ոչ ռեզիդենտներին տրվող եկամուտների վճարման ընթացակարգը (առայության դեպքում),

12) տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող սեփականատերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը,

13) պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները (ներառյալ՝ իրավունքների իրականացման կարգը),

14) այն կազմակերպությունների կազմակերպական-իրավական ձևը, ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը, դրա փոստային հասցեն և կապի այլ միջոցները, որոնք իրականացնում են պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումը,

15) թողարկման նպատակը:

ԳԼՈՒԽ 9. ՇԱՀԱԳՐԳԻՌ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ (ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ) ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

22. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով կամ 121-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթղթի հիման վրա արժեթղթերի հրապարակային առաջարկի իրականացման մտադրություն ունեցող թողարկողը կամ տեղաբաշխողը կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալու մտադրություն ունեցող թողարկողը (արժեթղթերի՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն հայցող անձը) նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

1) դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի,

2) շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթուղթը, որը ներառում է ազդագրով պահանջվող տեղեկատվությանը համարժեք տեղեկատվություն,

3) թողարկողի կանոնադրության պատճենը,

4) բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման (կարգավորվող շուկայի առևտրին թույլտվություն ստանալու) մասին որոշման արձանագրության պատճենը,

5) նախորդող վերջին 3 տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության պատճենները,

6) այլ փաստաթղթեր (թողարկողի, շուկայում առևտրին թույլտվություն հայցող անձի հայեցողությամբ):

ՄԱՍ III. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

ԲԱԺԻՆ V. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐ

ԳԼՈՒԽ 10. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

23. Բաժնետոմսերի ազդագիրը կազմված է հետևյալ մասերից.

1) տիտղոսաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

2) ամփոփաթերթ,

3) թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ,

4) թողարկողի վերաբերյալ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 11. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

24. Բաժնետոմսերի ամփոփաթերթում հակիրճ ներկայացվում է ազդագրում ներառվող ամենաէական տեղեկատվությունը՝ առնվազն ներառելով հետևյալ տեղեկությունների հակիրճ նկարագրությունը.

1) թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ,

2) թողարկողի վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝

ա. ընդհանուր տեղեկություններ,

բ. թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

գ. թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները,

դ. թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք,

ե. թողարկողի հետ փոխկապակցված անձինք, նշանակալից մասնակիցները,

զ. թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ:

25. Ամփոփաթերթը պետք է համապատասխանի Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին և բաղկացած լինի մոտ մինչև 2500 բառից:

26. Ազդագրի «Թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ» բաժնում ներկայացվում են թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1) ***Ընդհանուր տեղեկություններ***, մասնավորապես՝

ա. բաժնետոմսերի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),

բ. թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը, տեղաբաշխվող (վաճառվող) բաժնետոմսերի քանակը,

գ. մեկ բաժնետոմսի անվանական արժեքը, արժույթը,

դ. փոխարկելի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նշվում են այն արժեթղթերը և դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, որոնց պետք է փոխարկվեն թողարկվող բաժնետոմսերը, փոխարկման ընթացակարգը,

ե. բաժնետոմսերի տեղաբաշխման կամ առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը կամ դրանց որոշման կարգը, ներառյալ՝ այդ ժամկետների հնարավոր փոփոխությունները,

զ. այն հանգամանքները, որոնց դեպքում բաժնետոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը չեղյալ համարելու դեպքում ներդրողներին գումարները վերադարձնելու կարգը,

է. բաժնետոմսերի դիմաց վճարումների ժամկետը, չափը, պարբերականությունը, այն հաշիվները և բանկի անվանումները, որտեղ պետք է փոխանցվեն բաժնետոմսերի դիմաց վճարվող միջոցները,

ը. բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշման ընդունման ամսաթիվը, բաժնետոմսերի թողարկման մասին որոշումն ընդունող մարմնի անվանումը:

2) ***Բաժնետոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝

ա. բաժնետոմսերի տեղաբաշխման գինը (առկայության դեպքում), եթե առաջարկվող բաժնետոմսերի վերջնական գինը հնարավոր չէ ներառել ազդագրում, ապա ազդագիրը ներառում է արժեթղթերի առաջարկի վերջնական գնի որոշման մեթոդը կամ պայմանները,

բ. եթե թողարկողի բաժնետերն ունի բաժնետոմսի գնման նախապատվության իրավունք, ապա այն գինը կամ դրա որոշման կարգը, որով բաժնետոմսերը տեղաբաշխվում են այդ բաժնետերերի միջև, այդ իրավունքի սահմանափակման կամ չկիրառման դեպքում պատճառների և հետևանքների նկարագրությունը:

3) ***Շահաբաժինների վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝ շահաբաժինների չափը կամ դրա որոշման կարգը, վճարման պայմանները (վճարման պարբերականությունը, այն վայրերն ու կազմակերպությունների անվանումները, որտեղ բաժնետոմսերի սեփականատերերը կարող են ստանալ իրենց շահաբաժինները, արտոնյալ բաժնետոմսերի ամրագրված շահաբաժինների չափը), շահաբաժնի ստացման իրավունքի սահմանափակումները, ինչպես նաև ոչ ռեզիդենտներին տրվող շահաբաժինների վճարման ընթացակարգը (առկայության դեպքում):

4) ***Տվյալ դասի և ձևի բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները***, որոնք սահմանվում են թողարկողի կանոնադրությամբ և (կամ) թողարկման մասին որոշմամբ, մասնավորապես՝ բաժնետոմսերով հավաստվող ձայնի իրավունքի, նույն դասի բաժնետոմսերի բաժանորդագրման դեպքում արտոնությունների վերաբերյալ, բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի, թողարկողի շահույթի մեջ մասնակցության իրավունքի, լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքի վերաբերյալ տեղեկություններ:

5) ***Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝

ա. բաժնետոմսերի թողարկման այն սահմանափակումները, որոնք սահմանված են թողարկողի կանոնադրությամբ կամ բաժնետոմսերի թողարկման մասին որոշմամբ (առկայության դեպքում), ինչպես նաև բաժնետոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանված սահմանափակումները,

բ. բաժանորդագրությունների նվազագույն և առավելագույն մեծությունը (արտահայտված բաժնե-տոմսերի քանակով և ընդհանուր ծավալով):

6) ***Տեղեկություններ բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ***, մասնավորապես՝ պայմանագրի (լիազորագրի) հիման վրա թողարկողի բաժնետոմ-սերը տեղաբաշխողի (անդերռայթեր) կազմակերպական-իրավական ձևերը, ֆիրմային անվանումները, գտնվելու վայրը, տեղաբաշխման եղանակները, թողարկողի ու այդ անձանց միջև կնքված պայմանագրի

էական պայմաններն ու նրանց պարգևատրման պայմանները, ինչպես նաև նրանց կողմից առաջարկվող բաժնետոմսերի քանակը և գինը:

7) ***Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝

ա. բաժանորդագրման իրավունքի իրականացման կարգը,

բ. այն ժամկետը (ներառյալ՝ կարգը), որի ընթացքում ներդրողները կարող են հետ կանչել իրենց բաժանորդագրությունները, բաժանորդագրման իրավունքի չիրականացման հետևանքները,

գ. այն հնարավոր դեպքերի նկարագրությունը, որոնց առկայության դեպքում բաժանորդագրությունների քանակը կարող է նվազեցվել թողարկողի կողմից, գումարի վերադարձման կարգը:

8) ***Տեղաբաշխված (տեղաբաշխվող) բաժնետոմսերից ստացվող բաժնետոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը:***

9) ***Ֆոնդային բորսայում առևտրին թույլտվության վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝

ա. նշել, թե արդյոք թողարկվող բաժնետոմսերը հետագայում նախատեսվում են ֆոնդային բորսայում ցուցակման, եթե այդ դասի բաժնետոմսերը արդեն ցուցակված չեն: Սույն դրույթի ներառումը թողարկողի համար թողարկվող արժեթղթերը հետագայում ֆոնդային բորսայում ցուցակելու պարտավորություն չի առաջացնում,

բ. այն բոլոր բորսաների անվանումները, դրանց գտնվելու վայրերը, կապի միջոցները, որտեղ արդեն շրջանառվում են թողարկողի նույն դասի բաժնետոմսերը,

գ) այն անձանց անվանումները (առկայության դեպքում), որոնք թողարկողի հետ կնքել են պայմանագիր, համաձայն որի՝ նշված անձինք հանդիսանալու են շուկա ստեղծող (մարքեթ մեյքեր) երկրորդային շուկայում:

10) ***Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ*** (կազմակերպական-իրավական ձևը, ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը և կապի այլ միջոցները):

11) ***Թողարկման նպատակը:***

12) ***Նոր թողարկման իրականացման կանխատեսվող ժամանակահատվածը*** (եթե նախատեսվում է թողարկողի կողմից նաև այլ նոր թողարկում):

ԳԼՈՒԽ 13. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

27. «Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ» մասը ներառում է հետևյալ բաժինները.

1) ընդհանուր տեղեկություններ,

2) թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

3) թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ,

4) թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ,

5) թողակողի հետ փոխկապակցված անձանց, նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ,

6) թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ,

7) կից փաստաթղթեր:

28. ***«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) **Թողարկողի պատմությունը և զարգացումը**, մասնավորապես՝

ա. ֆիրմային անվանումը, առկայության դեպքում՝ դրա հապավումը (եթե թողարկողի կանոնադրությամբ տրված են թողարկողի ֆիրմային անվանման տարբերակներ այլ լեզուներով, նշվում են նաև դրանք),

բ. թողարկողի ստեղծման կազմակերպական-իրավական ձևը, եթե թողարկողի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը կամ թողարկողը վերակազմակերպվել է, ապա նշվում են նաև նրա բոլոր անվանումները, կազմակերպական-իրավական ձևերը,

գ. թողարկողի առաջին գրանցման ամսաթիվը, գրանցման համարը և փաստացի գործունեություն իրականացնելու ժամկետը, գրանցման վայրը և գրանցող երկրի անվանումը:

2) ***Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի և միությունների անվանումները և գտնվելու վայրերը, որոնց անդամակցում է թողարկողը:

3) ***Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները*** (անվանումները, գտնվելու վայրերը):

4) ***Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք***, մասնավորապես՝

ա. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացնող յուրաքանչյուր անձի անվանումը, գործունեության վայրը, կապի միջոցները (ներառյալ՝ որևէ մասնագիտացված անձի անդամակցությունը),

բ. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից այլ հիմքերով ազատման պատճառները:

5) ***Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները,*** մասնավորապես՝

ա. թողարկողի փորձագետ կամ խորհրդատու հանդիսացող անձինք, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է ազդագրում, դրանց բնակության վայրը, մասնագիտությունը, առկայության դեպքում՝ թողարկողի կապիտալում մասնակցության չափը,

բ. եթե ազդագրում ներառված են այլ անձանցից ձեռք բերված տեղեկություններ, ապա նշվում է տեղեկատվության աղբյուրը:

6) ***Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը, կառուցվածքը*** (սովորական և արտոնյալ բաժնետոմսերի քանակը), մասնակիցների կողմից իրենց բաժնային արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունների կատարման աստիճանը (տոկոսային արտահայտությամբ), կանոնադրական կապիտալի մեծացման մտադրությունների վերաբերյալ տեղեկություններ, ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա համար կանոնադրական կապիտալի փոփոխությունները, ինչպես նաև չվճարված բաժնետոմսերի քանակը տարվա սկզբի և վերջի դրությամբ:

7) ***Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝ նշվում են պայմանագրի (օպցիոնի) կողմերի (առանձին նշելով աշխատակիցների) անվանումները, պայմանագրի կնքման ամսաթիվը, մարման ամսաթիվը, առարկան (արժեթղթերի դասը), պայմանագրի գինը, օպցիոնի իրականացման կարգը:

8) ***Բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների հրավիրման կարգը (կանոնադրությամբ նշված կարգից այլ կարգերի առկայության դեպքում):***

29. «ԹՈՂԱՐԿՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Ռիսկային գործոններ***, որտեղ նկարագրվում են այն հիմնական գործոնները, որոնցով պայմանավորված են այս առաջարկի ընդունման հնարավոր բացասական հետևանքները և դրանց առաջացմանը նպաստող հնարավոր գործոնները (այդ թվում՝ թողարկողի իրականացրած գործունեության, վերջին շրջանում (թողարկողի հայեցողությամբ ընտրված ժամանակաշրջան) կատարված շահութաբեր գործառնությունների, ֆինանսական դրության, իրականացվող կամ իրականացվելիք գործունեության, բաժնային արժեթղթերի և դրանց փոխարկվող արժեթղթերի շուկային վերաբերող և այլ ռիսկային գործոնները), ինչպես նաև այդ ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը:

2) ***Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը***, մասնավորապես՝

ա. հիմնական գործունեության նկարագիրը՝ հակիրճ արտացոլելով նաև թողարկողի համար առավել կարևոր գործունեության ոլորտների արդի վիճակները և դրանց զարգացման ընդհանուր միտումները,

բ. վաճառված ապրանքների կամ մատուցվող ծառայությունների հիմնական բնութագրիչների նկարագրությունը (գին, ծավալ և այլն) ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում, նոր ապրանքների կամ ծառայությունների նկարագրությունը (ապրանքների և ծառայությունների մեծ տեսականու առկայության պարագայում ապրանքներն ու ծառայությունները կարելի է ներկայացնել խմբավորված), դրանց հետ կապված զարգացման հեռանկարները: Եթե թողարկողը զբաղվում է բնական ռեսուրսների արդյունահանմամբ կամ վերամշակմամբ, ապա անհրաժեշտ է ներկայացնել բնական ռեսուրսի տեսակը, պաշարների կանխատեսվող չափը, գտնվելու վայրը, ինչպես նաև դրա օգտագործման իրավունքի ժամկետները,

գ. թողարկողի արտադրանքների սպառման (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) ներքին և արտաքին հիմնական շուկաների նկարագրությունը (մասնավորապես՝ տվյալ շուկայում թողարկողի բաժինը, ստացվող եկամտի չափը, ընդլայնման միտումները), թողարկողի արտա-դրանքի իրացման հիմնական մեթոդները (մասնավորապես՝ երկարաժամկետ, կարճաժամկետ պայմանագրերի, պատահական պայմանագրերի, սեփական առաքման ցանցի, միջնորդ կազմակերպությունների, ապրանքային ֆոնդային բորսայի և այլ միջոցներով), խոշոր սպառողների անվանումները, մասնաբաժինը (տոկոսային արտահայտությամբ) թողարկողի հասույթում,

դ. թողարկողի հիմնական մրցակիցները, նրանց բաժինը շուկայում՝ ըստ գործունեության առանձին տեսակների (հնարավորության դեպքում), ապագայում նոր մրցակիցներ ի հայտ գալու վերաբերյալ տեղեկություններ (հայտնի լինելու դեպքում),

ե. թողարկողի այն մատակարարները, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների (դրամական արտահայտությամբ) ընդհանուր մատակարարման 10 տոկոսից ավելին, նրանց բաժինը մատակարարման ընդհանուր ծավալում, ընդհանուր մատակարարման մեջ ներմուծման տոկոսային մասը,

զ. թողարկողի կողմից կնքված պայմանագրերը, մասնավորապես՝ գործողության մեջ գտնվող, ինչպես նաև ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կնքած այն պայմանագրերի պայմանները (անձի անվանումը, ում հետ կնքվել է պայմանագիրը, պայմանագրի առարկան, գինը, գործողության ժամկետը), որոնց գինը գերազանցում է թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 5 տոկոսը, ժամկետանց պայմանագրերի դեպքում նշել նաև ժամկետանց օրերի քանակը և ժամկետանց լինելու պատճառները,

է. թողարկողի գործունեության իրականացման հատուկ թույլտվությունների (լիցենզիաների), արտոնագրերի (պատենտների), ապրանքանիշերի վերաբերյալ տեղեկություններ՝ նշելով գործունեության համապատասխան տեսակները, տրման ամսաթվերը, գործողությունների ժամկետները,

ը. հետազոտությունները և զարգացման ուղղությունները, մասնավորապես՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կողմից հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված քաղաքականությունը (էական լինելու դեպքում), ներառյալ՝ դրանց ուղղված ծախսերի մեծությունը:

3) ***Թողարկողի գործունեության մեջ ներգրավված գույքի*** (շենքեր, շինություններ, հողամաս և այլն) նկարագիրը, մասնավորապես՝ ներկայացվում են դրանց արժեքը (ըստ հիմնական խմբերի), ընդհանուր գույքի կազմում դրանց տեսակարար կշիռը, ամփոփ նկարագրվում են թողարկողի գործունեության մեջ ներգրավված գույքի տեղակայման վայրերը: Եթե թողարկողի գործունեության մեջ ներգրավված որևէ գույքի արժեքը զգալի տեսակարար կշիռ է կազմում ընդհանուր գույքի արժեքի մեջ, ապա տրվում է այդ գույքի (շենքի, շինության, հողամասի, սարքի, սարքավորման և այլնի) համառոտ նկարագիրը, մասնավորապես՝ գտնվելու վայրը, տարածքի մեծությունը և օգտագործման նպատակը:

4) ***Մասնավորապես***՝ ներկայացվում են դրանց գտնվելու վայրը, տարածքի մեծությունը և օգտագործման նպատակը, ներկայացվում են նաև սարքերը, սարքավորումները, տեխնիկական և այլն, մասնավորապես՝ նշվում է արժեքը, հաշվեկշռում դրանց ընդհանուր մեծության տոկոսային մասը: Եթե որևէ գույք կամ սարքավորում ընկերությանը սեփականության իրավունքով չի պատկանում, կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակված է (մասնավորապես, եթե գույքը գրավ է դրված), ապա համառոտ ներկայացվում են այդ գույքի օգտագործման պայմանները և (կամ) օգտագործման սահմանափակումների բնույթը:

5) ***Ներդրումների վերաբերյալ տեղեկություններ*** (մասնավորապես՝ գույքի, մեքենաների, սարքավորումների, համակարգչային ծրագրերի և այլնի ձեռքբերում, ֆինանսական ակտիվներում ներդրումներ), մասնավորապես՝

ա. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարիների համար ներդրումների նկարագրությունը,

բ. ներդրումները, որոնք ընթացքի մեջ են, ներառյալ՝ տարածքային տեղաբաշխումը (ներքին, օտարերկրյա) և ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին):

6) ***Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակիցներ են,*** մասնավորապես՝ նշվում է անձի ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, թողարկողին (թողարկողի դուստրին) պատկանող բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ) և մասնակցության չափը:

7) ***Թողարկողի աշխատողները, հատկացումներ***, մասնավորապես՝

ա. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա համար յուրաքանչյուր տարվա վերջի դրությամբ կամ յուրաքանչյուր տարվա համար աշխատողների միջին թվաքանակը,

բ. աշխատակիցներին պատկանող թողարկողի բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ (մասնավորապես՝ բաժնետոմսերի դասը, ընդհանուր տոկոսային մասը բաժնետոմսերի ընդհանուր ծավալում (յուրաքանչյուր դասի համար՝ առանձին)),

գ. այն ծրագրերի կամ համաձայնությունների մասին, որոնցով նախատեսվում է աշխատողների մասնակցությունը թողարկողի կապիտալում,

8) ***Հարկային արտոնությունները,*** որոնցից օգտվում է թողարկողը (օրենքներով և (կամ) այլ իրավական ակտերով), կամ որոնք սահմանվել են հատուկ տվյալ թողարկողի համար:

9) ***Դատական և իրավական ընթացակարգը***, մասնավորապես՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում թողարկողի նկատմամբ դատարանի, պետական մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցների (վարչական, քաղաքացիաիրավական) մասին: Նշվում են թողարկողին պատասխանատվության ենթարկելու հիմքերը (պատճառները), տեսակն ու չափը, ինչպես նաև ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ դրա կատարման աստիճանը: Ներկայացվում են նաև թողարկողի դեմ ցանկացած սնանկության (անվճարունակության) կամ լուծարային վարույթի կիրառման նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկություններ:

10) ***Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝ նկարագրել այն գործարքները (գործարքի առարկան, կատարման ամսաթիվը, գործարքի արժեքը, կողմերի անվանումը (անունը, ազգանունը), գործարքների ընդհանուր մասնաբաժինը թողարկողի եկամուտների ընդհանուր մեծության մեջ), որոնք իրականացվել են (վերջին տարվա համար) կամ նախատեսվում են իրականացվել թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակիցների կամ նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև թողարկողի հետ փոխկապակցված անձանց հետ, և որոնց արժեքը կազմում է թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 1 և ավելի տոկոսը և (կամ) գերազանցում է 2 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

11) ***Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները,*** մասնավորապես՝

ա. թողարկողի ապագա գործունեության նկարագրությունը,

բ. նախատեսվող եկամուտների աղբյուրների առնչությամբ թողարկողի ծրագրերի հակիրճ նկարագրությունը,

գ. ապագա գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների չափը,

դ. նոր արտադրության կազմակերպման, արտադրության ընդլայնման կամ կրճատման, նոր արտադրատեսակների մշակման, հիմնական միջոցների արդիականացման և վերակառուցման, գործունեության ուղղվածության հնարավոր փոփոխության հետ կապված ծրագրերը,

ե. նախատեսվող գիտահետազոտական, զարգացման ուղղությունները, նոր ապրանքների, ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման ու կատարելագործման հետ կապված աշխատանքները:

30. ***«ԹՈՂԱՐԿՈՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Ֆինանսական հաշվետվություններ***, մասնավորապես՝ ազդագրում ներառվում են թողարկողի (բացառությամբ այն անձանց, որոնք Կենտրոնական բանկ են ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով) ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված՝ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին, այդ ձևերը լրացնելու հրահանգին և սույն կանոնին համապատասխան: Այն անձինք, որոնք Կենտրոնական բանկ են ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ օրենքով և Կենտրոնական բանկի նորմա-

տիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են Կենտրոնական բանկի սահմանած հաշվային պլանին, տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին, այդ ձևերը լրացնելու հրահանգներին և սույն կետին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կարող են կազմվել նաև այլ ձևերով՝ նախապես համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ: Թողարկողները նշված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հետևյալ կարգով՝

ա. ազդագրերում ներառում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա տարեկան (անկախ աուդիտորական եզրակացությամբ հավաստված) և ընթացիկ տարվա վերջին եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը, որի ներկայացման ժամկետը լրացել է՝ համաձայն սույն կանոնակարգի 64-րդ կետի, բացառությամբ, եթե որոշակի խմբի թողարկողների համար օրենքով և դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերով ներկայացման այլ ժամկետ սահմանված չէ,

բ. ազդագրի ներկայացման պահին նախորդող տարվա տարեկան ֆինանսական հաշվետվության ներկայացման ժամկետը լրացած չլինելու դեպքում, ներկայացվում են այդ տարվա եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները: Ընդ որում՝ չորրորդ եռամսյակի համար եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ չեն ներկայացվում:

2) ***Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա համար (յուրաքանչյուր տարվա համար՝ առանձին) զուտ շահույթի և վնասի մեծությունը (տոկոսային արտահայտությամբ), ակտիվների եկամտաբերությունը և այլն, ներառյալ՝ փոփոխությունների պատճառները: Սույն կետում ներառվող տեղեկությունները ներկայացվում են այնքանով, որքանով ընդգրկված չեն ազդագրի այլ մասերում:

3) ***Բանկի ֆինանսական գործունեությունը,*** մասնավորապես՝

ա. թողարկողի պարտավորությունների կառուցվածքի (այդ թվում՝ կրեդիտորական պարտքերի) համառոտ նկարագիրը, դրանց առաջացման հիմքերը, տեսակարար կշիռը ընդհանուր կրեդիտորական պարտքերի կառուցվածքում և կատարման հնարավորության աստիճանը,

բ. սեփական կապիտալի աճի կամ նվազման հայտնի և էական միտումները:

4) ***Շահույթի կանխատեսումը և գնահատումը,*** մասնավորապես՝

ա. այն հիմնարար սկզբունքների կամ վարկածների նկարագիրը, որոնց հիման վրա իրականացվել է շահույթի կանխատեսումը կամ գնահատումը,

բ. տարանջատված նկարագրվում են այն գործոնները, որոնց վրա թողարկողի կառավարման մարմինները ազդելու հնարավորություն ունեն, և այն գործոնները, որոնց վրա ազդելու այդպիսի հնարավորությունը բացակայում է, ընդ որում, նկարագրությունը պետք է շարադրվի ներդրողի համար մատչելի լեզվով,

գ. դրույթ հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն կետում նշված տեղեկություններն ընդամենը կանխատեսումներ են, և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա»,

դ. եթե թողարկողը նախկինում իրականացրել է շահույթի կանխատեսում կամ գնահատում, որի իրականացման ժամկետը դեռ չի ավարտվել, և եթե թողարկողը կարծում է, որ այն դեռևս համապատասխանում է ներկա կանխատեսումներին, ապա նշվում է դրույթ այդ մասին, հակառակ դեպքում հիմնավորվում է կանխատեսումների անհամապատասխանությունը: Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը պետք է համադրելի լինի վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի իրականացրած կանխատեսումների կամ գնահատումների հետ:

31. ***«ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ,*** մասնավորապես՝

ա. կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը, թողարկողի կանոնադրությամբ վերապահված իրավասությունները,

բ. թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը (հասցեն)), գործունեության ոլորտը (մասնագիտությունը), վերջին 3 տարվա ընթացքում իրականացրած գոր-

ծունեության ոլորտը (զբաղեցրած ղեկավար պաշտոնները), այդ թվում՝ նշելով այն կազմակերպությունների անվանումները, որտեղ այդ անձը ղեկավար պաշտոն է զբաղեցրել (զբաղեցնում), թողարկողի կողմից տվյալ անձին ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 3 տարվա ընթացքում տրված վարձատրությունները, տվյալ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ), տվյալ անձի նշանակալից մասնակցությունն այլ (ոչ ռեզիդենտների համար՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կամ գործող թողարկողների) բաժնային արժեթղթերում (առանձին նշելով արժեթղթերի դասերը, դրանք թողարկողների անվանումները և տվյալ անձին պատկանող բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ)): Համառոտ նկարագրել բոլոր պայմանագրերը (համաձայնագրերը) կամ որոշումները, որոնց համաձայն՝ տվյալ անձը հանդիսանում է թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները,

գ. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում կառավարմանը մասնակցող անձի դեմ սնանկացման (անվճարունակության) միջնորդությունների ներկայացման, ինչպես նաև դատարանի որոշման (դատավճռի) հիման վրա կամ պետական որևէ մարմնի կողմից նրա նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման հիմքերը (պատճառները) և հետևանքները,

դ. կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապի բնույթը (ընտանիքի անդամներ, անձի կամ նրա ամուսնու հայր, մայր, քույր, եղբայր կամ նրանց ամուսիններ),

ե. ցանկացած շահերի բախում թողարկողի և թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև, շահերի բախման բացակայության դեպքում նշվում է այդ մասին դրույթ:

32. ***«ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԹՈՂԱՐԿՈՂԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝

ա. փոխկապակցված անձ հանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնները՝ նշելով պաշտոնը և այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ),

բ. փոխկապակցված անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա կողմից իրականացվող հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը, այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ):

Եթե անձը փոխկապակցված անձ է դարձել Օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի «Փոխկապակցված անձ» սահմանման «բ» պարբերության համաձայն, ապա ներկայացվում է նաև փոխկապակցված անձի կառավարմանը մասնակցող անձանց, ինչպես նաև այդ անձանց և թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապերի բնույթը, իսկ եթե փոխկապակցված անձ է դարձել «գ» և «դ» պարբերությունների համաձայն, ապա համառոտ նկարագրվում են փոխկապակցված անձի կողմից թողարկողի որոշումները կանխորոշելու փաստացի հնարավորությունները, պայմանագրի այն կետերը, որոնք հնարավորություն են տալիս կանխորոշելու նման որոշումները կամ ընդհանուր տնտեսական շահերի բացատրությունը, որի համաձայն գործում է տվյալ անձը:

2) ***Թողարկողի նշանակալից մասնակիցները (բացառությամբ այն մասնակիցների, որոնց պատկանում է թողարկողի բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսը),*** մասնավորապես՝

ա. նշանակալից մասնակիցներ հանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնները՝ նշելով պաշտոնը և այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ),

բ. նշանակալից մասնակից հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա կողմից իրականացվող հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը, այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ):

33. «ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում սույն կետը լրացվում է ըստ կիրառելիության)՝

1) արժեթղթի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),

2) արդյո՞ք արժեթուղթը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված է, թե ոչ, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված լինելու դեպքում՝ կարգավորվող շուկայի անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, յուրաքանչյուր ձևի, դասի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում),

3) յուրաքանչյուր դասի արժեթղթի համար թողարկված կամ տեղաբաշխված արժեթղթերի ընդհանուր ծավալը և արժեթղթերի քանակը,

4) արժեթղթերի մարման ժամկետները (առկայության դեպքում),

5) տվյալ դասի և ձևի արժեթղթերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները,

6) կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող (թույլատրված) արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար եկամուտների (շահաբաժինների) վճարման պայմանները և չափը՝ ավարտված վերջին 2 ֆինանսական տարիների համար: Մանրամասն նկարագրել այն դեպքերը, երբ արժեթղթերի դիմաց վճարումները սահմանափակվել են կամ կարող են սահմանափակվել: Առանձին նշել՝

ա. շահույթի առկայության պարագայում եկամուտների (շահաբաժինների) չվճարման դեպքերը և չվճարման պատճառները,

բ. միջանկյալ եկամուտների չափը, եթե ընթացիկ տարում թողարկողը միջանկյալ վճարումներ է իրականացրել,

7) արժեթղթերի մասին շուկայական տեղեկություններ, մասնավորապես, եթե թողարկողի արժեթղթերի վաճառքը կատարվում է ֆոնդային բորսայում, ապա նշվում են թողարկողին հայտնի՝ դրանց վաճառքի ամենաբարձր և ամենացածր գները վերջին երկու տարիների համար,

8) համառոտ նկարագրություն թողարկված արժեթղթերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետգնման դեպքերի և պատճառների, ժամկետների, ինչպես նաև դրանց արդյունքների վերաբերյալ:

34. «ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ» բաժնում ներկայացվում են բաժնետոմսերի թողարկմանն առնչվող առավելագույնը 3 տարի վաղեմության ժամկետ ունեցող որոշումները և պայմանագրերը կամ դրանց պատճենները, այդ թվում՝

1) թողարկողի կանոնադրության պատճենը,

2) թողարկողի բաժնետոմսերով նախատեսված պարտավորությունները կամ դրանց մի մասը երաշխավորող անձի (առկայության դեպքում) կողմից տրված երաշխավորագրի պատճենը,

3) ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության պատճենները,

4) այն պայմանագրերի պատճենները, որոնք թողարկողը կնքել է ներդրումային ծառայություններ մատուցող անձի (այդ թվում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի) հետ,

5) ազդագրում օգտագործվող կամ այդ նպատակով ստացած որևէ անձի (հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ այլ փորձագետի) ստորագրված մասնագիտական կարծիքը, և այդ կարծիքն օգտագործելու մասին գրավոր համաձայնությունը,

6) այլ փաստաթղթեր (թողարկողի հայեցողությամբ):

ԲԱԺԻՆ VI. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐ

ԳԼՈՒԽ 14. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

35. Պարտատոմսերի ազդագիրը կազմված է հետևյալ մասերից՝

1) տիտղոսաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

2) ամփոփաթերթ,

3) թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ,

4) թողարկողի վերաբերյալ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 15. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

36. Պարտատոմսերի ամփոփաթերթում հակիրճ ներկայացվում է ազդագրում ներառվող ամենաէական տեղեկատվությունը՝ առնվազն ներառելով հետևյալ տեղեկությունները՝

1) թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ,
2) թողարկողի վերաբերյալ տեղեկություններ.
ա. ընդհանուր տեղեկություններ,
բ. թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ,
գ. թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ,
դ. թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ,
ե. թողակողի հետ փոխկապակցված անձանց, նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ,
զ. թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ:
37. Ամփոփաթերթը պետք է համապատասխանի Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին և բաղկացած լինի մոտ մինչև 2500 բառից:

ԳԼՈՒԽ 16. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

38. Ազդագրի «Թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ» բաժնում ներկայացվում են թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝
1) ***Ընդհանուր տեղեկություններ***, մասնավորապես՝
ա. պարտատոմսերի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),
բ. թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը. եթե թողարկման ծավալը հնարավոր չէ ներառել ազդագրում, ապա ներառվում են պարտատոմսերի առաջարկի վերջնական ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները, տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը,
գ. մեկ պարտատոմսի անվանական արժեքը, արժույթը,
դ. փոխարկելի պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում նշվում են այն արժեթղթերը և դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, որոնց պետք է փոխարկվեն թողարկվող պարտատոմսերը, փոխարկման ընթացակարգը,
ե. պարտատոմսերի տեղաբաշխման կամ առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը կամ դրանց որոշման կարգը, ներառյալ՝ այդ ժամկետների հնարավոր փոփոխությունները,
զ. այն հանգամանքները, որոնց դեպքում պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը չեղյալ համարելու դեպքում ներդրողներին գումարների վերադարձման կարգը,
է. պարտատոմսերի դիմաց վճարումների ժամկետը, չափը, պարբերականությունը, այն հաշիվները և բանկի անվանումները, որտեղ պետք է փոխանցվեն պարտատոմսերի դիմաց վճարվող միջոցները,
ը. պարտատոմսերի մարման, ներառյալ, եթե նախատեսվում է վաղաժամկետ մարում, վաղաժամկետ մարման պայմանները,
թ. ապահովված պարտատոմսերի դեպքում ապահովման միջոցի վերաբերյալ տեղեկություններ,
ժ. պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշման ընդունման ամսաթիվը, պարտատոմսերի թողարկման մասին որոշումն ընդունող մարմնի անվանումը, իսկ եթե տեղաբաշխման մասին որոշում ընդունողը թողարկողի այլ մարմին է, ապա՝ նաև վերջինիս անվանումը:
Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ, մասնավորապես՝ պարտատոմսերի տեղաբաշխման գինը (առկայության դեպքում), եթե առաջարկվող պարտատոմսերի վերջնական գինը հնարավոր չէ ներառել ազդագրում, ապա ազդագիրը ներառում է արժեթղթերի առաջարկի վերջնական գնի և ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները:
2) ***Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝ եկամուտների չափը կամ դրա որոշման կարգը, վճարման պայմանները (վճարման պարբերականությունը, այն վայրերն ու կազմակերպությունների անվանումները, որտեղ պարտատոմսերի սեփականատերերը կարող են ստանալ իրենց եկամուտները), ինչպես նաև ոչ ռեզիդենտներին տրվող եկամուտների վճարման ընթացակարգը (առկայության դեպքում):
3) ***Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝
ա. պարտատոմսերի թողարկման այն սահմանափակումները, որոնք սահմանված են թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշ-

մամբ (առկայության դեպքում), ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանված սահմանափակումները,

բ. բաժանորդագրությունների նվազագույն և առավելագույն մեծությունը (արտահայտված պարտատոմսերի քանակով կամ ընդհանուր ծավալով):

4) ***Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ***, մասնավորապես՝ պայմանագրի (լիազորագրի) հիման վրա թողարկողի պարտատոմսերը տեղաբաշխողի (անդերռայթերի) կազմակերպական-իրավական ձևերը, ֆիրմային անվանումները, գտնվելու վայրը, տեղաբաշխման եղանակները, թողարկողի ու այդ անձանց միջև կնքված պայմանագրի էական պայմաններն ու նրանց պարգևատրման պայմանները, ինչպես նաև նրանց կողմից առաջարկվող պարտատոմսերի քանակը և գինը:

5) ***Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝

ա. բաժանորդագրման իրավունքի իրականացման կարգը,

բ. այն ժամկետը, որի ընթացքում ներդրողները կարող են հետ կանչել իրենց բաժանորդագրությունները, բաժանորդագրման իրավունքի չիրականացման հետևանքները,

գ. այն հնարավոր դեպքերի նկարագրությունը, որոնց առկայության դեպքում բաժանորդագրությունների քանակը կարող է նվազեցվել բաժանորդագրված անձանց կողմից, վճարված գումարի վերադարձման կարգը:

6) ***Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը:***

7) ***Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները*** (ներառյալ՝ իրավունքների իրականացման կարգը):

8) ***Այն կազմակերպությունների*** կազմակերպական-իրավական ձևը, ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը, դրա փոստային հասցեն և կապի այլ միջոցները, որոնք իրականացնում են պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումը:

9) ***Այն անձանց անվանումները*** (առկայության դեպքում), որոնք թողարկողի հետ կնքել են պայմանագիր, համաձայն որի՝ նշված անձինք հանդիսանալու են շուկա ստեղծող (մարքեթ մեյքեր) երկրորդային շուկայում:

10) ***Թողարկման նպատակը:***

ԳԼՈՒԽ 17. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

39. «Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ» մասը ներառում է հետևյալ բաժինները՝

1) ընդհանուր տեղեկություններ,

2) թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

3) թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները,

4) թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք,

5) թողակողի հետ փոխկապակցված անձինք, նշանակալից մասնակիցները,

6) թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ,

7) կից փաստաթղթեր:

40. ***«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները՝

1) ***Թողարկողի պատմությունը և զարգացումը***, մասնավորապես՝

ա. ֆիրմային անվանումը, առկայության դեպքում՝ դրա հապավումը (եթե թողարկողի կանոնադրությամբ տրված են թողարկողի ֆիրմային անվանման տարբերակներ այլ լեզուներով, նշվում են նաև դրանք),

բ. թողարկողի ստեղծման կազմակերպական-իրավական ձևը. եթե թողարկողի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը, կամ թողարկողը վերակազմակերպվել է, ապա նշվում են նաև նրա բոլոր անվանումները, կազմակերպական-իրավական ձևերը,

գ. թողարկողի առաջին գրանցման ամսաթիվը, գրանցման համարը և փաստացի գործունեություն իրականացնելու ժամկետը, գրանցման վայրը և գրանցող երկրի անվանումը:

2) ***Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի և միությունների անվանումները և գտնվելու վայրերը, որոնց մասն է կազմում թողարկողը:

3) ***Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք,*** մասնավորապես՝

ա. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացնող յուրաքանչյուր անձի անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները (ներառյալ՝ որևէ մասնագիտացված անձի անդամակցությունը),

բ. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման այլ պատճառները:

4) ***Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները,*** մասնավորապես՝

ա. թողարկողի փորձագետ կամ խորհրդատու հանդիսացող անձինք, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է ազդագրում, դրանց բնակության վայրը, մասնագիտությունը, առկայության դեպքում՝ թողարկողի կապիտալում մասնակցության չափը,

բ. եթե ազդագրում ներառված են այլ անձանցից ձեռք բերված տեղեկություններ, ապա նշվում է նաև տեղեկատվության աղբյուրը:

5) ***Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ*** (ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի, գործունեության հեռանկարների, նրա հետ կապված ռիսկերի վերաբերյալ հակիրճ նկարագրություն):

6) ***Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը, կառուցվածքը*** (սովորական և արտոնյալ բաժնետոմսերի քանակը), մասնակիցների կողմից իրենց բաժնային արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունների կատարման աստիճանը (տոկոսային արտահայտությամբ), կանոնադրական կապիտալի մեծացման մտադրությունների վերաբերյալ տեղեկություններ, նախորդող վերջին 3 տարվա ընթացքում կանոնադրական կապիտալի փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ, չվճարված բաժնետոմսերի քանակը տարվա սկզբի և վերջի դրությամբ:

7) ***Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝ նշվում են պայմանագրի (օպցիոնի) կողմերի (առանձին նշելով աշխատակիցների) անվանումները, պայմանագրի կնքման ամսաթիվը, մարման ամսաթիվը, առարկան (արժեթղթերի դասը), պայմանագրի գինը, օպցիոնի իրականացման կարգը:

41. ***«ԹՈՂԱՐԿՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները՝

1) ***Ռիսկային գործոններ***, որտեղ նկարագրվում են այն հիմնական գործոնները, որոնցով պայմանավորված են այս առաջարկի ընդունման հնարավոր բացասական հետևանքները և դրանց առաջացմանը նպաստող հնարավոր գործոնները (այդ թվում՝ թողարկողի իրականացված գործունեության, վերջին շրջանում (թողարկողի հայեցողությամբ ընտրված ժամանակաշրջան) կատարված շահութաբեր գործառնությունների, ֆինանսական դրության, իրականացվող կամ իրականացվելիք գործունեության, բաժնային արժեթղթերի և դրանց փոխարկվող արժեթղթերի շուկային վերաբերող և այլ ռիսկային գործոնները), ինչպես նաև այդ ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը:

2) ***Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը***, մասնավորապես՝

ա. հիմնական գործունեության նկարագիրը՝ հակիրճ արտացոլելով նաև թողարկողի համար առավել կարևոր գործունեության ոլորտների արդի վիճակները և դրանց զարգացման ընդհանուր միտումները,

բ. վաճառված ապրանքների կամ մատուցվող ծառայությունների հիմնական բնութագրիչների նկարագրությունը (գին, ծավալ և այլն) ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում, նոր ապրանքների կամ ծառայությունների նկարագրությունը (ապրանքների և ծառայությունների մեծ տեսականու առկայության պարագայում ապրանքներն ու ծառայությունները կարելի է ներկայացնել խմբավորված), դրանց հետ կապված զարգացման հեռանկարները: Եթե թողարկողը զբաղվում է բնական ռեսուրսների արդյունահանմամբ կամ վերամշակմամբ, ապա անհրաժեշտ է ներկայացնել բնական ռեսուրսի տեսակը, պաշարների կանխատեսվող չափը, գտնվելու վայրը, ինչպես նաև դրա օգտագործման իրավունքի ժամկետները,

գ. թողարկողի արտադրանքների սպառման (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) ներքին և արտաքին հիմնական շուկաների նկարագրությունը (մասնավորապես՝ տվյալ շուկայում թողարկողի բաժինը, ստացվող եկամտի չափը, ընդլայնման միտումները), թողարկողի արտադրանքի իրացման հիմնական

մեթոդները (մասնավորապես՝ երկարաժամկետ, կարճաժամկետ պայմանագրերի, պատահական պայմանագրերի, սեփական առաքման ցանցի, միջնորդ կազմակերպությունների, ապրանքային ֆոնդային բորսայի միջոցով), խոշոր սպառողների անվանումները, մասնաբաժինը (տոկոսային արտահայտությամբ) թողարկողի հասույթում,

դ. թողարկողի հիմնական մրցակիցները, նրանց բաժինը շուկայում՝ ըստ գործունեության առանձին տեսակների (հնարավորության դեպքում), ապագայում նոր մրցակիցներ ի հայտ գալու վերաբերյալ տեղեկություններ (հայտնի լինելու դեպքում),

ե. թողարկողի այն մատակարարները, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների (դրամական արտահայտությամբ) ընդհանուր մատակարարման 10 տոկոսից ավելին, նրանց բաժինը մատակարարման ընդհանուր ծավալում, ընդհանուր մատակարարման մեջ ներմուծման տոկոսային մասը,

զ. թողարկողի կողմից կնքված պայմանագրերը, մասնավորապես՝ գործողության մեջ գտնվող, ինչպես նաև ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կնքած այն պայմանագրերի պայմանները (անձի անվանումը, ում հետ կնքվել է պայմանագիրը, պայմանագրի առարկան, գինը, գործողության ժամկետը), որոնց գինը գերազանցում է թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 3 տոկոսը, ժամկետանց պայմանագրերի դեպքում նշել նաև ժամկետանց օրերի քանակը և ժամկետանց լինելու պատճառները,

է. թողարկողի գործունեության իրականացման հատուկ թույլտվությունների (լիցենզիաների), արտոնագրերի (պատենտների), ապրանքանիշերի վերաբերյալ տեղեկություններ՝ նշելով գործունեության համապատասխան տեսակները, տրման ամսաթվերը, գործողությունների ժամկետները:

3) ***Թողարկողի գործունեության մեջ ներգրավված գույքի*** (շենքեր, շինություններ, հողամաս և այլն) ***նկարագիրը***, մասնավորապես՝ ներկայացվում են դրանց արժեքը (ըստ հիմնական խմբերի), ընդհանուր գույքի կազմում դրանց տեսակարար կշիռը, ամփոփ նկարագրվում են թողարկողի գործունեության մեջ ներգրավված գույքի տեղակայման վայրերը: Եթե թողարկողի գործունեության մեջ ներգրավված որևէ գույքի արժեքը զգալի տեսակարար կշիռ է կազմում ընդհանուր գույքի արժեքի մեջ, ապա տրվում է այդ գույքի (շենքի, շինության, հողամասի, սարքի, սարքավորման և այլնի) համառոտ նկարագիրը, մասնավորապես՝ գտնվելու վայրը, տարածքի մեծությունը և օգտագործման նպատակը:

4) ***Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ՝ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակիցներ են,*** մասնավորապես՝ նշվում է անձի ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, թողարկողին (թողարկողի դուստրին) պատկանող բաժնային արժեթղթերի քանակը և մասնակցության չափը:

5) ***Հարկային արտոնությունները,*** որոնցից օգտվում է թողարկողը (օրենքներով և (կամ) այլ իրավական ակտերով), կամ որոնք սահմանվել են հատուկ տվյալ թողարկողի համար:

6) ***Դատական և իրավական ընթացակարգը,*** մասնավորապես՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում թողարկողի նկատմամբ դատարանի, պետական մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցների (վարչական, քաղաքացիաիրավական) մասին: Նշվում են թողարկողին պատասխանատվության ենթարկելու հիմքերը (պատճառները), տեսակն ու չափը, ինչպես նաև ազդագրի գրանցման ներկայացման պահի դրությամբ դրա կատարման աստիճանը: Ինչպես նաև ներկայացվում են թողարկողի դեմ ցանկացած սնանկության (անվճարունակության) կամ լուծարման վարույթի կիրառման նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկություններ:

7) ***Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝ նկարագրել այն բոլոր գործարքները (գործարքի առարկան, կատարման ամսաթիվը, գործարքի արժեքը, կողմերի անվանումը (անունը, ազգանունը), գործարքների ընդհանուր մասնաբաժինը թողարկողի եկամուտների ընդհանուր մեծության մեջ), որոնք իրականացվել են (վերջին 3 տարվա համար) կամ նախատեսվում են իրա-կանացվել թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակիցների կամ նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև թողարկողի հետ փոխկապակցված անձանց հետ, և որոնց արժեքը գերազանցում է թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 1 և ավելի տոկոսը և (կամ) գերազանցում է 2 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

8) ***Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները,*** մասնավորապես՝ թողարկողի ապագա գործունեության, նախատեսվող եկամուտների աղբյուրների առնչությամբ թողարկողի ծրագրերի հակիրճ նկարագրությունը:

42. «ԹՈՂԱՐԿՈՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***ֆինանսական հաշվետվություններ***, մասնավորապես՝ ազդագրում ներառվում են թողարկողի (բացառությամբ այն անձանց, որոնք Կենտրոնական բանկ են ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով) ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված՝ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին, այդ ձևերը լրացնելու հրահանգին և սույն կանոնին համապատասխան: Այն անձինք, որոնք Կենտրոնական բանկ են ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են Կենտրոնական բանկի սահմանած հաշվային պլանին, տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին, այդ ձևերը լրացնելու հրահանգներին և սույն կետին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կարող են կազմվել նաև այլ ձևերով՝ նախապես համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ: Թողարկողները նշված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հետևյալ կարգով՝

ա. ազդագրերում ներառում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա տարեկան (անկախ աուդիտորական եզրակացությամբ հավաստված) և ընթացիկ տարվա վերջին եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը, որի ներկայացման ժամկետը լրացել է՝ համաձայն սույն կանոնակարգի 64-րդ կետի, բացառությամբ, եթե որոշակի խմբի թողարկողների համար օրենքով և դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերով ներկայացման այլ ժամկետ սահմանված չէ,

բ. ազդագրի ներկայացման պահին նախորդող տարվա տարեկան ֆինանսական հաշվետվության ներկայացման ժամկետը լրացած չլինելու դեպքում ներկայացվում են այդ տարվա եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները: Ընդ որում՝ չորրորդ եռամսյակի համար եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ չեն ներկայացվում:

2) ***ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա համար (յուրաքանչյուր տարվա համար՝ առանձին) զուտ շահույթի և վնասի մեծությունը (տոկոսային արտահայտությամբ), ակտիվների եկամտաբերությունը և այլն, ներառյալ՝ փոփոխությունների պատճառները: Սույն կետում ներառվող տեղեկությունները ներկայացվում են այնքանով, որքանով ընդգրկված չեն ազդագրի այլ մասերում:

3) ***Բանկի ֆինանսական գործունեությունը,*** մասնավորապես՝

ա. ներկայացվում են թողարկողի պարտավորությունների կառուցվածքի (այդ թվում՝ կրեդիտորական պարտքերի) համառոտ նկարագիրը, դրանց առաջացման հիմքերը, տեսակարար կշիռը ընդհանուր կրեդիտորական պարտքերի կառուցվածքում և կատարման հնարավորության աստիճանը,

բ. ներկայացնել նաև սեփական կապիտալի աճի կամ նվազման հայտնի և էական միտումները:

43. *«ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»* բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) **Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ,** մասնավորապես՝

ա. կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը, թողարկողի կանոնադրությամբ վերապահված իրավասությունները,

բ. թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի անվանումը (անունը, ազգանունը), գործունեության վայրը (բնակության վայրը (հասցեն)), գործունեության ոլորտը (մասնագիտությունը), վերջին 3 տարվա ընթացքում իրականացրած գործունեության ոլորտը (զբաղեցրած ղեկավար պաշտոնները), այդ թվում՝ նշելով այն կազմակերպությունների անվանումները, որտեղ այդ անձը ղեկավար պաշտոն է զբաղեցրել (զբաղեցնում),

գ. ցանկացած շահերի բախում թողարկողի և թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև, շահերի բախման բացակայության դեպքում, նշվում է դրույթ այդ մասին:

44. ***«ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԹՈՂԱՐԿՈՂԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝

ա. փոխկապակցված անձ հանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնները՝ նշելով պաշտոնը և այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ),

բ. փոխկապակցված անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա կողմից իրականացվող հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը, այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ):

Եթե անձը փոխկապակցված անձ է դարձել Օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի «Փոխկապակցված անձ» սահմանման «բ» պարբերության համաձայն, ապա ներկայացվում են նաև փոխկապակցված անձի կառավարմանը մասնակցող անձանց, ինչպես նաև այդ անձանց և թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապերի բնույթը, իսկ եթե փոխկապակցված անձ է դարձել «գ» և «դ» պարբերությունների համաձայն, ապա համառոտ նկարագրվում են փոխկապակցված անձի կողմից թողարկողի որոշումները կանխորոշելու փաստացի հնարավորությունները, պայմանագրի այն կետերը, որոնք հնարավորություն են տալիս կանխորոշելու նման որոշումները կամ ընդհանուր տնտեսական շահերի բացատրությունը, որի համաձայն գործում է տվյալ անձը:

2) ***Թողարկողի նշանակալից մասնակիցների վերաբերյալ (բացառությամբ այն մասնակիցների, որոնց պատկանում է թողարկողի բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսը),*** մասնավորապես՝

ա. նշանակալից մասնակիցներ հանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնները՝ նշելով պաշտոնը և այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ),

բ. նշանակալից մասնակիցներ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա կողմից իրականացվող հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը, այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ):

45. ***«ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում սույն կետը լրացվում է ըստ կիրառելիության).

1) արժեթղթի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),

2) արդյոք արժեթուղթը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված է, թե ոչ, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված լինելու դեպքում՝ կարգավորվող շուկայի անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, յուրաքանչյուր ձևի, դասի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում),

3) յուրաքանչյուր դասի արժեթղթի համար թողարկված կամ տեղաբաշխված արժեթղթերի ընդհանուր ծավալը և արժեթղթերի քանակը,

4) արժեթղթերի մարման ժամկետները (առկայության դեպքում),

5) տվյալ դասի և ձևի արժեթղթերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները,

6) կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող (թույլատրված) արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար եկամուտների (շահաբաժինների) վճարման պայմանները և չափը՝ ավարտված վերջին 2 տարիների համար: Մանրամասն նկարագրել այն դեպքերը, երբ արժեթղթերի դիմաց վճարումները սահմանափակվել են կամ կարող են սահմանափակվել: Առանձին նշել.

ա. շահույթի առկայության պարագայում եկամուտների (շահաբաժինների) չվճարման դեպքերը և չվճարման պատճառները,

բ. միջանկյալ եկամուտների չափը, եթե ընթացիկ տարում թողարկողը միջանկյալ վճարումներ է իրականացրել,

7) համառոտ նկարագրություն թողարկված արժեթղթերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետգնման դեպքերի և պատճառների, ժամկետների, ինչպես նաև դրանց արդյունքների վերաբերյալ:

46. ***«ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ»*** բաժնում ներկայացվում են պարտատոմսերի թողարկմանն առնչվող առավելագույնը 3 տարի վաղեմության ժամկետ ունեցող որոշումները և պայմանագրերը կամ դրանց պատճենները, այդ թվում՝

1) թողարկողի կանոնադրության պատճենը,

2) թողարկողի պարտատոմսերով նախատեսված պարտավորությունները կամ դրանց մի մասը երաշխավորող անձի (առկայության դեպքում) կողմից տրված երաշխավորագրի պատճենը,

3) ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության պատճենները,

4) այն պայմանագրերի պատճենները, որոնք թողարկողը կնքել է ներդրումային ծառայություններ մատուցող անձի (այդ թվում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի) հետ,

5) ազդագրում օգտագործվող կամ այդ նպատակով ստացած որևէ անձի (հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ այլ փորձագետի) ստորագրած մասնագիտական կարծիքը, և այդ կարծիքն օգտագործելու մասին գրավոր համաձայնությունը,

6) գույքի գրավով ապահովված պարտատոմսերի դեպքում ապահովվածությունը հավաստող փաստաթղթերի պատճենը,

7) այլ փաստաթղթեր (թողարկողի հայեցողությամբ):

ԲԱԺԻՆ VII. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱԶԴԱԳԻՐ

ԳԼՈՒԽ 18. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱԶԴԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

47. Բանկերի (վարկային կազմակերպությունների) կողմից թողարկվող արժեթղթերի ազդագիրը կազմված է հետևյալ մասերից.

1) տիտղոսաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

2) ամփոփաթերթ,

3) արժեթղթերի (բաժնետոմսերի կամ պարտատոմսերի) վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի 12-րդ գլխի (բաժնետոմսերի համար) կամ համաձայն սույն կանոնակարգի 16-րդ գլխի (պարտատոմսերի համար),

4) բանկի կամ վարկային կազմակերպության (այսուհետ՝ բանկի) վերաբերյալ տեղեկություններ: Բանկերի համար կիրառվող սույն կանոնակարգով սահմանված պահանջները տարածվում են վարկային կազմակերպությունների վրա, բացառությամբ սույն կանոնակարգի 55-րդ և 56-րդ կետերի, որոնց փոխարեն ներկայացվում են սույն կանոնակարգի համապատասխանաբար 31-րդ և 32-րդ կետերը:

ԳԼՈՒԽ 19. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

48. Բանկերի ամփոփաթերթում հակիրճ ներկայացվում է ազդագրում ներառվող էական տեղեկատվությունը՝ առնվազն ներառելով հետևյալ տեղեկությունների հակիրճ նկարագրությունը.

1) թողարկվող արժեթղթերի (բաժնետոմսերի կամ պարտատոմսերի) վերաբերյալ տեղեկություններ,

2) բանկի վերաբերյալ տեղեկություններ.

ա. ընդհանուր տեղեկություններ,

բ. բանկի գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

գ. բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ,

դ.բանկի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ,

ե. բանկի հետ փոխկապակցված անձանց, նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ,

զ. բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ:

49. Ամփոփաթերթը պետք է համապատասխանի Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին և բաղկացած լինի մոտ մինչև 2500 բառից:

50. Ամփոփաթերթում նշվում է, որ ներդրողը կարող է ծեռք բերել նաև բանկի կողմից հրապարակվող տեղեկությունները՝ նշելով աղբյուրը:

ԳԼՈՒԽ 20. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

51. «Բանկի վերաբերյալ տեղեկություններ» մասը ներառում է հետևյալ բաժինները.

1) ընդհանուր տեղեկություններ,

2) բանկի գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

3) բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ,

4) բանկի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ,

5) բանկի հետ փոխկապակցված անձանց, նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ,

6) բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ,

7) կից փաստաթղթեր:

52. ***«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Բանկի պատմությունը և զարգացումը***, մասնավորապես՝

ա. ֆիրմային անվանումը, առկայության դեպքում՝ դրա հապավումը (եթե բանկի կանոնադրությամբ տրված են բանկի ֆիրմային անվանման տարբերակներ այլ լեզուներով, նշվում են նաև դրանք),

բ. բանկի ստեղծման կազմակերպական-իրավական ձևը. եթե բանկի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը, կամ թողարկողը վերակազմակերպվել է, ապա նշվում են նաև նրա բոլոր անվանումները, կազմակերպական-իրավական ձևերը,

գ. բանկի առաջին գրանցման ամսաթիվը, գրանցման համարը և փաստացի գործունեություն իրականացնելու ժամկետը, գրանցման վայրը և գրանցող երկրի անվանումը:

2) ***Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝ բանկային, ֆինանսական խմբերի և միությունների անվանումները և գտնվելու վայրերը, որոնց մասն է կազմում թողարկողը:

3) ***Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները*** (անվանումները, գտնվելու վայրերը):

4) ***Բանկի աուդիտն իրականացնող անձինք***, մասնավորապես՝

ա. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում բանկի աուդիտն իրականացնող յուրաքանչյուր անձի անվանումը, գործունեության վայրը, կապի միջոցները (ներառյալ՝ որևէ մասնագիտացված անձի անդամակցությունը),

բ. ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում բանկի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից այլ հիմքերով ազատման պատճառները:

5) ***Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները,*** մասնավորապես՝

ա. բանկի փորձագետ կամ խորհրդատու հանդիսացող անձինք, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է ազդագրում, դրանց բնակության վայրը, մասնագիտությունը, առկայության դեպքում՝ բանկի կապիտալում մասնակցության չափը,

բ. եթե ազդագրում ներառված են այլ անձանցից ձեռք բերված տեղեկություններ, ապա նշվում է նաև տեղեկատվության աղբյուրը:

6) ***Արժեթղթերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ*** (ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի, գործունեության հեռանկարների, նրա հետ կապված ռիսկերի վերաբերյալ հակիրճ նկարագրություն):

7) ***Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը, կառուցվածքը*** (սովորական և արտոնյալ բաժնետոմսերի քանակը), կանոնադրական կապիտալի մեծացման մտադրությունների վերաբերյալ տեղեկություններ, ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա համար կանոնադրական կապիտալի փոփոխությունները, ինչպես նաև չվճարված բաժնետոմսերի քանակը տարվա սկզբի և վերջի դրությամբ:

8) ***Բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների հրավիրման կարգը (բաժնետոմսերի թողակման դեպքում)***:

53. ***«ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Ռիսկային գործոններ***, որտեղ նկարագրվում են այն հիմնական գործոնները, որոնցով պայմանավորված է այս առաջարկի ընդունման հնարավոր բացասական հետևանքները և դրանց առաջացմանը նպաստող հնարավոր գործոնները (այդ թվում՝ բանկի իրականացրած գործունեության, վերջին շրջանում (թողարկողի հայեցողությամբ ընտրված ժամանակաշրջան) կատարված շահութաբեր գործառնությունների, ֆինանսական դրության, իրականացվող կամ իրականացվելիք գործունեության, բաժնային արժեթղթերի և դրանց փոխարկվող արժեթղթերի շուկային վերաբերող և այլ ռիսկային գործոնները), ինչպես նաև այդ ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը:

2) ***Բանկի գործունեության հիմնական ոլորտների նկարագիրը***, մասնավորապես՝

ա. բանկի համար առավել կարևոր գործունեության ոլորտների արդի վիճակները (ըստ առանձին ուղղությունների) և դրանց զարգացման ընդհանուր միտումները,

բ. մատուցվող ծառայությունների հիմնական բնութագրիչների նկարագրությունը (տոկոսադրույքը և (կամ) սակագինը, ծավալ և այլն) ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում, նոր ապրանքների կամ ծառայությունների նկարագրությունը, դրանց հետ կապված զարգացման հեռանկարները,

գ. բանկի ծառայությունների մատուցման ներքին և արտաքին հիմնական շուկաների նկարագրությունը (մասնավորապես՝ տվյալ շուկայում բանկի բաժինը, ստացվող եկամտի չափը, ընդլայնման միտումները),

դ. բանկի հիմնական մրցակիցները, նրանց բաժինը շուկայում՝ ըստ գործունեության առանձին տեսակների (հնարավորության դեպքում), ապագայում նոր մրցակիցներ ի հայտ գալու վերաբերյալ տեղեկություններ (հայտնի լինելու դեպքում),

ե. բանկի կողմից կնքված պայմանագրերը, մասնավորապես՝ գործողության մեջ գտնվող, ինչպես նաև ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում բանկի կնքած այն պայմանագրերի պայմանները (անձի անվանումը, ում հետ կնքվել է պայմանագիրը, պայմանագրի առարկան, գինը, գործողության ժամկետը), որոնց գինը գերազանցում է բանկի ակտիվների հաշվեկշռված արժեքի 5 տոկոսը, ժամկետանց պայմանագրերի դեպքում նշել նաև ժամկետանց օրերի քանակը և ժամկետանց լինելու պատճառները:

3) ***Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ՝ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակից են,*** մասնավորապես՝ նշվում է անձի ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, բանկին (բանկի դուստրին) պատկանող բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ) և մասնակցության չափը:

4) ***Հարկային արտոնությունները***, որոնցից օգտվում է թողարկողը (օրենքներով և (կամ) այլ իրավական ակտերով), կամ որոնք սահմանվել են հատուկ տվյալ բանկի համար:

5) ***Դատական և իրավական ընթացակարգը,*** մասնավորապես՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում բանկի նկատմամբ դատարանի, պետական մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցների (վարչական, քաղաքացիաիրավական) մասին: Նշվում են բանկին պատասխանատվության ենթարկելու հիմքերը (պատճառները), տեսակն ու չափը, ինչպես նաև ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ դրա կատարման աստիճանը: Ներկայացվում են նաև բանկի դեմ ցանկացած սնանկության (անվճարունակության) կամ լուծարային վարույթի կիրառման նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկություններ:

6) ***Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ***, մասնավորապես՝ նկարագրել այն գործարքները (գործարքի առարկան, կատարման ամսաթիվը, գործարքի արժեքը, կողմերի անվանումը (անունը, ազգանունը), գործարքների ընդհանուր մասնաբաժինը թողարկողի եկամուտների ընդհանուր մեծության մեջ), որոնք իրականացվել են (վերջին տարվա համար) կամ նախատեսվում են իրականացվել բանկի կառավարմանը մասնակցող անձանց, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակիցների կամ նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև բանկի հետ փոխկապակցված անձանց հետ, և որոնց արժեքը կազմում է բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 1 և ավելի տոկոսը և (կամ) գերազանցում է 2 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

7) ***Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները***, մասնավորապես՝ թողարկողի ապագա գործունեության, նախատեսվող եկամուտների, ծախսերի հիմնական աղբյուրների առնչությամբ թողարկողի ծրագրերի հակիրճ նկարագրությունը:

54. ***«ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***ֆինանսական հաշվետվություններ***, մասնավորապես՝ ազդագրում ներառվում են բանկի կողմից Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական հաշվետվությունները կարող են կազմվել նաև այլ ձևերով՝ նախապես համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ: Բանկը նշված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում է հետևյալ կարգով՝

ա. ազդագրերում ներառում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա տարեկան (անկախ աուդիտորական եզրակացությամբ հավաստված) և ընթացիկ տարվա վերջին եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը, որի ներկայացման ժամկետը լրացել է,

բ. ազդագրի ներկայացման պահին նախորդող տարվա տարեկան ֆինանսական հաշվետվության ներկայացման ժամկետը լրացած չլինելու դեպքում ներկայացվում են այդ տարվա եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները: Ընդ որում՝ չորրորդ եռամսյակի համար եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ չեն ներկայացվում:

2) ***ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա համար (յուրաքանչյուր տարվա համար՝ առանձին) զուտ շահույթի և վնասի մեծությունը (տոկոսային արտահայտությամբ), ակտիվների եկամտաբերությունը և այլն, ներառյալ՝ փոփոխությունների պատճառները: Սույն կետում ներառվող տեղեկությունները ներկայացվում են այնքանով, որքանով ընդգրկված չեն ազդագրի այլ մասերում:

3) ***Բանկի ֆինանսական գործունեությունը,*** մասնավորապես՝

ա. բանկի պարտավորությունների կառուցվածքի (այդ թվում՝ կրեդիտորական պարտքերի) համառոտ նկարագիրը, դրանց առաջացման հիմքերը, տեսակարար կշիռը ընդհանուր կրեդիտորական պարտքերի կառուցվածքում և կատարման հնարավորության աստիճանը,

բ. սեփական կապիտալի աճի կամ նվազման հայտնի և էական միտումները:

4) ***Շահույթի կանխատեսումը և գնահատումը,*** մասնավորապես՝

ա. այն հիմնարար սկզբունքների կամ վարկածների նկարագիրը, որոնց հիման վրա իրականացվել է շահույթի կանխատեսումը կամ գնահատումը,

բ. տարանջատված նկարագրվում են այն գործոնները, որոնց վրա թողարկողի կառավարման մարմիններն ազդելու հնարավորություն ունեն, և այն գործոնները, որոնց վրա ազդելու այդպիսի հնարավորությունը բացակայում է, ընդ որում, նկարագրությունը պետք է շարադրվի ներդրողի համար մատչելի լեզվով,

գ. դրույթ հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն կետում նշված տեղեկությունները ընդամենը կանխատեսումներ են և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա»,

դ. եթե բանկը նախկինում իրականացրել է շահույթի կանխատեսում կամ գնահատում, որի իրականացման ժամկետը դեռ չի ավարտվել, և եթե բանկը կարծում է, որ այն դեռևս համապատասխանում է ներկա կանխատեսումներին, ապա նշվում է դրույթ այդ մասին, հակառակ դեպքում հիմնավորվում է կանխատեսումների անհամապատասխանությունը: Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը պետք է համադրելի լինի վերջին 3 տարվա ընթացքում բանկի իրականացրած կանխատեսումների կամ գնահատումների հետ:

55. ***«ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ***, մասնավորապես՝

ա. կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը, թողարկողի կանոնադրությամբ վերապահված իրավասությունները,

բ. թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի անվանումը (անունը, ազգանունը), գործունեության վայրը (բնակության վայրը (հասցեն)), գործունեության ոլորտը (մասնագիտությունը), վերջին 3 տարվա ընթացքում իրականացրած գործունեության ոլորտը (զբաղեցրած ղեկավար պաշտոնները), այդ թվում՝ նշելով այն կազմակերպությունների անվանումները, որտեղ այդ անձը ղեկավար պաշտոն է զբաղեցրել (զբաղեցնում),

գ. ցանկացած շահերի բախում թողարկողի և թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև, շահերի բախման բացակայության դեպքում, նշվում է դրույթ այդ մասին:

56. ***«ԲԱՆԿԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԹՈՂԱՐԿՈՂԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Բանկի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝

ա. փոխկապակցված անձ հանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնները՝ նշելով պաշտոնը և այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ),

բ. փոխկապակցված անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա կողմից իրականացվող հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը, այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ):

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:

2) ***Թողարկողի նշանակալից մասնակիցների վերաբերյալ (բացառությամբ այն մասնակիցների, որոնց պատկանում է բանկի բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսը),*** մասնավորապես՝

ա. նշանակալից մասնակիցներ հանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի կառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնները՝ նշելով պաշտոնը և այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ),

բ. նշանակալից մասնակիցներ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա կողմից իրականացվող հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը, այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը (տոկոսային արտահայտությամբ):

57. ***«ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում սույն կետը լրացվում է ըստ կիրառելիության).

1) արժեթղթի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),

2) արդյոք արժեթուղթը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված է, թե ոչ, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված լինելու դեպքում՝ կարգավորվող շուկայի անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, յուրաքանչյուր ձևի, դասի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում),

3) յուրաքանչյուր դասի արժեթղթի համար թողարկված կամ տեղաբաշխված արժեթղթերի ընդհանուր ծավալը և արժեթղթերի քանակը,

4) արժեթղթերի մարման ժամկետները (առկայության դեպքում),

5) տվյալ դասի և ձևի արժեթղթերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները,

6) կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող (թույլատրված) արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար եկամուտների (շահաբաժինների) վճարման պայմանները և չափը՝ ավարտված վերջին 2 տարիների համար: Մանրամասն նկարագրել այն դեպքերը, երբ արժեթղթերի դիմաց վճարումները սահմանափակվել են կամ կարող են սահմանափակվել: Առանձին նշել.

ա. շահույթի առկայության պարագայում եկամուտների (շահաբաժինների) չվճարման դեպքերը և չվճարման պատճառները,

բ. միջանկյալ եկամուտների չափը, եթե ընթացիկ տարում թողարկողը միջանկյալ վճարումներ է իրականացրել,

7) արժեթղթերի մասին շուկայական տեղեկություններ, մասնավորապես, եթե բանկի արժեթղթերի վաճառքը կատարվում է ֆոնդային բորսայում, ապա նշվում են բանկին հայտնի՝ դրանց վաճառքի ամենաբարձր և ամենացածր գները վերջին 2 տարիների համար,

8) համառոտ նկարագրություն թողարկված արժեթղթերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետգնման դեպքերի և պատճառների, ժամկետների, ինչպես նաև դրանց արդյունքների վերաբերյալ:

58. ***«ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ»*** բաժնում ներկայացվում են արժեթղթերի թողարկմանն առնչվող առավելա-գույնը 3 տարի վաղեմության ժամկետ ունեցող որոշումները և պայմանագրերը կամ դրանց պատճենները, այդ թվում՝

1) բանկի կանոնադրության պատճենը,

2) բանկի արժեթղթերով նախատեսված պարտավորությունները կամ դրանց մի մասը երաշխավորող անձի (առկայության դեպքում) կողմից տրված երաշխավորագրի պատճենը,

3) ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ֆինանսական հաշվետվություն-ների աուդիտի եզրակացության պատճենները,

4) այն պայմանագրերի պատճենները, որոնք թողարկողը կնքել է ներդրումային ծառայություններ մատուցող անձի (այդ թվում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի) հետ,

5) ազդագրում օգտագործվող կամ այդ նպատակով ստացած որևէ անձի (հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ այլ փորձագետի) ստորագրված մասնագիտական կարծիքը և այդ կարծիքն օգտագործելու մասին գրավոր համաձայնությունը,

6) գույքի գրավով ապահովված պարտատոմսերի դեպքում ապահովվածությունը հավաստող փաստաթղթերի պատճենը,

7) այլ փաստաթղթեր (բանկի հայեցողությամբ):

ՄԱՍ IV. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ VIII. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ

ԳԼՈՒԽ 21. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

59) Բաժնետոմսերի առևտրի ազդագիրը կազմված է հետևյալ մասերից.

1) տիտղոսաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

2) ամփոփաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի 11-րդ գլխի,

3) կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի 22-րդ գլխի,

4) թողարկողի վերաբերյալ տեղեկություններ բաժնետոմսերի համար՝ համաձայն սույն կանոնակարգի 13-րդ գլխի:

ԳԼՈՒԽ 22. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

60. Առևտրի ազդագրի «Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ» բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Ընդհանուր տեղեկություններ***, մասնավորապես՝

ա. բաժնետոմսերի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),

բ. բաժնետոմսերի տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում),

գ. կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող բաժնետոմսերի ընդհանուր ծավալը, քանակը,

դ. կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող մեկ բաժնետոմսի անվանական արժեքը, արժույթը,

ե. փոխարկելի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նշվում են այն արժեթղթերը և դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, որոնց պետք է փոխարկվեն թողարկվող բաժնետոմսերը, փոխարկման ընթացակարգը,

զ. կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող բաժնետոմսերի ձեռքբերման սահմանափակումները (առկայության դեպքում), որոնք սահմանված են թողարկողի կանոնադրությամբ կամ օրենքով:

2) ***Շահաբաժինների վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝ շահաբաժինների չափը կամ դրա որոշման կարգը, վճարման պայմանները (մասնավորապես՝ վճարման պարբերականությունը, այն վայրերն ու կազմակերպությունների անվանումները, որտեղ բաժնետոմսերի սեփականատերերը կարող են ստանալ իրենց շահաբաժինները, արտոնյալ բաժնետոմսերի ամրագրված շահաբաժինների չափը), շահաբաժնի ստացման իրավունքի սահմանափակումները, ինչպես նաև ոչ ռեզիդենտներին տրվող շահաբաժինների վճարման ընթացակարգը (առկայության դեպքում):

3) ***Տվյալ դասի և ծևի բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները***, որոնք սահմանվում են թողարկողի կանոնադրությամբ և (կամ) թողարկման մասին որոշմամբ, մասնավորապես՝ բաժնետոմսերով հավաստվող ձայնի իրավունքի, նույն դասի բաժնետոմսերի բաժանորդագրման դեպքում արտոնությունների վերաբերյալ, բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի, թողարկողի շահույթի մեջ մասնակցության իրավունքի վերաբերյալ, լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքի վերաբերյալ:

4) ***Այն կազմակերպությունների*** կազմակերպական-իրավական ձևը, ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը և կապի այլ միջոցները, որոնք իրականացնում են բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումը:

ԲԱԺԻՆ IX. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ

ԳԼՈՒԽ 23. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

61. Պարտատոմսերի առևտրի ազդագիրը կազմված է հետևյալ մասերից.

1) Տիտղոսաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

2) Ամփոփաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի 15-րդ գլխի,

3) Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի 24-րդ գլխի,

4) Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ պարտատոմսերի համար՝ համաձայն սույն կանոնակարգի 17-րդ գլխի:

ԳԼՈՒԽ 24. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

62. Ազդագրի «Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ» բաժնում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

1) ***Ընդհանուր տեղեկություններ,*** մասնավորապես՝

ա. պարտատոմսերի դասը և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային),

բ. պարտատոմսի տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում),

գ. կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը, քանակը,

դ. կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող մեկ պարտատոմսի անվանական արժեքը, արժույթը,

ե. փոխարկելի պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում նշվում են այն արժեթղթերը և դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, որոնց պետք է փոխարկվեն թողարկվող պարտատոմսերը, փոխարկման ընթացակարգը,

զ. ապահովված պարտատոմսերի դեպքում ապահովման միջոցի վերաբերյալ տեղեկություններ,

է. պարտատոմսերի մարման, ներառյալ, եթե նախատեսվում է պարտատոմսերի վաղաժամկետ մարում, վաղաժամկետ մարման պայմանները,

ը. կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող ներկայացվող պարտատոմսերի ձեռքբերման սահմանափակումները (առկայության դեպքում), որոնք սահմանված են թողարկողի կանոնադրությամբ կամ օրենքով:

2) ***Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները*** (ներառյալ՝ իրավունքների իրականացման կարգը):

3) ***Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ,*** մասնավորապես՝ եկամուտների չափը կամ դրա որոշման կարգը, վճարման պայմանները

(վճարման պարբերականությունը, այն վայրերն ու կազմակերպությունների անվանումները, որտեղ պարտատոմսերի սեփականատերերը կարող են ստանալ իրենց եկամուտները), ինչպես նաև ոչ ռեզիդենտներին տրվող եկամուտների վճարման ընթացակարգը (առկայության դեպքում):

4) ***Այն կազմակերպությունների*** կազմակերպական-իրավական ձևը, ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը և կապի այլ միջոցները, որոնք իրականացնում են պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումը:

ԲԱԺԻՆ X. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԿԱՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ) ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ

ԳԼՈՒԽ 25. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԿԱՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ) ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

63. Բանկերի կողմից թողարկված արժեթղթերի առևտրի ազդագիրը կազմված է հետևյալ մասերից.

1) Տիտղոսաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

2) Ամփոփաթերթ՝ համաձայն սույն կանոնակարգի 19-րդ գլխի,

3) Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ բանկերի համար (մասնավորապես՝ բաժնետոմսերի՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության դեպքում առևտրի ազդագրում ներառվում են սույն կանոնակարգի 22-րդ գլխով սահմանված տեղեկությունները, իսկ պարտատոմսերի դեպքում՝ սույն կանոնակարգի 24-րդ գլխով սահմանված տեղեկությունները),

4) Բանկի վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի 19-րդ գլխի:

ՄԱՍ V. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱԺԻՆ XI. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԳԼՈՒԽ 26. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Հաշվետու թողարկողների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվական ձևերն են.

1) ***եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ***, որոնք Կենտրոնական բանկ են ներկայացվում հաշվետու եռամսյակի ավարտից հետո 45 օրվա ընթացքում (բացառությամբ բանկերի, որոնք ներկայացնում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների համաձայն): Հաշվետվություններ ներկայացվում են առաջին 3 եռամսյակների համար, չորրորդ եռամսյակի համար հաշվետվություն չի ներկայացվում:

2) ***տարեկան հաշվետվություն***, որը Կենտրոնական բանկ է ներկայացվում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը ներառյալ (բացառությամբ բանկերի, որոնք ներկայացնում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների համաձայն):

65. Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այն ներկայացվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

66. Եռամսյակային հաշվետվությունները ներառում են եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների տիտղոսաթերթը՝ համաձայն հավելված 5-ի, և ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն սույն կանոնակարգի 13-րդ գլխի 30-րդ կետի 1-ին ենթակետի (բաժնետոմսերի համար), սույն կանոնակարգի 17-րդ գլխի 42-րդ կետի 1-ին ենթակետի (պարտատոմսերի համար) կամ սույն կանոնակարգի 20-րդ գլխի 54-րդ կետի 1-ին ենթակետի (բանկերի կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի կամ պարտատոմսերի) համար):

67. Տարեկան հաշվետվությունը ներառում է տարեկան հաշվետվության տիտղոսաթերթը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 5-ի, և սույն կանոնակարգի 8-րդ (բաժնետոմսերի համար), 9-րդ (պարտատոմսերի համար) կամ 10-րդ (բանկերի կողմից թողարկված արժեթղթերի համար) բաժիններում ներկայացված ազդագրում պարունակվող տեղեկությունները (բացառությամբ տիտղոսաթերթի)՝ փոփոխված: Ընդ որում, հաշվետվությունում ներառվում է դրույթ առ այն, որ տվյալ տեղեկությունը փոփոխվել է նախորդ տարեկան հաշվետվության համեմատությամբ (առաջին անգամ տարեկան հաշվետվություն ներկայացնելու դեպքում՝ առևտրի ազդագրի համեմատությամբ):

68. Հաշվետու թողարկողների կողմից հաշվետվությունները ներկայացվում են Կենտրոնական բանկ թղթային կրիչով (1 օրինակ) և ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգի միջոցով (ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով) կամ առկայության դեպքում՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Այդ համակարգերի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային փոստով կամ մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով համակարգի խափանման վերաբերյալ գրություն: Հաշվետվությունների ընդունման համակարգով, Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, էլեկտրոնային փոստով, մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով հաշվետվությունները ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են հետևյալ ձևով՝

1) եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների համար՝ XXXXX-001-fin.xxx, որտեղ՝ XXXXX-ը Կենտրոնական բանկի կողմից թողարկողին շնորհված կոդն է, xxx-ը ֆայլի տեսակն է: Եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են պաշտպանված ֆայլերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական հաշվետվությունները կարող են ներկայացվել նաև այլ ձևերով՝ Կենտրոնական բանկի հետ նախնական համաձայնեցմամբ.

2) տարեկան հաշվետվությունների համար՝ XXXXX-002.xxx, որտեղ՝ XXXXX-ը Կենտրոնական բանկի կողմից թողարկողին շնորհված կոդն է, xxx-ը ֆայլի տեսակն է: Տարեկան հաշվետվություններում ներառվող ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են առանձին պաշտպանված ֆայլով (բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական հաշվետվությունները կարող են ներկայացվել նաև այլ ձևերով՝ Կենտրոնական բանկի հետ նախնական համաձայնեցմամբ)՝ կոդավորելով XXXXX-002-fin.xxx:

69. Հաշվետվությունների թղթային կրիչով օրինակը կարվում և վավերացվում է թողարկողի կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի կնիքով, լրացվում է տպագրական եղանակով և համարակալվում:

Սույն գլխում նշվածից բացի այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չներկայացված:

70. Հաշվետվություններում ներառվող այն տեղեկատվությունը, որը թողարկողի կողմից համարվում է գաղտնի, Կենտրոնական բանկ է ներկայացվում համաձայն սույն կանոնակարգի 30-րդ գլխի:

71. Հաշվետու թողարկողները սույն գլխով սահմանված հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո անհապաղ (բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը) պետք է դրանք հրապարակեն էլեկտրոնային եղանակով՝ հաշվետու թողարկողի ինտերնետային կայքում: Հաշվետու թողարկողի հայեցողությամբ սույն գլխով սահմանված հաշվետվությունները կարող են հրապարակվել նաև այլ ձևերով:

72. Ի հավելումն սույն կանոնակարգի 26-րդ գլխի 64-րդ կետով սահմանված հաշվետվությունների հրապարակման՝ հաշվետու թողարկողները յուրաքանչյուր տարի՝ տարեկան հաշվետվությունը հրապարակելուց հետո, 5 օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով՝ իրենց ինտերնետային կայքում հրապարակում են իրենց կողմից արդեն իսկ հրապարակված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6-ի:

ԲԱԺԻՆ XII. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 27. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՂ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

73. Հաշվետու թողարկողը իրեն և իր կողմից թողարկված արժեթղթերին վերաբերող էական փաստերի և տեղեկությունների (սույն կանոնակարգի 77-րդ (բաժնետոմսերի

համար) և սույն կանոնակարգի 80-րդ (պարտատոմսերի համար) կետերում ներառվող էական փաստերի և տեղեկությունների փոփոխությունից հետո անհապաղ (բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը) դրանք պետք է հրապարակի էլեկտրոնային եղանակով՝ իր ինտերնետային կայքում: Հաշվետու թողարկողի հայեցողությամբ դրանք կարող են հրապարակվել նաև այլ ձևերով:

74. Հաշվետու թողարկողը սույն գլխի 77-րդ (բաժնետոմսերի համար) կամ 80-րդ (պարտատոմսերի համար) կետերով նշված էական փաստերի և տեղեկությունների փոփոխության դեպքում դրանք ներառող փաստաթուղթն անհապաղ (բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը) ներկայացնում է Կենտրոնական բանկ և այն շուկայի օպերատորին, որտեղ առևտրին թույլատրված են տվյալ արժեթղթերը:

75. Հաշվետու թողարկողները 77-րդ (բաժնետոմսերի համար) կամ 80-րդ (պարտատոմսերի համար) կետերով նշված էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթուղթը Կենտրոնական բանկ են ներկայացնում թղթային կրիչով (1 օրինակ) և ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգի միջոցով (ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով) կամ առկայության դեպքում՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Այդ համակարգերի խափանման դեպքում ներկայացվում են էլեկտրոնային փոստով կամ մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով համակարգի խափանման վերաբերյալ գրություն: Հաշվետվությունների ընդունման համակարգով, Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, էլեկտրոնային փոստով, մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով ներկայացնելիս ֆայլը կոդավորվում է հետևյալ ձևով՝

1) XXXXX-003.xxx, որտեղ՝ XXXXX-ը Կենտրոնական բանկի կողմից թողարկողին շնորհված կոդն է, xxx-ը ֆայլի տեսակն է:

ԳԼՈՒԽ 28. ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԱՄԱՐ)

76. Բաժնետոմսերի դեպքում էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթուղթը ներառում է.

1) տիտղոսթերթը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7-ի,

2) սույն կանոնակարգի 77-րդ կետում նկարագրվող տեղեկությունները (փոփոխության առկայության դեպքում): Նշված տեղեկությունները ներառվում են այն մանրամասնությամբ, որքանով ներառվել են առևտրի ազդագրում:

77. Էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթում պարունակվում են հետևյալ տեղեկությունները.

1) թողարկողի անվանման, գտնվելու վայրի, կապի միջոցների փոփոխության վերաբերյալ,

2) բաժնետոմսերով հավաստվող իրավունքների և պարտականությունների, շահաբաժինների վճարման չափի, վայրի, ամսաթվի և այլ պայմանների փոփոխության վերաբերյալ,

3) բաժնետերերի միջև կնքված ցանկացած պայմանագրերի վերաբերյալ, որը հավանական է, որ կազդի թողարկողի կամ թողարկողի մյուս բաժնետերերի վրա (տեղեկատվության թողարկողին հայտնի լինելու դեպքում),

4) վերակազմակերպման վերաբերյալ կառավարման մարմինների որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դատարանի կողմից թողարկողի դեմ նախածեռնված ցանկացած լուծարային և սնանկության վարույթի վերաբերյալ,

5) թողարկողի գործունեության ոլորտի փոփոխության, ներառյալ՝ նոր լիցենզիաների ձեռքբերման վերաբերյալ,

6) տարեկան և արտահերթ ժողովների գումարման վերաբերյալ, ներառյալ՝ ժողովների արձանագրությունները,

7) կանոնադրական կապիտալի փոփոխությունների վերաբերյալ,

8) կառավարմանը մասնակցող անձանց փոփոխությունների և նոր նշանակված անդամի վերաբերյալ տեղեկություններ,

9) նշանակալից մասնակիցների, փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ,

10) դատավարությունների վերաբերյալ, որտեղ թողարկողը հանդես է եկել որպես հայցվոր (քաղաքացիական հայցվոր) կամ պատասխանող (քաղաքացիական պատասխանող), կիրառված պատասխանատվության միջոցները (սույն տեղեկատվությունը ներկայացվում է դատարանի վճիռն ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ (բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը)),

11) թողարկողի սեփական արժեթղթերի՝ գնման կամ վաճառքի օպցիոնների կնքման վերաբերյալ և դրա իրականացման պայմանները (ծավալը, գինը, ամսաթիվը),

12) փոխկապակցված գործարքների վերաբերյալ,

13) այն գործարքների վերաբերյալ, որոնց արժեքը գերազանցում է թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը կամ 100 մլն դրամը,

14) բաժնետոմսերի հետգնման կամ ձեռքբերման որոշումների (ներառյալ՝ ծրագրերի) վերաբերյալ,

15) այլ տեղեկություններ (թողարկողի հայեցողությամբ), որոնք չեն պահանջվում սույն մասում, սակայն թողարկողի կարծիքով՝ սույն հաշվետվության շրջանակներում դրանց ներկայացումն անհրաժեշտ է:

78. Եթե սույն կանոնակարգի 77-րդ կետով նշված տեղեկությունների փոփոխությունները հանգեցնում են ընկերության կանոնադրության փոփոխությանը, ապա էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթին կից ներկայացվում է նաև կանոնադրության փոփոխության վերաբերյալ քաղվածքը, կամ եթե նոր կանոնադրություն է ընդունվել, ապա կցվում է նորը:

ԳԼՈՒԽ 29. ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ (ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՄԱՐ)

79. Պարտատոմսերի դեպքում էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթուղթը պարունակում է.

1) տիտղոսթերթը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7-ի,

2) սույն կանոնակարգի 80-րդ կետում նկարագրվող տեղեկությունները (փոփոխության առկայության դեպքում): Նշված տեղեկությունները ներառվում են այն մանրամասնությամբ, որքանով ներառվել են առևտրի ազդագրում:

80. Էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթում պարունակվում են հետևյալ տեղեկությունները.

1) թողարկողի անվանման, գտնվելու վայրի, կապի միջոցների փոփոխության վերաբերյալ,

2) պարտատոմսերով հավաստվող իրավունքների, եկամուտների վճարման չափի, վայրի, ամսաթվի և այլ պայմանների փոփոխության վերաբերյալ,

3) վերակազմակերպման վերաբերյալ կառավարման մարմինների որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դատարանի կողմից թողարկողի դեմ նախաձեռնված ցանկացած լուծարային և սնանկության վարույթի վերաբերյալ,

4) թողարկողի գործունեության ոլորտի փոփոխության, ներառյալ՝ նոր լիցենզիաների ձեռքբերման վերաբերյալ,

5) կանոնադրական կապիտալի փոփոխությունների վերաբերյալ,

6) կառավարմանը մասնակցող անձանց փոփոխությունների և նոր նշանակված անդամի վերաբերյալ տեղեկություններ,

7) նշանակալից մասնակիցների, փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ,

8) դատավարությունների վերաբերյալ, որտեղ թողարկողը հանդես է եկել որպես հայցվոր (քաղաքացիական հայցվոր) կամ պատասխանող (քաղաքացիական պատասխանող), կիրառված պատասխանատվության միջոցները (սույն տեղեկատվությունը ներկայացվում է դատարանի վճիռն ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ (բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը)),

9) փոխկապակցված գործարքների վերաբերյալ,

10) այն գործարքների վերաբերյալ, որոնց արժեքը գերազանցում է թողարկողի ակտիվների հավեկշռային արժեքի 10 տոկոսը կամ 100 մլն դրամը,

11) պարտատոմսերի ապահովման միջոցի փոփոխության, վաղաժամկետ մարման վերաբերյալ տեղեկություններ,

12) այլ տեղեկություններ (թողարկողի հայեցողությամբ), որոնք չեն պահանջվում սույն մասում, սակայն թողարկողի կարծիքով՝ սույն հաշվետվության շրջանակներում դրանց ներկայացումն անհրաժեշտ է:

81. Եթե սույն կանոնակարգի 80-րդ կետով նշված տեղեկատվությունների փոփոխությունները հանգեցնում են ընկերության կանոնադրության փոփոխությանը, ապա էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթին կից ներկայացվում է նաև կանոնադրության փոփոխության վերաբերյալ քաղվածքը, կամ եթե նոր կանոնադրություն է ընդունվել, ապա կցվում է նորը:

ՄԱՍ VI. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ XIII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 30. ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՆԻ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՄԵՆ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳԱՂՏՆԻ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

82. Յուրաքանչյուր թողարկող, հաշվետու թողարկող ազդագրում (առևտրի ազդագրում), հաշվետվության կամ էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթի մեջ ներառման ենթակա որևէ տեղեկություն, փաստաթուղթ կամ էական փաստ իրավունք ունի համարել գաղտնի (որպես առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող) և չբացահայտել այն: Այս դեպքում նշված տեղեկությունները կամ փաստաթղթերը ներկայացվում են միայն Կենտրոնական բանկ սույն գլխով սահմանված կարգով:

83. Ազդագրի (առևտրի ազդագրի), հաշվետվության կամ էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթի լրացման համար պատասխանատու անձը (այսուհետ՝ պատասխանատու անձ) կարող է գաղտնի տեղեկատվությունը չլրացնել ազդագրում (առևտրի ազդագրում), հաշվետվության կամ էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթի մեջ, իսկ գաղտնի փաստաթուղթը չկցել ազդագրին (առևտրի ազդագրին), հաշվետվությանը կամ էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթին: Այս դեպքում ազդագրի (առևտրի ազդագրի), հաշվետվության կամ էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթի համապատասխան մասում պետք է բացահայտվեն.

1) գաղտնի տեղեկատվության կամ փաստաթղթի գոյության փաստը, և

2) այն հանգամանքը, որ գաղտնի տեղեկատվությունը չի լրացվել ազդագրում (առևտրի ազդագրում), հաշվետվության կամ էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթի մեջ, և այդ մասին Կենտրոնական բանկ է ներկայացվել հավելված 8-ով սահմանված «Գաղտնիությունը հարգելու մասին» դիմում,

3) այն հանգամանքը, որ գաղտնի փաստաթուղթը չի կցվել ազդագրին (առևտրի ազդագրին), հաշվետվությանը կամ էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթղթին և ներկայացվել է միայն Կենտրոնական բանկ:

84. Թողարկողի (հաշվետու թողարկողի) կողմից գաղտնի համարվող տեղեկությունը, փաստաթուղթը կամ էական փաստը պետք է պարունակի «ԳԱՂՏՆԻ ՄԱՍ» նշումը և կցվի գաղտնիությունը հարգելու մասին դիմումին:

85. Գաղտնի համարվող տեղեկությունը, փաստաթուղթը կամ էական փաստը և դիմումը Կենտրոնական բանկ են ներկայացվում փակ ծրարով, որի վրա պետք է լինեն.

1) վերևի աջ անկյունում՝ «ԳԱՂՏՆԻ» նշագիրը և առաքողի ստորագրությունը (եթե պատասխանատու անձն իրավաբանական անձ է, ապա պետք է նաև վավերացված լինի կնիքով),

2) ներքևի ձախ անկյունում՝ պատասխանատու անձի կողմից լրացված՝ փաստաթղթի ներքին գրանցման համարը,

3) նշում այն մասին, թե ում է հասցեագրված,

4) պատասխանատու անձի անվանումը և գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը (հասցեն)):

86. Եթե պատասխանատու անձը ներկայացնում է պետական գաղտնիք համարվող տեղեկություններ, ապա ներկայացվող փակ ծրարի վերևի աջ անկյունում «ԳԱՂՏՆԻ» նշագրի փոխարեն պետք է լինի «ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ» կամ «ՀԱՏՈՒԿ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ» նշագիրը:

87. Փակ ծրարը Կենտրոնական բանկ է ներկայացվում այն աշխատանքային օրվա ընթացքում, երբ ներկայացվում է ազդագիրը (առևտրի ազդագիրը), հաշվետվությունը կամ էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթուղթը, որի համապատասխան մասում բացահայտվել է գաղտնի տեղեկատվության կամ փաստաթղթի գոյության փաստը:

88. Եթե պատասխանատու անձը չի պահպանել սույն կարգով սահմանված պահանջները, ապա գաղտնիության դիմումը ենթակա չէ քննարկման:

89. Ամեն դեպքում բավարարման է ենթակա հետևյալ տեղեկությունների գաղտնիությունը.

1) բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները,

2) պետական գաղտնիք համարվող տեղեկությունները:

90. Բավարարման են ենթակա նաև հրապարակման դեպքում անձի մրցակցությանը վնաս հասցնող տեխնիկական, կազմակերպչական կամ առևտրային տեղեկատվությունները, այդ թվում՝ արտադրության գաղտնիքները (նոու-հաու), եթե դրանք՝

1) որպես ամբողջություն կամ իր մասերի ճշգրիտ փոխդասավորվածությամբ և համախմբությամբ ընդհանրապես հայտնի կամ դյուրամատչելի չեն տվյալ կարգի տեղեկատվության հետ սովորաբար առնչվող անձանց համար,

2) երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունեն իրական կամ հնարավոր որոշակի առևտրային արժեք, բայց բացակայում են օրինական հիմքերով դրանց ազատորեն ստանալու հնարավորությունները,

3) օրինականորեն տնօրինող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ձեռնարկվել են տեղեկատվությունն առկա հանգամանքներում գաղտնի պահելու ողջամիտ քայլեր, որոնք կարող են արտահայտված լինել համապատասխան պայմանագրի կնքման և (կամ) դրա պայմանների ապահովման, նախազգուշական այլ միջոցների ձեռնարկման տեսքով՝ պահպանելով այն նույնականացման տեղեկակիրներում՝ փաստաթղթերի, համակարգչային ֆայլերի, տեսագրման և ձայնագրման ժապավենների, տվյալ տեղեկատվությունը մարմնավորող իրի տեսքով և այլն:

91. 90-րդ կետով սահմանված տեղեկությունների առարկա կարող են լինել հետազոտական և զարգացման ծրագրերը (RDP), մարքեթինգային ռազմավարությունը, գյուտը, արդյունաբերական նմուշը կամ օգտակար մոդելը, արտադրության եղանակները, քիմիական բանաձևերը, գծագրերը, փորձնական նմուշները, ապրանքի վաճառքի և բաշխման եղանակները, պայմանագրի ձևերը, գործարար ծրագրերը, պայմանագրային գների մանրամասնությունները (միավորի գին, արտադրանքի քանակ, գնի ձևավորման մեխանիզմներ և նման այլ տեղեկատվություն), սպառողների մասնագիտական գործունեության ոլորտները (պրոֆիլները), գովազդման ռազմավարությունը, մատակարարների կամ հաճախորդների ցուցակները, համակարգչային ծրագրային ապահովումները, տվյալների հիմնապաշարները (բազաները), վարկային կազմակերպության կողմից իր հաճախորդներին տրամադրված վարկերը և այլն:

92. Տվյալ ոլորտում անձի մրցունակության վնասը գնահատելիս Կենտրոնական բանկը հիմք է ընդունում նաև պատասխանատու անձի կողմից ներկայացված հիմնավորումները և դրանց արժանահավատ լինելու հավանականությունը:

93. Բավարար հիմնավորմամբ Կենտրոնական բանկը կարող է բավարարել նաև այնպիսի տեղեկությունների գաղտնիությունը, որոնք էական չեն, և հետևաբար, դրանց անմիջապես չհրապարակելը չի կարող վտանգել ներդրողների շահերը կամ տվյալ արժեթղթերի արդար գնագոյացումը: Ընդ որում՝ Կենտրոնական բանկը տեղեկությունը համարում է էական, եթե ողջամիտ ներդրողը կկարևորեր դա արժեթուղթը գնելու որոշումը կայացնելիս:

ԳԼՈՒԽ 31. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

94. Ազդագիրը հրապարակելուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան ազդագրի հրապարակմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, տեղաբաշխողը առնվազն իր ինտերնետային կայքում հրապարակում է հայտարարություն հրապարակային առաջարկի վերաբերյալ հետևյալ բովանդակությամբ.

1) թողարկողի անվանումը,

2) առաջարկվող արժեթղթերի դասը, ծավալը (հրապարակման պահին առկա տեղեկատվության սահմաններում),

3) հրապարակային առաջարկի նախատեսվող ժամանակահատվածը,

4) դրույթ, որ ազդագիրը հրապարակվել է,

5) այն հասցեները, որտեղից կարելի է ձեռք բերել ազդագիրը էլեկտրոնային տարբերակով, թղթային տարբերակով հրապարակման դեպքում նաև թղթային տարբերակով ձեռքբերման աղբյուրները,

6) հայտարարության ամսաթիվը:

ԳԼՈՒԽ 32. ԳՈՎԱԶԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

95. Հրապարակային առաջարկին կամ կարգավորվող շուկայի առևտրին թույլտվության վերաբերյալ կարող է գովազդել թողարկողը, կարգավորվող շուկայի առևտրին թույլտվություն հայցող անձը, արժեթղթերի տեղաբաշխմանը մասնակցող անձինք, ինչպես նաև նրանց պատվերով՝ գովազդային գործակալությունը:

96. Գովազդային նյութը առնվազն պետք է ներառի.

1) թողարկողի անվանումը,

2) արժեթղթի դասը,

3) մեկ արժեթղթի անվանական արժեքը,

4) արժեթղթերի տեղաբաշխման կամ առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (հրապարակային առաջարկի դեպքում),

5) արժեթղթերի տեղաբաշխման գինը,

6) ապահովված պարտատոմսերի դեպքում ապահովման միջոցի վերաբերյալ տեղեկություններ,

7) եկամտաբերությունը (պարտատոմսերի դեպքում), ֆիքսված տոկոսը (արտոնյալ բաժնետոմսերի դեպքում),

8) ազդագրի (առևտրի ազդագրի) հրապարակման և ձեռքբերման վայրեր,

9) դրույթ ազդագրի (առևտրի ազդագրի) Կենտրոնական բանկի կողմից գրանցման մասին,

10) այլ տեղեկություններ (թողարկողի հայեցողությամբ):

ԳԼՈՒԽ 32. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

97. Թողարկողը արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները Կենտրոնական բանկ է ներկայացնում համաձայն սույն կանոնակարգի հավելված 9-ով հաստատված ձևի՝ կատարելով համապատասխան նշագրում:

98. Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային փոստով (առկայության դեպքում՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով), մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով, ինչպես նաև թղթային կրիչով՝ մեկ օրինակ, որը կնքվում (առկայության դեպքում) և ստորագրվում է թողարկողի կամ նրա լիազորված անձի կողմից:

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

ԱԶԴԱԳԻՐ (ԱՌԵՎՏԻ ԱԶԴԱԳԻՐ) ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)

կազմակերպական - իրավական ձևը
գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)

Թողարկման նպատակը՝ _____

_____

արժեթղթերի դասը՝ _____

արժեթղթերի ձևը՝ _____

արժեթղթերի քանակը՝ _____

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ _____

արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը _____

Առդիր՝ ___ էջ:

Դիմումը ներկայացնող անձ՝

_____

(կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները, գտնվելու վայրը)

__ _____ 200_ թ.

Կ.Տ.

Հավելված 2

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

_____ կողմից ազդագրի հրապարակման պահանջից բացառությամբ
(թողարկողի անվանումը)
հրապարակային առաջարկի իրականացման մասին Կենտրոնական բանկին տեղեկացում

Տեղեկացնում ենք, որ _____ _____ _____ 200__թ-ին
(թողարկողի անվանումը)

իրականացրել է ազդագրի հրապարակման պահանջից Օրենքով սահմանված հետևյալ բացառությամբ հրապարակային առաջարկ

- ❑ առաջարկն արվում է այն ներդրողներին, որոնցից յուրաքանչյուրի կողմից ձեռք բերվող արժեթղթերի ընդհանուր արժեքը, վաճառքի գնով առաջարկի պայմանների համաձայն, գերազանցում է _____ դրամը՝ յուրաքանչյուր առանձին առաջարկի դեպքում.
- ❑ առաջարկվող արժեթղթերի միավոր անվանական արժեքը գերազանցում է _____ դրամը.
- ❑ առաջարկվող արժեթղթերի ընդհանուր արժեքը թողարկման կամ վաճառքի գնով 12 ամսվա ընթացքում չի գերազանցում _____ դրամը.

Արժեթղթի դասը (տեսակը) _____

Արժեթղթի քանակը _____

Միավոր անվանական արժեքը _____

Ընդհանուր անվանական արժեքը _____

_____ _____ _____
(թողարկողի իրավասու մարմնի ղեկավարի պաշտոնը) *(ստորագրությունը)* *(անուն, ազգանունը)*

_____
(թողարկողի գտնվելու վայրը և կապի միջոցները)

«__» _____ _____ թ.
(տեղեկացման ամսաթիվը)

Հավելված 3

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

ՇԱՀԱԳՐԳԻՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____

Հարգելի _____

_____
(թողարկողի (կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն հայցող անձի) ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը (անունը, ազգանունը))

որոշում է կայացրել շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթղթի հիման վրա՝ ազդագրի (առևտրի ազդագրի) բացառությամբ,

- ❑ իրականացնել _____ (ընկերության անվանումը) բաժնային արժեթղթերի ձեռքբերման կապակցությամբ փոխանակման միջոցով առաջարկվող արժեթղթերի հրապարակային առաջարկ
- ❑ իրականացնել _____ (ընկերության անվանումը) ընկերության միացման կապկցությամբ նրա բաժնետերերին առաջարկվող արժեթղթերի հրապարակային առաջարկ

- ❑ դիմել _____ (ընկերության անվանումը) բաժնային արժեթղթերի ձեռքբերման կապակցությամբ փոխանակման միջոցով առաջարկվող արժեթղթերի՝ կարգավորվող շուկայի առևտրն թույլտվության համար
- ❑ դիմել _____ (ընկերության անվանումը) ընկերության միացման կապակցությամբ նրա բաժնետերերին առաջարկվող արժեթղթերի՝ կարգավորվող շուկայի առևտրին թույլտվության համար

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Առդիր՝ _____ էջ:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ Ձեր նախնական համաձայնությունը:

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ կից ներկայացվող փաստաթղթերում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ:

Ստորագրող անձինք՝

_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*

Դիմումը ներկայացնող անձ՝

_____ Կ.Տ.
(կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները, գտնվելու վայրը)

Հավելված 4

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

ԱԶԴԱԳԻՐ (ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳԻՐ)
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)
կազմակերպական - իրավական ձևը
գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)

արժեթղթերի դասը՝ _____

արժեթղթերի ձևը՝ _____

արժեթղթերի քանակը՝ _____

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ _____

արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝ _____

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ՋԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ:

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը:

Ստորագրող անձինք՝

_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*

Ստորագրությունները հավաստում եմ (ստորագրությունները հավաստվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը ՝ _____

Կ.Տ.

Հավելված 5

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- ❑ Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն
- ❑ Տարեկան հաշվետվություն

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)

կազմակերպական - իրավական ձևը

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)

____ հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ _____

արժեթղթերի քանակը՝ _____

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ _____

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը:

Ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*

Ստորագրությունները հավաստում եմ (ստորագրությունները հավաստվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*

__ _____ 200_ թ.

Կ.Տ.

Հավելված 6

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)
կազմակերպական - իրավական ձևը
գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)

Թիվ	Հրապարակված տեղեկատվության անվանումը	Ձեռքբերման աղբյուրը

__ _____ 200_ թ.

Հավելված 7

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)
կազմակերպական - իրավական ձևը
գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)
____ հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ _____

արժեթղթերի քանակը՝ _____

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ _____

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը:

Ստորագրող անձինք՝

_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*

Ստորագրությունները հավաստում եմ (ստորագրությունները հավաստվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

_____	_____	_____	_____
(անուն, ազգանուն)	*(պաշտոն)*	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*

__ _____ 200_ թ.

Կ.Տ.

Հավելված 8

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ հարգել կից ներկայացվող հետևյալ տեղեկատվության (փաստաթղթերի) գաղտնիությունը.

Հ/հ	Կից ներկայացվող տեղեկատվության (փաստաթղթերի) ցանկը	Էջերի քանակը	Հաշվետվության կամ ազդագրի անվանումը և ներկայացման ամսաթիվը, որում բաց թողնված է տվյալ տեղեկատվությունը (փաստաթուղթը)	Ժամանակահատվածը, որի ընթացքում կից ներկայացվող տեղեկատվությունը (փաստաթուղթը) համարվում է գաղտնի (օր/ամիս/տարի)

Մանրամասն հիմնավորում, թե ինչու և ինչ հանգամանքների առկայության պատճառով է կից ներկայացվող տեղեկատվության (փաստաթղթի) հրապարակման բացառումն անհրաժեշտ ներդրողների շահերը պաշտպանելու տեսակետից
Անձի անունը, ազգանունը և հեռախոսի համարը, ում հետ կարելի է կապվել ներկայացվող տեղեկատվության կամ փաստաթղթի առնչությամբ

_____

(դիմողի անունը, ազգանունը, ստորագրությունը)

__ _____ 200_ թ.

Հավելված 9

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 Հավելվածի

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղաբաշխման ընթացքի վերաբերյալ Տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ

_____

(թողարկողի ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը (անունը, ազգանունը))

_____

(թողարկողի գտնվելու վայրը և փոստային հասցեն, կապի միջոցները)

Արժեթղթի դասը (տեսակը) [ ]

Հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը՝ /__ /____ /_____/ ավարտը՝ /__ / ____ /_____/
(ամսաթիվը) *(ամսաթիվը)*

Տեղաբաշխման ժամկետները՝ սկիզբը՝ /____ /____ /_____/ ավարտը՝ /____ /____ /_____/
(ամսաթիվը) *(ամսաթիվը)*

ՎԱՃԱՌՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐ

Վճարման ձևը	Միանվագ վճարում		Տարաժամկետ վճարում	
	քանակը	գումարը (նշելով արժույթը)	քանակը	փաստացի վճարված գումարը (նշելով արժույթը)
ՀՀ արժույթով				
արտարժույթով				
գույքով,				
այդ թվում՝ արժեթղթերով				

Վաճառված արժեթղթերի ընդհանուր քանակը _____

Հրապարակային տեղաբաշխման գինը՝ նշելով արժույթը _____

Վաճառված արժեթղթի միջին գինը՝ նշելով արժույթը _____

Պատասխանատու անձ՝ _____ _____ _____
(անուն, ազգանուն) *(պաշտոն)* *(ստորագրություն)*

__ _____ 200_ թ.

Ծանոթություն

Եթե արժեթղթերի դիմաց վճարումները կատարվել են մեկից ավելի արժույթով, ապա վաճառված արժեթղթերի միջին գինը և հրապարակային տեղաբաշխման գինը անհրաժեշտ է նշել ըստ յուրաքանչյուր արժույթի:

*«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ը՝ համաձայն Հավելվածի՝ (այսուհետ՝ Կանոնակարգ 4/06):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշմամբ հաստատված 1-ին գլխի 1.1.8 ենթակետը, 2-րդ գլուխը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
13 մարտի 2008 թ., N 69-Ն

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 69-Ն որոշման

«ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ** ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԱՆՑ՝ ՈՐՊԵՍ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/06

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «դ» ենթակետով սահմանված անձանց որակավորված ներդրողներ համարելու չափանիշները, ինչպես նաև որակավորված ներդրողների գրանցման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) ***«Օրենք»***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

2) ***«Զուտ եկամուտը»*** ֆիզիկական անձի համախառն եկամուտն է՝ նվազեցրած հարկերը,

3) ***«Տեղեկատվական բազա»***՝ Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների վերաբերյալ տեղեկությունները ներառող ցուցակ,

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. մարտի 11-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.04.08 թ. (ՀՀԳՏ N12 (286), 15.04.08):
*** Պաշտոնական հրապարակման մեջ վերնագրում սպրդել է տեխնիկական վրիպակ:*

4) ***«Որակավորված ներդրող»***՝ Օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «ա-գ» և «ե» ենթակետերում նշված անձինք, ինչպես նաև այն անձը, որը որակավորված ներդրող կհամարվի սույն կանոնակարգի Գլուխ 6-ի համաձայն:

5) Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Անձը համարվում է Օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «դ» և «ե» ենթակետերով սահմանված որակավորված անձ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում սույն կանոնակարգի համաձայն գրանցվելուց հետո:

4. Ֆիզիկական անձը, որպես որակավորված ներդրող, Տեղեկավական բազայում գրանցվելու համար պետք է համապատասխանի սույն կանոնակարգի Գլուխ 6-ով սահմանված չափանիշներին:

5. Ֆիզիկական անձը ինքնուրույն է գնահատում սույն կանոնակարգի Գլուխ 6-ով սահմանված չափանիշներին համապատասխանությունը: Յուրաքանչյուր իրավաբանական անձ ինքնուրույն է որոշում կայացնում Տեղեկատվական բազայում որպես որակավորված ներդրող գրանցվելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 4. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Անձը որակավորված ներդրող համարվելու համար գրանցվում է Կենտրոնական բանկում՝ ներկայացնելով դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի (ֆիզիկական անձի համար) կամ հավելված 2-ի (իրավաբանական անձի համար):

7. Անձը Տեղեկատվական բազայի գրանցումից դուրս գալու համար կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի:

8. Ֆիզիկական անձի դեպքում դիմումը պետք է ստորագրվի տվյալ անձի կամ նրա լիազոր անձի կողմից:

9. Իրավաբանական անձի դեպքում դիմումը պետք է ստորագրվի գործադիր տնօրենի կամ լիազորված այլ անձի կողմից:

10. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

ԳԼՈՒԽ 5. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԿԱՄ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

11. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերում սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է անձին Տեղեկատվական բազայում կամ չի գրանցում կամ հանում է անձին գրանցումից:

12. Կենտրոնական բանկը չի գրանցում անձին որպես որակավորված ներդրող, եթե սույն կանոնակարգի հավելված 1-ով կամ հավելված 2-ով նախատեսված դիմումը թերի է լրացված:

13. Սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված ժամկետում դիմող անձի՝ որպես որակավորված ներդրող գրանցման կամ գրանցման մերժման որոշում չկայացնելու դեպքում անձը համարվում է գրանցված որպես որակավորված ներդրող:

14. Սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված ժամկետում դիմող անձին Տեղեկատվական բազայից գրանցումից հանելու մասին որոշում չկայացնելու դեպքում անձը համարվում է Ռեգիստրում գրանցումից հանված:

15. Դիմող անձը կարող է տեղեկանալ որպես որակավորված ներդրող գրանցվելու կամ գրանցումից դուրս գալու վերաբերյալ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվող Տեղեկատվական բազայից՝ տվյալ անձի կողմից համապատասխան դիմումի ներկայացմանը հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

16. Որպես որակավորված ներդրող գրանցման որոշումն ուժի մեջ է մինչև դիմումի ներկայացմանը հաջորդող տարվա հունիսի 30-ը:

ԳԼՈՒԽ 6. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

17. Որակավորված ներդրող են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք գրանցվել են Տեղեկատվական բազայում որպես այդպիսին՝ համաձայն սույն կանոնակարգի և բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

1) անձը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ,

2) ֆիզիկական անձի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը, կամ ֆիզիկական անձի զուտ եկամուտը դիմումի ներկայացմանը նախորդող հաշվետու տարվա ընթացքում գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

3) ֆիզիկական անձը ֆինանսական ոլորտում ունի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է արժեթղթերում ներդրումների հետ կապված գիտելիքներ:

18. Որակավորված ներդրող են համարվում այն իրավաբանական անձինք, որոնք գրանցվել են որպես որակավորված ներդրող՝ համաձայն սույն կանոնակարգի:

ԳԼՈՒԽ 7. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆ

19. Կենտրոնական բանկը վարում է Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազան: Տեղեկատվական բազան ենթակա է հրապարակման Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

20. Տեղեկատվական բազայում ֆիզիկական անձանց համար պահվելու է հետևյալ տեղեկատվությունը. անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսը, նույնականացնող համարը, էլեկտրոնային հասցեն:

21. Տեղեկատվական բազայում իրավաբանական անձանց համար պահվելու է հետևյալ տեղեկատվությունը. ընկերության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, նույնականացնող համարը, էլեկտրոնային հասցեն:

22. Տեղեկատվական բազայում գրանցված անձի վերաբերյալ տեղեկությունները փոփոխվելու դեպքում անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ խնդրելով կատարել համապատասխան փոփոխություններ:

23. Կենտրոնական բանկը գրանցված որակավորված ներդրողների վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունները ներառում է Տեղեկատվական բազայում դիմումը ստանալու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում:

24. Կենտրոնական բանկը պատասխանատու է միայն Տեղեկատվական բազայում որակավորված ներդրողներին պատշաճ գրանցելու համար: Կենտրոնական բանկը պատասխանատու չէ որակավորված ներդրողների՝ սույն կանոնակարգի Գլուխ 6-ով սահմանված չափանիշներին համապատասխանության արժանահավատության ստուգման համար:

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 69-Ն որոշմամբ հաստատված
«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06 հավելվածի

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

ՄԱՍ Ա

Կենտրոնական բանկի նախագահին

Հարգելի _____

Ես՝ _____, հավաստիացնում եմ, որ բավարարում եմ ստորև
(որակավորված անձի ֆիզիկական անձի անունը, ազգանունը)
նշված չափանիշներից առնվազն երկուսին (բավարարող չափանիշների առջև դրված ազատ վանդակներում կատարվում է նշում).

- ❑ դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել եմ 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ
- ❑ իմ արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը, կամ ֆիզիկական անձի զուտ եկամուտը դիմումի ներկայացմանը նախորդող հաշվետու տարվա ընթացքում գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը
- ❑ ֆինանսական ոլորտում ունեմ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է արժեթղթերում ներդրումների հետ կապված գիտելիքներ

Հավաստիացնում եմ, որ տեղյակ եմ որպես որակավորված ներդրող գրանցվելու հետևանքներին՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Մասնավորապես, ես տեղյակ եմ, որ «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում» գրանցվելու դեպքում ինձ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում բացակայում է ազդագիր հրապարակելու թողարկողի պարտավորությունը: Հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում ինձ վրա:

Խնդրում եմ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ինձ որպես որակավորված ներդրող:

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) անուն, ազգանուն _____

Հավաստիացնում եմ, որ լիազորված եմ _____ -ի անձի անունից
(որակավորված անձի իրավաբանական անձի անվանումը)

Կենտրոնական բանկ ներկայացնել նրան որպես որակավորված ներդրող գրանցելու նպատակով սույն դիմումը (սույն տողը լրացվում է լիազոր անձի առկայության դեպքում):

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրություն (դիմումի՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրությունը անհրաժեշտ չէ):

_____

Ամսաթիվ __ _____ ____

ՄԱՍ Բ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկը տեղադրելու է ՄԱՍ Բ-ում բերված տեղեկատվությունը «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում», որը ենթակա է հրապարակման Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում» գրանցվելու դեպքում Ձեզ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում թողարկողը պարտավոր չէ ազդագիր հրապարակել: Հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում Ձեզ վրա:

Ձեզ սույն փաստաթղթում նշված հասցեով կուղարկվի գրություն, որով կնշվի որ Դուք ընդգրկված եք «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում»:

Որպես որակավորված ներդրող գրանցումը ուժի մեջ է մինչև դիմումի ներկայացմանը հաջորդող հունիսի 30-ը, եթե Դուք չեք դիմել ավելի վաղ ժամկետում ուժը կորցած ճանաչելու համար:

Տեղեկատվական բազայում Ձեր վերաբերյալ տեղեկությունները փոփոխվելու դեպքում Դուք կարող եք դիմել Կենտրոնական բանկ՝ խնդրելով կատարել համապատասխան փոփոխություններ:

Որակավորվող ֆիզիկական անձի
անունը, ազգանունը

Բնակության վայրը՝ ներառյալ
հեռախոսը (այստեղ կարող է գրվել
փոստային արկղը կամ ցանկացած
հասցեն, որի միջոցով կարելի է անձի
հետ կապ հաստատել՝ կապված
արժեթղթերի առաջարկի հետ):

էլեկտրոնային հասցե (եթե առկա է)

Ամսաթիվ

Հավելված 2

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 69-Ն որոշմամբ հաստատված
«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06 հավելվածի

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ

ՄԱՍ Ա

Կենտրոնական բանկի նախագահին

Հարգելի _____

_____

(իրավաբանական անձի անվանումը)

որոշում է կայացրել որակավորված ներդրող գրանցվելու վերաբերյալ:

Հավաստիացնում ենք, որ տեղյակ ենք որպես որակավորված ներդրող գրանցվելու հետևանքներին՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Մասնավորապես՝ տեղյակ ենք, որ «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում» գրանցվելու դեպքում մեզ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում բացակայում է ազդագիր հրապարակելու թողարկողի պարտավորությունը: Հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում մեզ վրա:

Խնդրում եմ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել որպես որակավորված ներդրող:

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) անուն, ազգանուն _____

Հավաստիացնում եմ, որ լիազորված եմ _____ -ի անձի անունից
(որակավորված անձի իրավաբանական անձի անվանումը)

Կենտրոնական բանկ ներկայացնել նրան՝ որպես որակավորված ներդրող գրանցելու նպատակով սույն դիմումը (սույն տողը լրացվում է լիազոր անձի առկայության դեպքում):

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրություն (դիմումի՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրությունը անհրաժեշտ չէ) _____

Ամսաթիվ __ _____ ____

ՄԱՍ Բ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկը տեղադրելու է ՄԱՍ Բ-ում բերված տեղեկատվությունը «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում», որը ենթակա է հրապարակման Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում» գրանցվելու դեպքում Ձեզ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում թողարկողը պարտավոր չէ ազդագիր հրապարակել: Հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում Ձեզ վրա:

Ձեզ սույն փաստաթղթում նշված հասցեով կուղակվի գրություն, որով կնշվի, որ Դուք ընդգրկված եք «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում»:

Որպես որակավորված ներդրող գրանցումը ուժի մեջ է մինչև դիմումի ներկայացմանը հաջորդող հունիսի 30-ը, եթե Դուք չեք դիմել ավելի վաղ ժամկետում գրանցումը ուժը կորցած ճանաչելու համար:

Տեղեկատվական բազայում Ձեր վերաբերյալ տեղեկությունները փոփոխվելու դեպքում Դուք կարող եք դիմել Կենտրոնական բանկ՝ խնդրելով կատարել համապատասխան փոփոխություններ:

Որակավորվող իրավաբանական
անձի անվանումը

Գտնվելու վայրը, ներառյալ՝
հեռախոսը (այստեղ կարող է գրվել
փոստային արկղը կամ ցանկացած
հասցե, որի միջոցով կարելի է անձի
հետ կապ հաստատել՝ կապված
արժեթղթերի առաջարկի հետ)

Էլեկտրոնային հասցե (եթե առկա է)

Ամսաթիվ

Հավելված 3

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 69-Ն որոշմամբ հաստատված
«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06 հավելվածի

ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ

Դ Ի Մ Ո Ւ Մ

Կենտրոնական բանկի նախագահին

Հարգելի _____

Խնդրում եմ/ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանել

_____

(ֆիզիկական անձի անունը, իրավաբանական անձի անվանումը, Տեղեկատվական բազայում գրանցման համարը)

Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայից:

Իրավաբանական անձ որակավորված ներդրողի համար

Անվանումը

Գտնվելու վայրը (կարող է գրվել փոստային արկղը կամ ցանկացած հասցե, որի միջոցով կարելի է անձի հետ կապ հաստատել)

էլեկտրոնային հասցե (եթե առկա է)

Դիմումի ամսաթիվ

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) անուն, ազգանուն _____

Հավաստիացնում եմ, որ լիազորված եմ _____ -ի անձի անունից
(որակավորված անձի իրավաբանական անձի անվանումը)

Կենտրոնական բանկ ներկայացնել նրան՝ որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում գրանցումից հանելու նպատակով սույն դիմումը (սույն տողը լրացվում է լիազոր անձի առկայության դեպքում)

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրություն (դիմումի՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրությունը անհրաժեշտ չէ:) _____

Ամսաթիվ __ _____ ____

*Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 250-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի մարտի 16-ի թիվ 40 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իբ» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 12-ի «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները հաստատելու մասին» թիվ 250-Ն որոշումը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի մարտի 16-ի ««Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում գործառնական ռիսկերի կառավարումը» նվազագույն պարտադիր պահանջները կից ժամանակացույցով հաստատելու մասին» թիվ 40 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն որոշման 3-րդ կետի և սույն որոշմամբ հաստատված հավելված 1-ի գլուխ VII-ի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման հրապարակման պահից վեց ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
13 մարտի 2008 թ., N 71-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի
թիվ 71-Ն որոշմամբ

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Սույն նվազագույն պայմաններով սահմանվում են բանկերում ներքին հսկողության համակարգի, ներքին գործարար գործընթացների ներդրման ու դրանց նկատմամբ հսկողության իրականացման նվազագույն պայմանները:

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ներքին հսկողության հիմնական նպատակներն են՝

1) բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտում և կառավարում, բանկի աշխատանքների արդյունավետ կազմակերպում և անձնակազմի արդյունավետ կառավարում (գործառնական նպատակ),

2) բանկում որոշում կայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվությունների հուսալիություն, ամբողջականություն և ժամանակին տրամադրում, բանկի ներսում տեղեկատվության անհրաժեշտ հոսքերի ապահովում (տեղեկատվական նպատակ),

3) բանկի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, բանկի կառավարման իրավասու մարմին-

** Ոչ պաշտոնական հրատարակությունում:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. մարտի 11-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.04.08 թ. (ՀՀԳՏ N12 (286), 15.04.08):

ների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի (քաղաքականությունների, կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, հրահանգների, ուղեցույցների և այլն) պահանջներին (համապատասխանության նպատակ):

2. Ներքին հսկողության համակարգը բանկի ներքին կազմակերպական կառուցվածքի, գործարար գործընթացների, հաշվետվողականության ու միջոցառումների համալիր է, որը կոչված է պահպանելու բանկի ակտիվները, ապահովելու հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, բարձրացնելու իրականացվող գործառնությունների արդյունավետությունը, ապահովելու բանկի գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրությանը և բանկի ներքին իրավական ակտերին:

3. Բանկում պատշաճ ներքին հսկողության համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության շարունակական մոնիտորինգի իրականացման համար պատասխանատու են բանկի խորհուրդը, գործադիր մարմինը, ներքին աուդիտի ստորաբաժանումը, բանկի բոլոր աշխատակիցները՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունների շրջանակներում:

4. Բանկերը ներդնում են գործարար գործընթացներ ու դրանց նկատմամբ հսկողության իրականացման համակարգեր՝ հուսալի և բնականոն բանկային գործունեություն իրականացնելու նպատակով:

5. Բանկերի ներքին հսկողության համակարգը ապահովում է հուսալի և բնականոն բանկային գործունեության իրականացումը՝ հաշվի առնելով տվյալ բանկի գործունեության բնույթը, առկա ու հնարավոր ռիսկերը, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, գործարար շրջանառության սովորույթները ու միջավայրի փոփոխությունները:

Միջավայրի փոփոխություններ են.

1) փոփոխված գործառնական միջավայրը,

2) նոր անձնակազմը,

3) նոր կամ վերափոխված տեղեկատվական համակարգերը,

4) նոր տեխնոլոգիաները,

5) նոր ծառայությունները, գործունեության տեսակները,

6) բանկի վերակազմավորումը դուստր և/կամ կախյալ ընկերություններում մասնակցությունները,

7) միջազգային գործառնությունների ընդլայնումը (ներառելով փոփոխությունները տնտեսական և բանկային գործունեության կարգավորման միջավայրերում):

6. Բանկերի ներքին հսկողության համակարգը առնվազն բավարարում է սույն կարգով սահմանված պայմաններին: Բանկի իրավական ակտերով սահմանվում է բանկի համար էական ռիսկի չափը (ֆինանսական ռիսկերի դեպքում)՝ որպես կանոն արտահայտված բանկի կապիտալի, կամ շահույթի տեսակարար կշռով: Եթե բանկի կողմից իրականացվող առանձին գործառնությունների բնույթը, ծավալը կամ այդ գործառնություններից ստացվող բանկի ֆինանսական արդյունքները էական չեն բանկի համար կամ բանկի համար չեն առաջացնում էական ռիսկեր, ապա բանկը կարող է չպահպանել այդ գործառնությունների գծով սույն կարգով սահմանված ներքին հսկողության պահանջները՝ բանկի խորհրդի որոշմամբ հաստատված հիմնավորմամբ:

7. Բանկերի ներքին հսկողության համակարգի նպատակը բանկի գործունեության ապահովումն է, ինչպես նաև բանկի գործունեության ու որոշումների կայացման գործընթացների հսկողության ապահովումը:

8. Բանկերի ներքին հսկողության համակարգը հստակեցվում է:

9. Բանկերի ներքին հսկողության համակարգը նկարագրվում է բանկի ներքին իրավական ակտերում, որոնք հանդես են գալիս քաղաքականությունների, ընթացակարգերի, կանոնակարգերի, հրահանգների և այլ տեսքով:

10. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը պարբերաբար, սակայն ոչ պակաս քան երկու տարին մեկ անգամ, վերանայվում են՝ դրանք միջավայրի փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:

11. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը հասանելի են բանկի անձնակազմին: Բանկն ապահովվում է բանկի անձնակազմի տեղեկացվածությունը բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերի դրույթներին:

12. Բանկերը համապատասխանեցնում են բանկի ու բանկի դուստր, կախյալ ու հսկվող ընկերությունների ներքին հսկողության համակարգերը՝ նույն չափանիշների,

սկզբունքների կիրառման միջոցով բանկի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով:

13. Գործարար գործընթացներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը կարող է իրականացվել բանկի դուստր, կախյալ կամ հսկվող ընկերությունների կողմից, այնքանով, որքանով չի հակասում ՀՀ օրենսդրությանը: Բանկի ու բանկի դուստր ընկերությունների ներքին հսկողության առանձին համակարգերը կազմում են տրամաբանական ամբողջություն այն դեպքում, երբ.

1) բանկի ու բանկի դուստր ընկերությունների գործունեությունը կամ գործառնությունները փոխկապակցված են, կամ

2) բանկի դուստր ընկերություններն ունեն էական ազդեցություն բանկի ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի կամ համբավի վրա:

14. Բանկի գործարար գործընթացների (ընթացակարգերի, կանոնակարգերի և այլ տեսքով) մշակումը ներառում է հետևյալ քայլերը.

1) գործարար գործընթացի նկարագրություն,

2) գործարար գործընթացի յուրաքանչյուր քայլի իրականացման հետ առնչվող հնարավոր ռիսկերի ու բացասական իրադարձությունների նույնականացում (ճանաչում),

3) ռիսկերի ու բացասական իրադարձությունների ի հայտ գալու հավանականության և բանկի գործունեության վրա հնարավոր ազդեցության սահմանում,

4) ռիսկերը կառավարելու, կանխարգելելու և նվազեցնելու նպատակով միջոցառումների ու մեխանիզմների սահմանում:

15. Բանկի ներքին հսկողության համակարգը բխում է բանկի ռազմավարությունից ու ներառում է բանկի ռազմավարության ձևավորմանը, սահմանմանը, գնահատմանը և վերանայմանը վերաբերող գործարար գործընթացներ:

16. Բանկի ներքին հսկողության համակարգը.

1) նպատակաուղղվում է բանկի գործունեության անընդհատության ապահովմանը,

2) հարմարեցվում է բանկի գործունեության բնույթին, չափին և բազմաձևությանը,

3) թարմացվում է՝ հաշվի առնելով միջավայրի փոփոխությունները,

4) արտացոլում է գործարար գործընթացները և ռիսկերը:

17. Ռիսկերը, որոնց ենթարկված է կամ կարող է ենթարկվել բանկը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ բանկի գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի կամ շահույթի վրա:

18. Բանկի կողմից իրականացվելիք ռիսկի վերլուծությունը նկատի է ունենում հավանական ծայրահեղ հանգամանքների/իրավիճակների առկայությունը (սթրես սցենարներ), որի հիման վրա բանկը սահմանում է արտակարգ հանգամանքի/իրավիճակի համար ձեռնարկվելիք միջոցառումներ (այն կարող է լինել արտակարգ/չնախատեսված իրավիճակների ծրագիրը, որը պարբերաբար թարմացվում և փորձարկվում է՝ պարզելու համար դրա արդյունավետությունը):

19. Բանկը իրականացնում է ներքին միջավայրում հնարավոր (արտակարգ) սթրեսային իրավիճակների կանխարգելմանն ուղղված ընթացակարգեր և միջոցառումներ: Բանկը վերահսկում է այն ռիսկերը, որոնք սպառնում են բանկի գործունեությանը: Վերահսկումը կատարվում է այնպես, որպեսզի հստակ կապ ապահովվի բանկի ընդհանուր ռիսկի մակարդակի և ֆինանսական միջոցների միջև: Ելնելով դրանից, ներքին հսկողության համակարգը ներառում է բանկի համարժեք կապիտալիզացիայի մոնիթորինգի իրականացմանն ուղղված ընթացակարգեր և միջոցառումներ:

20. Արդյունավետ ներքին հսկողության համակարգը պահանջում է հուսալի տեղեկատվական համակարգերի առկայություն: Տեղեկատվությունը պետք է լինի արժանահավատ, ամբողջական և պաշտպանված չարտոնված առնչություններից: Ներբանկային տեղեկատվական հոսքերը և փաստաթղթաշրջանառության համակարգը օգտագործվում են կառավարման բոլոր մակարդակներում բանկային տարբեր գործառույթների իրականացման և մոնիթորինգ իրականացնելու համար՝ ներառյալ ռիսկերի կառավարումը:

21. Բանկի ներքին ակտերով սահմանվում են այս կամ այն որոշումը ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (հաշվետվություն, տեղեկանք, այլ), այդ տեղեկատվության տրամադրման ձևը և պարբերականությունը:

22. Հաշվետվական փաստաթղթերում արտացոլված տեղեկատվության ճշտությունը հաստատվում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև ստուգվում է հաշվետվություն տրամադրող ստորաբաժանման ղեկավարի կողմից, իսկ նման ստորաբաժանման

բացակայության դեպքում՝ հաշվետվության ներկայացման համար պատասխանատու աշխատակցի կողմից:

23. Բանկը ապահովում է տեղեկատվության պահպանման և մշակման էլեկտրոնային համակարգերի անվտանգությունը և դրանց աշխատանքի անընդհատությունը:

24. Բանկի հետ կապված անձանց մասին տեղեկատվության պահպանումը բանկում հանդիսանում է ներքին հսկողության արդյունավետ համակարգի կարևորագույն տարրերից մեկը:

25. Արդյունավետ ներքին հսկողության համակարգը դրա գործածման անընդհատ կամ պարբերական մոնիթորինգի իրականացումն է, թերությունների կամ բացթողումների ուղղումը (ճշգրտումը):

26. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում բանկի խորհրդին և գործադիր մարմնին ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության նպատակների, լիազորությունների, պատասխանատվության և իր ծրագրի կատարողականի վերաբերյալ: Հաշվետվությունները պետք է նաև ներառեն նշանակալից ռիսկերը և վերահսկողության միջոցառումները, կորպորատիվ կառավարման խնդիրները, ինչպես նաև խորհրդի և գործադիր մարմնի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն:

27. Ներքին հսկողության համակարգի գործունեության արդյունավետությունը ենթադրում է բանկի գործունեության հետ կապված ռիսկերի ժամանակին բացահայտում, գնահատում և շարունակական կառավարում: Ներքին հսկողության մեխանիզմները անհրաժեշտ է վերանայել նոր կամ նախկինում հսկողությունից դուրս մնացած ռիսկերի հայտնաբերման դեպքում:

28. Ռիսկերի բացահայտման, կանխարգելման և նվազեցման ներքին հսկողության ձևերն են.

1) բանկի գործունեության պարբերական ուսումնասիրությունը և գնահատումը բանկի կառավարման մարմինների կողմից,

2) բանկի ակտիվների և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածությունը,

3) սահմանաչափերի սահմանումը և պահպանումը (այդ թվում՝ մեկ փոխառուի ռիսկ),

4) որոշումների և գործարքների հաստատումը և (կամ) թույլատրումը (համապատասխան իրավասու ղեկավարների կողմից),

5) գույքի և գրառումների համատեղ պահպանումը, երբ որոշակի գործընթացների համար հավասարապես հաշվետու են երկու կամ ավելի անձինք (երկու բանալիներից կամ գաղտնաբառերից յուրաքանչյուրը, որոնք պետք է օգտագործվեն գանձարան, արխիվ կամ այլ պահուստարան մուտքի իրավունք ստանալու համար, վստահվում են առանձին անհատների),

6) կրկնակի ստուգումը,

7) տվյալների և գրառումների համադրումը,

8) պարբերական գույքագրումը,

9) բանկի հայեցողությամբ՝ հսկողության այլ գործիքները:

29. Ներքին հսկողության համակարգի նպատակներից մեկն է կապիտալի համարժեքության գնահատումը: Բանկի կապիտալի համարժեքությունը գնահատելու համար հաշվի են առնվում.

1) տոկոսադրույքի ռիսկի մակարդակը,

2) փոխարժեքի ռիսկի մակարդակը,

3) գնային ռիսկի մակարդակը,

4) բանկի իրացվելիությունը,

5) բանկի ակտիվների որակը, մասնավորապես՝

ա. դասակարգված ակտիվների քանակը և ծավալը,

բ. վարկային և ներդրումային պորտֆելների ռիսկայնությունը,

գ. կենտրոնացումները,

դ. վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստների համարժեքությունը,

6) բանկի ֆինանսավորման աղբյուրները (ավանդներ, փոխառու միջոցներ, կապիտալի լրացուցիչ աղբյուրներ) և միջոցների կառավարման որակը,

7) բանկի ավանդային և փոխառու միջոցների ծավալների փոփոխության միտումներն ու տատանողականությունը,

8) բանկի եկամուտների մակարդակը,

9) բանկի ընթացիկ և ապագա ծախսերի, հնարավոր կորուստների ազդեցությունը բանկի կապիտալի կառուցվածքի վրա,

10) գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի բավարար լինելը կորուստները ծածկելու համար,

11) բանկի ֆինանսական և գործառնական ռիսկերի կառավարման նպատակով բանկում առկա ներքին փաստաթղթերով (քաղաքականությունների, ընթացակարգերի, ուղեցույցների և այլն) սահմանված պահանջների բավարար լինելը և այդ պահանջներին համապատասխան գործելը,

12) բանկի աճի տեմպերը,

13) շահաբաժինների վճարման սկզբունքները և դեպքերը,

14) հաշվեկշռի կառուցվածքը,

15) հետհաշվեկշռային հոդվածները,

16) շահութաբերության այն մակարդակը, որը թույլ կտա բանկին ընդլայնել իր գործունեությունը, մնալ մրցունակ և, անհրաժեշտության դեպքում, համալրել իր կապիտալը:

30. Բանկերը սահմանում են հաճախորդների դիմում-բողոքների և/կամ պահանջների ընդունման, քննարկման և դրանց արդյունքում որոշումների ընդունման ընթացակարգեր:

ԳԼՈՒԽ II. ԳՈՐԾԱՐԱՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԱՆՋՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

31. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը նվազագույնը ներառում են՝

1) նկարագրվող գործարար գործընթացի իրականացման քայլերի հերթականությունը,

2) այդ քայլերի իրականացմանն առնչվող ռիսկերի կանխարգելմանը կամ նվազեցմանն ուղղված ներքին հսկողության մեխանիզմները,

3) գործարար գործընթացի անխափան և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովման եղանակները և այդ տեղեկատվության հոսքերը բանկում (ստորաբաժանումների, ղեկավարների, աշխատակիցների միջև),

4) գործարար գործընթացի վերջնական արդյունքը՝ փաստաթղթի, գործարքի, տեղեկատվության կամ այլ տեսքով,

5) գործարար գործընթացի իրականացման ժամկետները՝ ըստ քայլերի,

6) գործարար գործընթացի մեջ ներգրավված աշխատակիցների սահմանված և տարանջատված պարտականություններն ու լիազորությունները,

7) այն աշխատակիցներին (պաշտոնները), որոնք իրավունք ունեն վավերացնելու (ստորագրելու) որևէ փաստաթուղթ կամ գործարք,

8) անհրաժեշտության դեպքում՝ փաստաթղթի պահպանման (արխիվացման) ձևը, ժամկետը,

9) կապը բանկի առանձին գործարար գործընթացների միջև,

10) անհրաժեշտ հղումներ գործընթացը կանոնակարգող օրենքներին, այլ իրավական ակտերին կամ այլ ներքին ակտերին:

32. Բանկի ներքին հսկողության համակարգը, բանկի կազմակերպական կառուցվածքի առումով, նվազագույնը նախատեսում է.

1) բանկի կազմակերպական կառուցվածքի մանրամասն նկարագիրը,

2) բանկի գործարար գործընթացների այնպիսի նկարագիր, որը կներառի բանկի կողմից իրականացվող բոլոր առևտրային գործառնությունների և կառավարչական ընթացակարգերի մանրամասն նկարագիրը՝ սխեմատիկ կամ տեքստային ձևով,

3) բանկի ստորաբաժանումների ու աշխատակիցների պատշաճ տարանջատված պարտականությունները: Պարտականությունների տարանջատման ընթացքում նվազագույնը բացահայտվում ու վերահսկվում են շահերի բախման հնարավոր դեպքերն ու ոլորտները,

4) ռիսկերի կառավարման առանձին ոլորտների համար պատասխանատու անձանց,

5) գործարար գործընթացների այնպիսի նկարագիր, որտեղ գործընթացի, գործունեության կամ գործառնության իրականացումը և հաշվառումը (ներառյալ հետագա հսկողության (post control-ի) ձևով) սկզբից մինչև վերջ դրված չէ միայն մեկ կամ փոխկապակցված անձանց վրա,

6) բանկի ստորաբաժանումների ղեկավարների կողմից աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունների կատարման հետ առնչվող ռիսկերի, բանկի ներքին հսկողության համակարգի մեջ իրենց դերի, աշխատանքի վայրում և դրանից դուրս իրենց վարքագծին ներկայացվող պահանջների, չարաշահումների և դրանց հետևանքների մասին տեղեկացումը,

7) արտակարգ իրավիճակներում (համակարգչային ցանցի խափանում, հրդեհ, այլ) գործունեության իրականացման ծրագրեր: Արտակարգ իրավիճակներում գործունեության ծրագրերը նվազագույնը ներառում են բանկում գործող առանցքային նշանակություն ունեցող ոլորտների, համակարգերի, ստորաբաժանումների աշխատանքի նկարագրությունը արտակարգ իրավիճակի դեպքում և աշխատանքի անընդհատության ապահովման արարողակարգերի նկարագրությունը: Արտակարգ իրավիճակներում գործունեության իրականացման ծրագրերը առնվազն տարին մեկ անգամ թեստավորվում են՝ որոշելու համար դրանց արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում վերանայվում:

33. Բանկի ներքին հսկողության համակարգը, անձնակազմի կառավարման քաղաքականության (կադրային քաղաքականության) առումով, նվազագույնը նախատեսում է.

1) աշխատակիցներին աշխատանքի ընդունելու և ազատելու կարգը,

2) աշխատակիցների վերապատրաստման սկզբունքները,

3) աշխատակիցների վարձատրության, պարգևատրման կամ այլ ձևի նյութական խրախուսման կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու քաղաքականությունն ու կարգը,

4) աշխատակիցների պաշտոնների փոփոխման կարգը,

5) արձակուրդային քաղաքականության սկզբունքները,

6) աշխատակիցների կատարած աշխատանքների գնահատման կարգը,

7) մասնագիտական աշխատանք կատարող աշխատակիցների աշխատատեղերի նկարագրությունը,

8) աշխատանքային էթիկայի կանոնները:

ԳԼՈՒԽ III. ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

34. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը, դրամարկղային գործառնությունների վերաբերյալ, նվազագույնը ներառում են.

1) գանձապահների տնօրինության տակ գտնվող կանխիկի առավելագույն սահմանաչափերը,

2) կանխիկ միջոցների գույքագրման պարբերականությունը,

3) բանկի գործադիր մարմնին բանկի դրամարկղային գործառնությունների վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևերը և ներկայացման պարբերականությունը, հաշվետվություններ ներկայացնող ստորաբաժանումը:

35. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը, ներդրումային գործունեության առումով, նվազագույնը ներառում են.

1) ներդրումային գործունեության նպատակները,

2) ներդրումային պորտֆելի (և առանձին խումբ ներդրումային գործիքների) նպատակային (բենչմարք) կառուցվածքը, եկամտաբերությունը և ժամկետայնությունը,

3) ներդրումային սահմանափակումներ՝ ըստ արժեթղթերի վարկանիշերի կամ արժեթուղթ թողարկողների վարկանիշերի (ֆինանսական վիճակի կամ պարտքի փոխհատուցման ունակության),

4) թույլատրելի կենտրոնացումների սահմանաչափերը՝ ըստ ներդրումային գործիքների, ըստ գործընկերների / արժեթուղթ թողարկողների, ըստ տնտեսության ճյուղի, ըստ բանկի հետ կապված անձանց,

5) ներդրումների բազմազանեցման (դիվերսիֆիկացիայի) սկզբունքները,

6) բանկի թղթակցային հաշիվների բացման և փակման սկզբունքները,

7) ձեռք բերված արժեթղթի թողարկողի և թղթակից բանկերի վարկունակության ուսումնասիրության պահանջը,

8) հնարավոր բացառությունների դեպքերը,

9) ներդրումային կոմիտեի կազմը, պարտականությունները և լիազորությունները,

10) ներդրումների գնահատման և վերագնահատման սկզբունքները, մեթոդները, կարգը և հաճախականությունը,

11) դիլերների (ներդրումային գործարքներ կնքելու իրավասություն ունեցող աշխատակիցների) կողմից առանց համապատասխան ղեկավարի վավերացման կնքվող գործարքի (կամ գործարքների) տեսակները և թույլատրելի առավելագույն չափերը/սահմանաչափերը,

12) չաշխատող արժեթղթերի դասակարգման սկզբունքները,

13) այլ բանկերում հաշիվների մնացորդների մոնիտորինգի և համադրման իրականացման համար պատասխանատու (անձանց) պաշտոնները, իրականացման պարբերականությունը,

14) ածանցյալ գործառնությունների իրականացման ռազմավարությունը,

15) բանկի խորհրդին և գործադիր մարմնին բանկի ներդրումային գործունեության վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևերը և ներկայացման պարբերականությունը, հաշվետվություններ ներկայացնող ստորաբաժանումը:

36. Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվություններն առնվազն ներառում են.

1) ներդրումների կառուցվածքը,

2) մարումների ժամանակացույցը,

3) ներդրումների եկամտաբերությունը,

4) գրավադրված արժեթղթերը՝ ինչպես գումարային արտահայտությամբ, այնպես էլ որպես տոկոս՝ ներդրումային պորտֆելից,

5) արժեթղթերի գնման կամ վաճառքի՝ դեռևս չկատարված/պայմանական պարտավորությունները:

37. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը, վարկավորման գործընթացի (վարկերի, փոխառությունների, օվերդրաֆտների, վարկային գծերի, վարկային քարտերի, ֆակտորինգային և ֆինանսական վարձակալության (լիզինգային) գործառնությունների տրամադրման, այսուհետ՝ վարկ) առումով, նվազագույնը ներառում են.

1) բանկի նպատակային շուկաները, վարկավորման ընդունելի տեսակները (լիզինգային գործառնությունների իրականացման դեպքում՝ նաև այն գույքի տեսակները, որոնց լիզինգը բանկը մտադիր է իրականացնել),

2) վարկային պորտֆելի նպատակային (բենչմարք) կառուցվածքը, եկամտաբերությունը և ժամկետայնությունը,

3) վարկային կոմիտեի անդամների կազմը, քանակը, վարկային կոմիտեի իրավասությունները և պարտականությունները, գործունեության կարգը,

4) վարկային կենտրոնացումների սահմանաչափերը,

5) վարկային պորտֆելի բազմազանեցման (դիվերսիֆիկացիայի) սկզբունքները,

6) վարկերի տրամադրման, մոնիտորինգի և դրանց վերադարձման ընթացակարգը,

7) բանկում գնագոյացման (վարկավորման տոկոսադրույքների, ֆակտորինգային զեղչատոկոսների ձևավորման) սկզբունքները,

8) ապահովման միջոցների (գրավի, երաշխավորության) ընդունելի տեսակները,

9) «վարկի գումար» / «ապահովում» հարաբերակցությունները տարբեր վարկային գործիքների (վարկերի տեսակների) համար՝ արտահայտված տոկոսով,

10) գրավի առարկայի վերաբերյալ հսկողության ձևերը (մասնավորապես՝ հիփոթեքային վարկավորման դեպքում) և այլ պահանջները (օրինակ՝ գրավադրված շենքի ապահովագրում),

11) հնարավոր բացառությունների դեպքերը կամ հիմքերը,

12) վարկավորման սահմանաչափերը՝ ըստ վարկի գումարի, ժամկետի, տոկոսի և տեսակի,

13) վարկերի տրամադրման համար պահանջվող, ինչպես նաև վարկային գործերում պահպանվող նվազագույն փաստաթղթերը և տեղեկատվությունը,

14) բանկի հետ կապված անձանց վարկավորման սկզբունքները,

15) բանկի կողմից մերժված հայտերի վերաբերյալ տեղեկատվության պահպանման և մերժումների հիմնավորվածության ուսումնասիրության պահանջը,

16) վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգը, ապահովվածություն չունեցող վարկերի տրամադրման հիմքերը, դեպքերը,

17) փոխկապակցված անձանց վարկերի տրամադրման կարգը, սահմանաչափերը,

18) բանկի խորհրդին ու գործադիր մարմնին բանկի վարկավորման գործունեությանը վերաբերող ներկայացվող հաշվետվությունների ձևերը և ներկայացման պարբերականությունը, հաշվետվություններ ներկայացնող ստորաբաժանումը, ընդ որում՝ հաշվետվություններն առնվազն պարունակում են խնդրահարույց (ժամկետանց) վար-

կերի վերաբերյալ տեղեկատվություն, այդ վարկերի դասակարգումը հիմնավորող տեղեկատվություն, ինչպես նաև կենտրոնացումների վերաբերյալ տեղեկատվություն:

38. Գրավի առարկայի գնահատման և վերահսկման ներքին ակտերը պետք է նվազագույնը ներառեն.

1) գրավի գնահատումն իրականացնող աշխատակիցների ընտրության և վերջիններիս աշխատանքի վերահսկման սկզբունքները,

2) անկախ գնահատող հանդիսացող անձանց ընտրության սկզբունքները,

3) գրավի վերագնահատումն իրականացնելու գործընթացը և հաճախականությունը,

4) գրավի առարկայի և դրա ապահովագրվածության վերահսկման գործընթացը և հաճախականությունը հատկապես ֆիզիկապես բանկի հսկողությունից դուրս (գրավատուի օգտագործման ներքո գտնվող) գրավների գծով:

Ընդ որում, գրավը գնահատող անձինք չպետք է շահագրգիռ լինեն վարկը տրամադրելու հարցում:

39. Ոսկյա իրերի գրավադրման պարագայում (եթե ոսկյա իրերը պահվում են գրավառուի մոտ) գրավի առարկայի գնահատման և պահպանման ներքին ակտերը նվազագույնը ներառում են.

1) պահանջ, որպեսզի գրավի առարկայի պահպանումը բանկի պահոցում իրականացվի փակ թափանցիկ պարկի մեջ, որը կնքված է (ստորագրության կամ իդենտիֆիկացման այլ միջոցներով) բանկի աշխատակցի ու գրավատուի կողմից,

2) պահանջ, որը կապահովի թափանցիկ պարկի բացումը միայն գրավատուի ու պարկը կնքած բանկի աշխատակցի ներկայությամբ. գրավատուի ներկայությունը պարկի բացման ժամանակ անհնար լինելու դեպքում, ստեղծվում է առնվազն 4 հոգուց կազմված հանձնաժողով, որոնց ներկայությամբ իրականացվում է գրավականի ստուգում,

3) պահանջ, որպեսզի բանկում պահվի յուրաքանչյուր գրավի առարկայի նկարագրությունը, որը ստորագրված կլինի բանկի աշխատակցի ու գրավատուի կողմից,

4) թափանցիկ պարկի բացման ժամը և օրը հավաստող անդորրագիրը հաճախորդի կողմից ստորագրելու պահանջ:

40. Բանկի վարկավորման գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերից շեղումները պատշաճ հիմնավորվում, փաստաթղթավորվում և պահվում են վարկային գործերում:

41. Վարկային գործերը նվազագույնը ներառում են հետևյալ փաստաթղթերը.

1) վարկային հայտ/դիմում,

2) վարկային կոմիտեի կամ իրավասու այլ մարմնի կամ անձի որոշումը,

3) վարկային պայմանագիր,

4) վարկառուի վարկանիշը (առկայության դեպքում),

5) վարկառուի իրավունակությունը կամ գործունակությունը հաստատող փաստաթղթեր,

6) վարկային ռեգիստրից կամ բյուրոներից ստացված հարցումները հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

7) գրավի կամ վարկի ապահովման այլ միջոցի պայմանագիր (ապահովվածության առկայության դեպքում),

8) գրավի կամ վարկի ապահովման այլ միջոցի վերաբերյալ այլ փաստաթղթեր (կիրառելիության դեպքում),

9) վարկառուի գործարար ծրագիր կամ վարկի վերադարձելիությունը հիմնավորող այլ տեղեկատվություն,

10) վարկառուի ֆինանսական հաշվետվությունները (կիրառելիության դեպքում),

11) վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները (կիրառելիության դեպքում),

12) վարկառուի հետ նամակագրությունը (կիրառելիության դեպքում),

13) պատասխանատու անձի կողմից վավերացված գրառումներ վարկառուի հետ հեռախոսազրույցների և հանդիպումների մասին (կիրառելիության դեպքում):

42. Վարկային գործերում առկա փաստաթղթերը պետք է նվազագույնը ներառեն հետևյալ տեղեկությունները (կա՛մ էլեկտրոնային, կա՛մ թղթային տեսքով).

1) վարկառուի անունը և զբաղմունքը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և գործունեության տեսակ), գրավատուները, երաշխավորները (առկայության դեպքում),

2) վարկի տրամադրման ամսաթիվը և մարման ժամանակացույցը,

3) վարկի գումարը (սկզբնական գումարն ու ընթացիկ մնացորդը),
4) վարկի նպատակը,
5) վարկի տոկոսադրույքը և վճարումների ժամանակացույցը,
6) գրավի տեսակը և գնահատված արժեքը (գրավի առկայության դեպքում),
7) վարկի կարգավիճակը՝ ընթացիկ կամ ժամկետանց (որքան ժամանակ),
8) վարկի վերաձևակերպումները կամ երկարաձգումները, վարկային պայմանագրի վերանայման պատճառների նկարագրությունը,
9) վարկի առնչությամբ կատարված ներքին և արտաքին ստուգումների արդյունքները,
10) վարկի դասակարգումը, դասակարգման պատճառները,
11) չաշխատող վարկերի վերադարձման համար ձեռնարկված քայլերի մասին տեղեկատվություն,
12) վարկառուի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված ցանկացած այլ փոխառությունների մասին տեղեկատվություն:
43. Վարկի մոնիտորինգի գործընթացը նվազագույնը ներառում է.
1) վարկի յուրաքանչյուր մասնաբաժնի տրամադրումից առաջ (բացառությամբ առաջինի) վարկի օգտագործման նպատակայնության ուսումնասիրություն (խոշոր գումարների դեպքում)՝ բացառությամբ վարկային գծերի, վարկային սահմանաչափերի,
2) վճարումների և վարկի մարումների գրանցում,
3) գրավի առարկայի պարբերական վերագնահատում,
4) վարկառուի վերաբերյալ ֆինանսական և գործառնական տեղեկատվության կանոնավոր ստացում, վերլուծություն և, անհրաժեշտության դեպքում, վարկառուի հետ դրանց քննարկում,
5) վարկառուի հետ հեռախոսազրույցների միջոցով լրացուցիչ կապի պահպանում,
6) անհրաժեշտության դեպքում՝ զրույցներ վարկառուի մատակարարների, այլ կոնտրագենտների և հաճախորդների հետ,
7) վարկի գծով ստացված բոլոր տվյալների գրանցում,
8) անհրաժեշտության դեպքում՝ վարկառուին աջակցելու (վարկի վերադարձելիությունն ապահովելու) համար քայլերի ձեռնարկում,
9) հատուկ ուշադրություն այն վարկային գծերի նկատմամբ.
ա. որոնք գերազանցում են բանկի ներքին իրավական ակտերով որոշված սահմանաչափերը (բացառություններ),
բ. որոնցում շարժ չկա,
գ. որոնցով մարումներն իրականացվում են հաճախորդի հաշվին մուտքագրվող վարկի նոր մասնաբաժնի հաշվին:
(սույն ենթակետը կարող է չկիրառվել սպառողական վարկերի դեպքում):
44. Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվություններն առնվազն ներառում են.
1) վարկային պորտֆելի կառուցվածքը,
2) վարկային պորտֆելի որակը,
3) վարկերի հիմնական ուղղությունները,
4) վարկերի կենտրոնացումները,
5) խոշոր վարկերը,
6) բանկի հետ փոխկապակցված անձանց տրված վարկերը:

ԳԼՈՒԽ IV. ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

45. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը հիմնական միջոցների կառավարման առումով նվազագույնը ներառում են.
1) բանկի հիմնական միջոցների ձեռքբերման և դուրսգրումների առավելագույն սահմանաչափերի սահմանումը,
2) գույքի չլիազորված օգտագործման բացահայտման ձևերը,
3) գույքագրման պարբերականությունը,
4) հիմնական միջոցների ձեռքբերման, վաճառքի և դուրսգրման սկզբունքները,
5) դուրսգրված հիմնական միջոցների տնօրինման սկզբունքներն ու ձևերը,
6) հիմնական միջոցների ծառայության ժամկետի և մաշվածության հաշվարկման սկզբունքները,
7) հիմնական միջոցների վերագնահատման պարբերականությունը և սկզբունքները,

8) բանկի խորհրդին ևգործադիր մարմնին բանկի հիմնական միջոցների կառավարման ևիմնական միջոցներում ներդրումների իրականացման վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձեւերը, ներկայացման պարբերականությունը, հաշվետվություններ ներկայացնող ստորաբաժանումը:

46. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը բանկում առկա ավանդների (ավանդային բազայի) և բանկային հաշիվների կառավարման առումով, նվազագույնը ներառում են.

1) ավանդային բազայի նպատակային (բենչմարք) կառուցվածքը (ցպահանջ, ժամկետային ավանդների տեսակարար կշիռը՝ հաշվի առնելով սեզոնայնության և այլ հնարավոր գործոնները),

2) ավանդներ ներգրավելու սկզբունքները,

3) բանկի հաճախորդների (առանձին նաև բանկի հետ կապված անձանց) հաշիվների բացման, վարման, հսկման և փակման սկզբունքները, կարգը, գործընթացները: Ընդ որում, փակման գործընթացները պետք է նվազագույնը ներառեն փակման պատճառների մասին տեղեկատվությունը,

4) հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքների որոշման սկզբունքները,

5) բանկի խորհրդին և գործադիր մարմնին բանկի ավանդային բազայի կառավարման վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման պարբերականությունը, հաշվետվություններ ներկայացնող ստորաբաժանումը:

47. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերն իրացվելիության (ակտիվների և պարտավորությունների) կառավարման առումով նվազագույնը ներառում են.

1) բանկի իրացվելիության պահանջների բավարարման աղբյուրներն ու դրանց օգտագործման ուղիները,

2) բանկի ակտիվների գնագոյացման (տոկոսադրույքի որոշման) մեխանիզմը (հաշվի առնելով բանկի ֆոնդերի արժեքը, վերադիր ծախսերը, վարկային ռիսկը և վճարվող շահաբաժինները),

3) բանկի պարտավորությունների ցանկալի կամ նպատակային կառուցվածքը և ժամկետայնության սահմանները (օրինակ՝ բանկը կարող է սահմանել, որ բանկի կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատները չպետք է գերազանցեն բանկի համախառն պարտավորությունների որոշակի տոկոսը, իսկ այդ ավանդային սերտիֆիկատների ժամկետայնությունը որոշակի ժամկետից պակաս չպետք է լինի),

4) բանկին տրամադրված փոխառությունների գումարների, տեսակների կամ համախառն տոկոսային ծախսերի սահմանաչափերը,

5) բանկի իրացվելիության պահանջները բավարարելու համար օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերը (օրինակ՝ բանկը, որի պարտավորությունների մեծ մասը կազմում են մեկ անձի (ֆիզիկական կամ իրավաբանական) ավանդները, կախվածության մեջ է ընկնում այդ անձի ֆինանսական վիճակից),

6) փոխառությունները ըստ մարման ժամկետների բազմազանեցնելու (դիվերսիֆիկացնելու) պահանջը,

7) իրացվելիության պահանջները բավարարելու համար բանկի հետ կապված անձանցից (կազմակերպություններից) փոխառու միջոցների ներգրավման սահմանափակումները,

8) իրացվելի միջոցների առաջնային աղբյուրների սպառման դեպքում այլընտրանքային աղբյուրների ընտրության չափանիշները, դրանց հայթայթման ուղիները,

9) տոկոսադրույքի ռիսկը սահմանափակելու սկզբունքները ու մեթոդները՝ ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ առնչվող տոկոսադրույքի ռիսկը,

10) տոկոսային մարժայի նպատակային մակարդակը,

11) տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն հետհաշվեկշռային հոդվածների սահմանաչափերը,

12) ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (առկայության դեպքում) անդամների կազմը, նրանց նշանակումը, պարտականությունները և լիազորությունները, ինչպես նաև ակտիվների և պարտավորությունների կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումը, դրա պարտականությունները և լիազորությունները,

13) միջոցների ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմներն ու ընթացակարգերը,

14) բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափեր,

15) բանկի անունից փոխառության գործարքներ կնքելու իրավասություն ունեցող աշխատակիցների համար առանց համապատասխան ղեկավարի վավերացման կնքվող գործարքի (կամ գործարքների) թույլատրելի առավելագույն չափերը/սահմանաչափերը,

16) բանկի այն ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացման եղանակները, որոնք կարող են իրենց կողմից իրականացվող գործառնություններով ազդել բանկի իրացվելիության մակարդակի վրա,

17) իրացվելիության արտահերթ պահանջները (ինչը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման դեպքում) բավարարելու ծրագիրը,

18) բանկի խորհրդին ու գործադիր մարմնին բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման պարբերականությունը, հաշվետվություններ ներկայացնող ստորաբաժանումը:

48. Բանկի խորհրդին ու գործադիր մարմնին ներկայացվող հաշվետվությունները նվազագույնը երկու ամիսը մեկ անգամ ներառում են հետևյալ տեղեկատվությունը.

1) բանկի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձևավորված իրացվելի միջոցների պահանջը,

2) ընթացիկ իրացվելիությունը,

3) միջոցների ակնկալվող/կանխատեսվող պահանջը,

4) միջոցների ներգրավման աղբյուրները,

5) ակտիվների ընթացիկ և ակնկալվող որակը,

6) ընթացիկ և ակնկալվող դրամական հոսքերը,

7) կապիտալի ընթացիկ և ակնկալվող մակարդակը,

8) միջոցների ներգրավման և իրացման «արժեքը» (օրինակ՝ ավանդների տոկոսադրույք, հնարավոր կորուստներ ակտիվների վաճառքից և այլն),

9) բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման որակը,

10) տվյալներ բանկի ակտիվների եկամտաբերության մասին,

11) տոկոսային մարժա, տոկոսային մարժայի փոփոխության/տատանումների պատճառների վերլուծությունները,

12) տոկոսադրույքի նկատմամբ զգայուն գործիքների կենտրոնացումները,

13) տվյալ ժամանակաշրջանի դրությամբ ավանդային բազայի կառուցվածքը և դրա փոփոխման միտումները,

14) ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռի կառուցվածքի փոփոխման միտումները,

15) շուկայական կանխատեսումները,

16) բանկի տրամադրած փոխառությունների նպատակը, դրանց ֆինանսավորման աղբյուրները, գումարները, ժամկետները, ստացվելիք ու ստացված տոկոսավճարները:

ԳԼՈՒԽ V. ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

50. Բանկերի կողմից վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու ժամանակ ներքին հսկողություն իրականացնելու նպատակներն են՝ վճարահաշվարկային ծառայություններին բնորոշ ռիսկերի բացահայտումը, վերլուծությունը և կառավարումը, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցառումների իրականացումը:

51. Ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը վճարահաշվարկային համակարգերի վերաբերյալ նվազագույնը ներառում են հետևյալ պահանջները.

1) գործունեության համառոտ նկարագրության տրամադրում (օպերատորի կամ գործակալի հետ պայմանագիր կնքելիս),

2) համակարգում հնարավոր խափանումների և դրանց վերացմանն ուղղված միջոցառումների նկարագրություն:

52. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը վճարային գործիքների (վճարման հանձնարարական, վճարման կարգադիր, վճարման պահանջագիր, պարբերաբար վճարումների հանձնարարական, ուղղակի

դեբետագրում (այսուհետև՝ կարգադրություն)) հետ կապված նվազագույնը ներառում են.

1) գործարքների իրականացման, մասնավորապես՝ կարգադրությունների ընդունման, մշակման կատարման և մերժման ընթացակարգերը,

2) գործարքների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի կանխարգելման համար կիրառվող ընթացակարգերը,

3) գործարքների ծավալների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, որոնք իրականացվել են բանկային հաշիվների և կանխիկ եղանակով (ըստ ներկայացման),

4) փաստաթղթերի պահպանման (արխիվացման) պայմաններ,

5) չպարզաբանված, մերժված և ուշացված գործարքների մասին տեղեկությունների տրամադրում, դրանց բացահայտմանն ուղղված միջոցառումների ընթացակարգերի սահմանում:

53. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը փաստաթղթային ակրեդիտիվի, փաստաթղթային ինկասոյի, երաշխիքների և այլ փաստաթղթային գործարքների հետ կապված նվազագույնը ներառում են հետևյալ պահանջները.

1) գործարքների իրականացման ընթացակարգեր,

2) յուրաքանչյուր գործիքի նկարագրություն,

3) ռիսկերի կառավարման մեխանիզմներ:

54. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը չեկերի գծով նվազագույնը ներառում են հետևյալ պահանջները.

1) բանկի կողմից չեկերի թողարկման, սպասարկման և վճարման իրականացման ընթացակարգերը,

2) չեկային գրքույկի տրամադրման ժամանակ չեկատիրոջը նույնականացնող տվյալների մուտքագրում և պահպանում տվյալների բազայում,

3) այլ բանկերի վրա դուրս գրված չեկերի (ներառյալ ըստ տեսակների) սպասարկման վերաբերյալ ընթացակարգերի սահմանում,

4) մերժման պայմանների սահմանում,

5) կեղծ չեկերի հայտնաբերման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման ընթացակարգերի սահմանում:

55. Ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը էքվայրինգի վերաբերյալ պետք է ներառեն հետևյալ պահանջները.

1) առևտրային կետերի հետ կնքվող պայմանագրերի ընթացակարգերի սահմանում,

2) բանկի կողմից առևտրի և/կամ ծառայություններ մատուցող կետերին սպասարկման ծառայության (էքվայրինգ) մատուցման ընթացակարգերի սահմանում,

3) քարտային գործունեության իրականացման մոնիտորինգի, այդ թվում՝ հսկողության ընթացակարգերի սահմանում,

4) տեղադրված բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների ֆիզիկական և տեխնիկական անվտանգության ապահովման վերաբերյալ ընթացակարգերը (տեղակայման վայրի ընտրությունը, անվտանգության միջոցառումները, համապատասխան պայմանագրերը և այլն), ինչպես նաև բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների միջոցով կատարված խարդախությունների և խափանումների պատճառների բացահայտմանն ու վերացմանն ուղղված ընթացակարգեր:

56. Ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը վճարային քարտերի վերաբերյալ նվազագույնը պետք է ներառեն հետևյալ պահանջները.

1) ֆինանսական կազմակերպության վճարային քարտերի թողարկման, տրամադրման և սպասարկման ընթացակարգերը,

ա) նույնականացում,

բ) գործառնությունների տեսակներ և համապատասխան կոմիսիոն վճարներ,

գ) գործարքների սահմանափակումներ,

դ) քարտապանի կողմից քարտային գործառնության բողոքարկման ժամանակահատվածի սահմանում,

ե) արտարժույթով արտահայտված գործառնությունների կատարման պայմաններ,

զ) վճարային քարտի կորստի/գողանալու դեպքում կիրառվող ընթացակարգեր և դրանց կիրառման կարգն ու միջոցները:

2) Տվյալների գրանցամատյանների արխիվացման և արխիվների պահպանման կանոնները:

57. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը բանկային և դեպո հաշիվների սպասարկման վերաբերյալ ներառում են հետևյալ պահանջները.

1) բանկում հաշիվների բացման, սպասարկման և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ ընթացակարգեր,

2) հաճախորդների սպասարկման ժամանակ ֆիզիկական և իրավաբանական անձանց տվյալների նույնականացման ընթացակարգեր:

58. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը հետհաշվեկշռային գործառնությունների առումով նվազագույնը ներառում են.

1) վարկային գծերի, օվերդրաֆտների, վարկային քարտերի, ակրեդիտիվների և երաշխիքների դիմումների տրամադրման պայմանները, տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի նվազագույն փաթեթը, դրանց մշակման և ուսումնասիրման գործընթացը,

2) անհատական պահատեղերի վարձակալման պայմանները,

3) հավատարմագրային կառավարման գծով բանկի կողմից տրամադրվող ծառայությունները,

4) անհատական պահատեղի համար պայմանագիր կնքելու պահանջը, որը կնախատեսի նաև, որ միևնույն պահատեղից փոխկապակցված անձինք կարող են օգտվել միայն պայմանագրում համապատասխան դրույթի առկայության դեպքում,

5) այն արժեքների ցանկը (թմրանյութ, զենք և այլն), որոնք արգելված է պահել անհատական պահատեղերում,

6) յուրաքանչյուր անգամ բանկի աշխատակցի ներկայությամբ անհատական պահատեղը բացելուց հետո հաճախորդին առանձին սենյակ տրամադրելու պահանջը,

7) անհատական պահատեղի սենյակ մուտքի ժամը և օրը հավաստող անդորրագիրը հաճախորդի կողմից ստորագրելու պահանջը,

8) բանկի խորհրդին ու գործադիր մարմնին բանկի հետհաշվեկշռային գործառնությունների վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման պարբերականությունը, հաշվետվություններ ներկայացնող ստորաբաժանումը:

59. Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային գործառնությունները կարգավորող ներքին իրավական ակտերի դրույթները/պահանջները պետք է համահունչ լինեն վարկային գործառնությունները կարգավորող ներքին ակտերի պահանջներին:

60. Բանկի յուրաքանչյուր մասնաճյուղից գլխամաս ներկայացվող տեղեկատվությունը նվազագույնը ներառում է հետևյալը.

1) ավանդային բազայի, ակտիվների և հետհաշվեկշռային հոդվածների կառուցվածքը, դրանց փոփոխման միտումները,

2) եկամուտների և ծախսերի կազմը, գումարային մեծությունը, դրանց փոփոխման միտումները,

3) մասնաճյուղի կողմից սպասարկվող տարածաշրջանի տնտեսական վերլուծությունը,

4) հաճախորդների կողմից ներկայացված դիմում-բողոքները,

5) հաճախորդների թվաքանակի փոփոխությունները:

61. Բանկի բոլոր մասնաճյուղերը կիրառում են հաշվապահական հաշվառման և ներքին հաշվետվական միասնական համակարգեր:

62. Բանկի վարկային քաղաքականությունը ներառում է նաև մասնաճյուղի աշխատակիցների կողմից իրականացվող վարկավորման սահմանաչափերը (ըստ վարկերի տեսակների): Փոխառության գործարքներ կնքելու իրավասություն ունեցող աշխատակիցների համար առանց համապատասխան ղեկավարի վավերացման կնքվող գործարքի (կամ գործարքների) թույլատրելի առավելագույն չափերը/սահմանաչափերը:

63. Բանկի կառավարմանը վերաբերող ներքին իրավական ակտերը նվազագույնը ներառում են.

1) մասնաճյուղի աշխատակիցների քանակը և նրանց ներկայացվող պահանջները,

2) մասնաճյուղի աշխատակիցների մասնագիտական մակարդակի գնահատումը, վերապատրաստումը,

3) բանկի գլխամաս հաշվետվություններ ներկայացնելու պարտականությունների բաշխումը,

4) մասնաճյուղում առկա կանխիկ միջոցների սահմանաչափը,

5) բանկի կողմից խոշոր միջոցների շարժի ու խոշոր գործարքների իրականացման դեպքում բանկի արձագանքը (քայլերը):

ԳԼՈՒԽ VI. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

64. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը, ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության առումով, նվազագույնը ներառում են.

1) ներքին աուդիտի խնդիրները, դերը, պարտականությունները, իրավասությունները,

2) ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացման ենթակա նվազագույն աշխատանքները,

3) աուդիտորական հաշվետվության պատրաստման և ներկայացման կարգը,

4) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների ընտրության և նշանակման կարգը,

5) ներքին աուդիտի ստորաբաժանման տարեկան աշխատանքային ծրագիրը:

65. Ներքին աուդիտի ստորաբաժանման տարեկան աշխատանքային ծրագիրը նվազագույնը ներառում է ծրագրի գործողության շրջանակները (ներառյալ՝ ստուգումների ժամանակացույցը), որն ըստ անհրաժեշտության քննարկվում և վերանայվում է:

66. Ներքին աուդիտի ստորաբաժանման տարեկան աշխատանքային ծրագիրը կազմելիս նվազագույնը հաշվի են առնվում.

1) բանկի գործունեության ռիսկայնության գնահատման արդյունքները,

2) նախկինում իրականացված համանման աուդիտորական ստուգումների փորձը,

3) բանկի ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացվող, իրենց ոլորտներում աուդիտի անցկացման պահանջարկը,

4) վերստուգվող ստորաբաժանումներում իրականացվող գործառնությունների բարդությունը, ծավալները և այդ ստորաբաժանումների աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության (կոմպետենտության) աստիճանը,

5) ներքին աուդիտի աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը և փորձը,

6) աուդիտորական ստուգումների իրականացման և հաշվետվությունների պատրաստման ժամկետները:

67. Ներքին աուդիտի ստորաբաժանման տարեկան աշխատանքային ծրագրի ներքո ներքին աուդիտի աշխատանքները նվազագույնը ներառում են.

1) աշխատանքային փաստաթղթերի և գրանցումների ամբողջականության և համարժեքության, ինչպես նաև գործարքների համապատասխան ապատշաճ հաշվեգրման ստուգումը,

2) բանկի ֆինանսական հաշվետվություններում ակտիվների պատշաճ ներկայացման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ակտիվների ֆիզիկապես առկայության և ակտիվների պահպանման եղանակների ստուգումը (օրինակ՝ կանխիկ դրամ) և պարտավորությունների լիովին բացահայտված և պատճառաբանված լինելու ստուգումը,

3) գրավի և այլ հետհաշվեկշռային միջոցների պատշաճ գնահատման, հաշվառման և պաշտպանվածության ստուգումը, այդ թվում՝ տեղերում ուսումնասիրությունների միջոցով,

4) բանկի և բանկի ղեկավարների իրականացվող գործունեության համապատասխանության ստուգումը գործող օրենքների, նորմատիվ և այլ իրավական ակտերի պահանջներին, այդ թվում՝ բանկի քաղաքականություններին ու կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին և այլն),

5) բանկի աշխատակիցների կողմից բանկի ներքին քաղաքականություններին և կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին) համապատասխան գործելու ստուգումը,

6) եկամուտների հաշվառումը և ծախսերի ուսումնասիրությունը՝ հաստատելու համար, որ վերջիններս համապատասխանում են բանկի քաղաքականությանը (օրինակ՝ վարկերի զեղչերի, ավանդների տոկոսների, մարումների ուշացումների համար տույժերի, ծառայությունների դիմաց վճարումների և ժամկետանց վարկերի ընտրանքային ստուգումները՝ դրանց ճշտությունը ստուգելու համար),

7) յուրաքանչյուր աշխատակցի կողմից իր իրավասությունների շրջանակներում ներքին հսկողության գործառույթների իրականացման գնահատումը,

8) բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության և բանկի ռիսկերին համարժեք լինելու գնահատումը,

9) ներքին տեղեկատվական և հաշվետվական համակարգի գնահատումը,

10) բանկի կապիտալի համարժեքության ապահովման մեխանիզմի արդյունավետության գնահատումը,

11) կազմակերպության աշխատակիցներին տրված լիազորությունների (օրինակ՝ վարկեր տրամադրել, լիազորագրեր, պայմանագրեր, փոխանցումներ և այլ տիպի իրավական կամ հաշվապահական փաստաթղթեր ստորագրել) գնահատումը՝ հնարավոր չարաշահումները բացառելու նպատակով,

12) վարկավորման գործընթացի, վարկերի դասակարգման, վարկերից կորուստների, վարկերի դուրսգրումների և հետվերադարձի գործընթացի ուսումնասիրությունը:

68. Ներքին աուդիտը, բանկում իրականացված ստուգումների արդյունքների հիման վրա, ներկայացնում է համապատասխան առաջարկություններ ստուգման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, ռիսկերի զսպման և/կամ նվազեցման նպատակով:

69. Ներքին աուդիտը նվազագույնը կատարում է հետստուգումային հսկողություն բանկի ստորաբաժանումների կողմից այն միջոցառումների իրականացման նկատմամբ, որոնք առաջարկվել են ներքին և արտաքին աուդիտորական, ինչպես նաև Կենտրոնական բանկի ստուգումների արդյունքում և հաստատվել են բանկի խորհրդի կողմից:

70. Հետստուգումային հսկողության արդյունքների հիման վրա, սահմանված ժամկետում, իսկ այդպիսին սահմանված չլինելու դեպքում՝ առնվազն եռամսյակը մեկ, կազմվում և բանկի խորհրդին են ներկայացվում հաշվետվություններ՝ ներքին և արտաքին աուդիտորական, ինչպես նաև Կենտրոնական բանկի ստուգումների արդյունքներով կատարված առաջարկությունների և/կամ հանձնարարականների իրականացման վերաբերյալ: Խորհրդին ներկայացվող հաշվետվությունները պետք է նկարագրեն բանկում առկա նշանակալից ռիսկերը, հսկողության միջոցառումները, կորպորատիվ կառավարման խնդիրները (եթե դրանք կան):

71. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը, բանկի հետ կապված անձանց առումով, նվազագույնը ներառում են.

1) բանկի հետ կապված անձանց մասին տեղեկատվության ստացումն ու պահպանումը բանկում,

2) բանկի դուստր կազմակերպություններում ներքին կամ արտաքին աուդիտի կողմից կատարված ստուգումների հաշվետվությունների պատճենների ստացումն ու ուսումնասիրությունը,

3) բանկում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց, ինչպես նաև բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց և ֆինանսական հաշվետվությունների մասին տեղեկությունների ստացումն ու ուսումնասիրությունը:

72. Բանկի հետ կապված անձանց մասին տեղեկատվությունը նվազագույնը ներառում է՝

1) անձի անունը և բնակության վայրը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և գտնվելու վայրը),

2) զբաղմունքը (իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության տեսակը),

3) փոխկապվածության ձևը,

4) բանկի հետ հարաբերությունների բնույթը, բանկից (իսկ հնարավորության դեպքում՝ նաև այլ բանկերից) ստացված բոլոր տեսակի փոխառությունները և կատարված ներդրումները, գրավը, պայմանական և այլ պարտավորությունները, ավանդները, բանկին տրված փոխառությունները:

73. Բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առումով, նվազագույնը ներառում են.

1) այն պարտադիր ընթացակարգերը, որոնք բանկի կողմից պետք է պահպանվեն հաճախորդների, պարտատերերի և այլ անձանց հետ ֆինանսական և (կամ) այլ գործառնություններ կատարելիս,

2) ֆինանսական կամ այլ գործառնությունների կատարման ընթացքում ներկայացման համար անհրաժեշտ տեղեկությունները,

3) բանկի հաճախորդների ռիսկայնության չափանիշները (բարձր ռիսկի հաճախորդների), յուրաքանչյուր ռիսկի խմբում ընդգրկված հաճախորդների նկատմամբ սահմանված պահանջները,

4) իրական շահառուի վերաբերյալ նվազագույն տեղեկությունների հավաքագրումը և հաճախորդների նույնականացման համար անհրաժեշտ նվազագույն ընթացակար-

գերը, հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գրանցման և պահպանման, ինչպես նաև կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, հաշվառման և պահպանման կարգը:

74. Բանկի ներքին հսկողության մարմինը նվազագույնը ուսումնասիրում է բանկի իրականացրած ֆինանսական գործառնությունների, բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների և աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքին և դրա հիման վրա ընդունված այլ ակտերին և բանկի ներքին իրավական ակտերին: Բանկի կառավարման իրավասու մարմինը պետք է սահմանի այն ժամկետը, որի ընթացքում վերը նշված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ գրավոր հաշվետվությունը բանկի ներքին հսկողության մարմինը պետք է ներկայացնի գործադիր մարմնին (ներքին ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև խորհրդին):

75. Բանկի ներքին իրավական ակտերը նվազագույնը ներառում են ներքին իրավական ակտերով նախատեսված ընթացակարգերի և պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կարգը և պայմանները և դրանց չպահպանման համար բանկի ղեկավարների, աշխատակիցների և հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմամբ զբաղվող կառուցվածքային առանձին ստորաբաժանման կամ աշխատակցի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունը:

ԳԼՈՒԽ VII. ԲԱՆԿԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

76. Բանկերի կողմից վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու ժամանակ ներքին հսկողություն իրականացնելու նպատակներն են՝ վճարահաշվարկային ծառայություններին բնորոշ ռիսկերի բացահայտումը, վերլուծությունը և կառավարումը, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցառումների իրականացումը:

77. Բանկն ունի՝

1) տեղեկատվության անվտանգության քաղաքականություն և տեղեկատվական համակարգերում առկա ռիսկերի կառավարման կարգ,

2) արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիր, որում արտակարգ իրավիճակները դասակարգված են ըստ հավանական վնասի մեծության, իսկ ներդրված համակարգերը՝ ըստ կարևորության:

78. Բանկն առնվազն երեք տարին մեկ անգամ, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում գործողությունների նոր ծրագրի մշակման դեպքում իրականացնում է արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ՝ հաշվարկելով արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար անհրաժեշտ ժամանակը և ռեսուրսները:

79. Սույն նվազագույն պայմանների 78-րդ կետում նշված միջոցառումների իրականացման արդյունքներով կազմվում է արձանագրություն:

80. Բանկում առկա են ցանցերի վերաբերյալ փաստաթղթեր, որոնք ներառում են՝

1) ցանցի կառուցվածքը, այդ թվում՝ բոլոր հանգույցներն ու կապերը,

2) ցանցի ճարտարապետությունը, գծապատկերները,

3) կապի սարքավորումները, ծրագրային փաթեթները, ցանցի նպատակն ու մատուցվող ծառայությունները,

4) ներքին լարանցումները:

81. Սույն նվազագույն պայմանների 80-րդ կետի 77-րդ, 79-րդ և 80-րդ կետերում նշված փաստաթղթերին կարող են ծանոթանալ միայն արտոնագրված օգտագործողները:

82. Սույն նվազագույն պայմանների 77-րդ, 79-րդ և 80-րդ կետերում նշված փաստաթղթերի արժանահավատության, արդիականության և պահպանության համար պատասխանատու է ցանցի համար պատասխանատու անձը:

83. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման կազմում ներառվում է տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտով զբաղվող աշխատակից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի իրականացումը պատվիրակվում է այլ անձի:

84. Բանկն ունի անվտանգության պատասխանատու:

85. Բանկի կողմից ծրագրային ապահովման մշակման, ցանցի և/կամ սերվերների սպասարկման և դրանց հետ կապված այլ աշխատանքների կատարման համար մեկ այլ անձի (այսուհետ՝ մշակող կազմակերպություն) ռեսուրսների օգտագործման (այսուհետ՝ Պատվիրակում) դեպքում կնքվում է բանկի և մշակող կազմակերպության միջև պատվիրակման պայմանագիր, որը դրույթներ է պարունակում այն մասին, որ.

1) մշակող կազմակերպությունն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը բանկին այդ մասին առնվազն 6 ամիս առաջ ծանուցելու պայմանով,

2) պայմանագիրը լուծելու դեպքում մշակող կազմակերպությունը պետք է մինչև նոր պատվիրակման պայմանագրի ուժի մեջ մտնելը բավարար օժանդակություն ցուցաբերի բանկին նոր ծրագրային համակարգին անցնելու համար,

3) մշակող կազմակերպությունը չի կարող որևէ անձնական օգտագործման «բեքդոր», այսինքն՝ հեռակա աշխատատեղից կամայական նպատակով ծրագրային համակարգ մուտքի հնարավորություն ունենալ,

4) մշակող կազմակերպության ստեղծած՝ գլխավոր ադմինիստրատորի գաղտնաբառը վերջնական գործարկումից և ծրագրի ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց անմիջապես հետո փոխվում է, իսկ փոխված գաղտնաբառը փակ ծրարի միջոցով հանձնվում է բանկի գործադիր մարմնի ղեկավարին,

5) մշակող կազմակերպությունը կազմակերպում է ուսուցում կամ տրամադրում է համակարգի օգտագործման ձեռնարկներ,

6) պատվիրակման պայմանագրի դրույթների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով (տեխնիկական անվտանգություն, ծրագրերի մշակման և թեստավորման գործընթաց և այլն) բանկը կարող է մոնիտորինգ իրականացնել մշակող կազմակերպությունում,

7) մշակող կազմակերպությունը բանկին իրավունք է վերապահում ծրագրային ապահովումը տրամադրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ անհրաժեշտ անվտանգության թեստավորումների իրականացման նպատակով:

86. Անվտանգության գոտիների ֆիզիկական անվտանգության ապահովման համար բանկն ունի առանձնացված սենյակներ, որտեղ կարող են մուտք գործել միայն համապատասխան թույլտվություն ունեցող անձինք: Այդ նպատակով կարող են կիրառվել մուտքի կառավարման մեխանիզմներ, երկաթյա ճաղեր, ձայնաազդանշանային համակարգեր, արտաքին դռների անվտանգության ձայնային համակարգեր, ավտոմատ փակվող դռներ և այլն: Մուտքի և շարժման տվիչներն ընդգրկում են բոլոր պատուհաններն ու դռները և ստուգվում են առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև նոր տվիչների տեղադրման դեպքում:

87. Սերվերների և ցանցային սարքավորումների տեղադրման համար բանկն ունի առանձնացված տարածքներ, որոնք պետք է պաշտպանված լինեն հրդեհներից և այլ աղետներից:

88. Սերվերային սենյակում առկա է համակարգչի բնականոն աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ ջերմաստիճանը պահպանող համակարգ:

89. Բանկը սահմանված ժամկետներում ստուգում է սարքավորումների աշխատունակությունը՝ կազմելով համապատասխան արձանագրություններ, որտեղ նշվում են ստուգումների ժամկետները, պարբերականությունը, ստուգումն իրականացրած անձինք:

90. Սերվերային սենյակի բոլոր սարքավորումները հողանցվում են, ցանցային սարքավորումները տեղադրվում են ոչ տեսանելի վայրերում, կապուղին ֆիզիկապես պաշտպանված է, միացման կետերը կողպվում են, կազմակերպվում է երկրորդային երթուղիչ (routing), առկա են ցանցային բոլոր սարքավորումների նույնականացուցիչները:

91. Բանկում ապահովվում է սերվերների և ցանցային սարքավորումների անխափան էլեկտրասնուցումը: Անխափան սնուցման աղբյուրներ ունեն առնվազն այն համակարգիչները, որոնք ապահովում են բանկի աշխատանքի անընդհատությունը: Անխափան սնուցման սարքերը կիրառվում են այնպես, որ այն հնարավորություն ընձեռի էլեկտրասնուցման անջատման դեպքում շարունակել աշխատանքը 10-20 րոպեի ընթացքում և սահմանված ձևով անջատել համակարգիչները: Այն դեպքում, երբ բանկի ավտոմատացված համակարգի աշխատանքը պահանջում է էլեկտրասնուցում երկարատև անջատման ժամանակ (30 րոպեից ավելի), բանկն ապահովում է էլեկտրասնուցում գեներատոր-շարժիչի, արևային մարտկոցի կամ այլ միջոցի օգնությամբ, որը կգործարկվի 10-15 րոպեի ընթացքում:

92. Տեղեկատվության անվտանգության ապահովման համար բանկն օգտագործում է.

1) էլեկտրոնային թվային ստորագրություն,

2) անհաջող փորձերի գրանցամատյաններ (log ֆայլ),

3) գաղտնի տեղեկատվության ծածկագրման տեխնիկա:

93. Բանկը պարբերաբար ուսումնասիրում է, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փոփոխում իր աշխատակիցների՝ սահմանափակ մուտքով սենյակներ և տեղեկատվական համակարգ մուտք գործելու իրավասությունները:

94. Բանկում ստեղծվում են օգտագործվող հիմնական սերվերների կրկնօրինակներ՝ ռեզերվային սերվերներ («տաք» կամ «սառը» ռեզերվներ), որոնք յուրաքանչյուր պահի կարող են փոխարինել հիմնականին և ապահովել սարքավորումների ֆիզիկական խափանման հետևանքով բանկի աշխատանքի անընդհատությունը: Այս պահանջն ապահովելու համար բանկն ապահովում է հիմնական սերվերների օգտագործման, թեստավորման և վերականգնման ընթացակարգերի առկայությունը, որտեղ հստակ նշվում են թեստավորման համար պատասխանատու անձինք, թեստավորման պարբերականությունը, սերվերի ռեզերվի՝ սերվերային համակարգչի բացարձակ կրկնօրինակի տեսակը («տաք» կամ «սառը»), թեստավորված վերականգնման ժամանակը:

1) «տաք» ռեզերվ կամ սերվեր՝ պահուստ կամ սերվեր է համարվում այն սերվերը, որի վերականգնումը կատարվում է ռեալ ժամանակում,

2) «սառը» ռեզերվ կամ սերվեր՝ պահուստ կամ սերվեր է համարվում այն սերվերը, որի վերականգնումը կատարվում է որոշակի ժամանակահատվածում:

95. Բանկն ապահովում է իր կողմից օգտագործվող ծրագրային համակարգերում արխիվների վարման հնարավորությունը, ինչպես նաև արխիվների բավարար պաշտպանվածությունը՝ դրանցում պահպանվող տեղեկատվության գաղտնիության աստիճանին համապատասխան:

1) Արխիվը համակարգի աշխատանքն արձանագրող մատյանի և համակարգում մշակվող տեղեկությունների կրկնօրինակումն է, որի նպատակը համակարգի խափանման, տեղեկատվության կորստի կամ այլ նման դեպքերում գրանցված տեղեկատվությունը իրավասու օգտագործողներին կարճ ժամանակահատվածում հասանելի դարձնելն է:

96. Արխիվը վարվում է առանձին կրիչի կամ համակարգչի վրա: Արխիվը չի կարող վարվել այն համակարգչի վրա, որում տեղադրված է տվյալ ծրագիրը:

97. Բանկն ունի արխիվների հետ կապված գործողությունները կանոնակարգող փաստաթուղթ, որում սահմանվում են՝

1) արխիվներում ընդգրկված տվյալների պահպանման ժամկետները,

2) արխիվներում ընդգրկված տվյալների պաշտպանության միջոցները (հսկիչ գումար, էլեկտրոնային ստորագրություն, ծածկագրում),

3) արխիվի արխիվացման (back up) պարբերականությունը և կարգը,

4) այն կրիչների ցանկը, որոնց վրա կազմակերպվում է պահպանությունը (մագնիսական սկավառակներ, ստրիմերներ, կոշտ սկավառակներ), կրիչների պահպանման տեղը, ձևը, արարողակարգը,

5) արխիվներից օգտվելու իրավասություններ ունեցող համապատասխան աշխատակիցների ցանկը՝ հաստատված գործադիր մարմնի կողմից, ինչպես նաև այդ իրավասությունների բովանդակությունը,

6) արխիվների միջոցով տեղեկատվության վերականգնման կարգը, այդ թվում՝ տեղեկատվության վերականգնման դեպքերը, վերականգնման եղանակները, վերականգնման իրավասություններ ունեցող անձինք,

7) արխիվների ստեղծման պարբերականությունը, արխիվներում տեղեկատվության պահպանման նվազագույն ժամկետները,

8) արխիվային տվյալների երկարաժամկետ պահպանման կարգը, եղանակը, միջոցները, արարողակարգը, արխիվներ մուտքի իրավունք ունեցող անձանց ցանկը,

9) օգտագործված գաղտնի տվյալների, այդ թվում՝ կոդերի ցուցակների կամ դրանց պատճենների ոչնչացման ընթացակարգը:

98. Սույն նվազագույն պայմանների 95-րդ, 96-րդ և 97-րդ կետերում նկարագրված արարողակարգերը հստակ և մանրամասն նկարագրվում են համապատասխան փաստաթղթերում:

99. Բանկն ունի ցանցային և համակարգերի ադմինիստրատորների խումբ՝ ներքին և արտաքին ցանցերի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ կիրառական համակարգերի շահագործման համար, ընդ որում՝ ստանդարտ աշխատանքային օրվանից երկար աշխատող կիրառական ծրագրերի համար ապահովվում է ադմինիստրատորների հերթափոխ:

100. Բանկն ունի ադմինիստրատորին փոխարինող անձ՝ ադմինիստրատորի բացակայության դեպքում գործող համակարգերի աշխատանքի անխափանությունը ապահովելու համար, ընդ որում՝ ադմինիստրատորի և փոխարինող ադմինիստրատորի իրավասությունները չեն կարող լինել խաչվող:

1) Խաչվող են՝

ա. համակարգի ադմինիստրատորի և նույն համակարգի անվտանգության պատասխանատուի իրավասությունները,

բ. «Գործառնական օր» ծրագրի ադմինիստրատորի և SWIFT, Bankmail համակարգի ադմինիստրատորի իրավասությունները,

գ. CBANet ադմինիստրատորի և Bankmail ադմինիստրատորի իրավասությունները,

2) Իրավասությունները խաչվող են համարվում նաև այն դեպքում, երբ համատեղող ադմինիստրատորը ստանում է որևէ գործողության միանձնյա կատարման հնարավորություն,

3) Կազմակերպությունը պետք է առաջնորդվի համապատասխան համակարգի (SWIFT, CBANet և այլն) համար սահմանված իրավասությունների խաչվելիության վերաբերյալ կանոններով,

101. Ցանցերը սպասարկող անձնակազմի կողմից համակարգի խափանման ռիսկը կանխելու կամ նվազեցնելու համար բանկը.

1) ցանցում գրանցված, ցանցը սպասարկող, այն նախագծող բոլոր անդամների հետ ստորագրում է տեղեկատվության գաղտնիության պահպանման համաձայնագիր,

2) որպես ցանցային ադմինիստրատորներ աշխատանքի է ընդունում միայն համապատասխան կրթություն ունեցող մասնագետների,

3) բացառում է ադմինիստրատորների կողմից ֆինանսական գործարքներ կատարելու հնարավորությունը,

4) աշխատանքները կազմակերպում է այնպես, որ նվազեցնի մարդկային գործոնը և չարտոնված գործողությունների թիվը (իրավասությունների տարանջատում, գործողությունների գրանցում, վերահսկում և այլն):

102. Բանկն ապահովում է ցանցի այնպիսի կառուցվածք, որպեսզի՝

1) հարցումն անցկացվի միջցանցային էկրանի (firewall) միջով,

2) ցանցային անուններն ու կառուցվածքը չբացահայտվեն արտաքին օգտագործողներին,

3) կարգավորեն ցանց մուտք գործելու տեղերը,

4) հաստատվի արտաքին միացման իսկությունը,

5) ցանցի կառավարումն ամբողջությամբ հնարավոր լինի նախանշված վայրից,

6) ակտիվացվեն ցանցի կառավարման հաշվետվությունների և աուդիտորական դիտարկումների հնարավորությունները:

103. Բանկն ունի արտաքին կրիչների օգտագործման կարգ:

104. Բանկը կիրառում է միջցանցային էկրան (firewall), որը հեռացնում է բոլոր այն էլեկտրոնային նամակները, որոնք ունեն անթույլատրելի կամ կասկածելի պարունակություն:

105. Համակարգ կարող են մուտք գործել միայն համապատասխան իրավասություն ունեցող աշխատակիցները:

106. Բանկն ունի օգտագործողների գրանցման քաղաքականություն: Օգտագործողների գրանցումը և օգտագործողներին իրավասությունների տրամադրումն իրականացվում է՝ համաձայն նրանց աշխատատեղի նկարագրի:

107. Օգտագործողի գրանցման ժամանակ տվյալները մուտքագրվում, ստուգվում և հաստատվում են առնվազն 2 աշխատակիցների կողմից:

108. Բանկն ունի գաղտնաբառերի, գաղտնաբառալիների և էլեկտրոնային նույնականացուցիչ ֆայլերի պահպանման և կառավարման քաղաքականություն, որը պարունակում է՝

1) բարդ (առնվազն 4 նիշանոց, տառեր և թվեր պարունակող, անձնական տվյալներ չպարունակող) գաղտնաբառերի կիրառության պահանջ,

2) գաղտնաբառերի պահպանման և փոփոխության պահանջներ,

3) էլեկտրոնային նույնականացուցիչ ֆայլերի օգտագործման պահանջներ:

109. Արտաքին յուրաքանչյուր մուտք անձամբ թույլատրվում է ցանցային ադմինիստրատորի կողմից, իսկ մուտքի վերաբերյալ գրանցամատյանում նշվում են՝

1) արտոնագրված արտաքին օգտագործողի տվյալները (անուն, ազգանուն, նույնականացուցիչ ID),

2) ցանցի թույլատրելի (հասանելի) հատվածները,

3) միացման համար պատասխանատու անձանց տվյալները:

110. Անօրինական արտաքին միացումները կամ նման միացումների փորձերը գրանցվում և մանրամասն հետազոտվում են՝ նման միացումները հետագայում կանխելու կամ այդ հասցեն բլոկավորելու նպատակով:

111. Արտաքին միացումների անհրաժեշտությունը դադարելու դեպքում դրանք անմիջապես հեռացվում են՝ իրենց պարագաներով:

112. Անօրինական մուտքի հայտնաբերման համակարգը հասանելի է միայն արտոնագրած օգտագործողին:

113. Ցանցին ցանկացած անլար (wireless) միացում հաստատվում է ցանցի ադմինիստրատորի կողմից:

114. Ցանցը պաշտպանվում է միջցանցային էկրանի (firewall) միջոցով:

115. Անլար (wireless) միացումների համար կիրառվում են հետևյալ սահմանափակումները՝

1) Այ-փի (IP) հասցեի ֆիլտրացիա, որը թույլ կտա ցանցին միանալ միայն արտոնագրված համակարգիչներին,

2) ՄԱՔ (MAC) հասցեների ֆիլտրացիա, որը թույլ կտա միանալ անլար (wireless) ներքուորք ինտերֆեյս քարդսին (Network Interface Cards (NIC) միայն հավաստագրված ՄԱՔ (MAC) հասցեներով:

116. Ակտիվացվում են այնպիսի գաղտնագրային ֆունկցիաներ, որոնք կապահովեն գաղտնագրության և պաշտպանության էլեմենտար մակարդակ, ինչպես նաև գաղտնագրման բանալիների փոփոխումը առնվազն վեց ամիսը մեկ անգամ:

117. Հույժ կարևոր միացման կետերն ունեն առավել մեծ պաշտպանվածություն՝ ՎՓՆ (VPN) օգտագործման միջոցով կամ այլ կերպ:

118. Բանկն ունի միջցանցային էկրանների (firewall) կառավարման կարգ, որը պետք է սահմանի հետևյալ պահանջները.

1) որոշակի տիպի ինֆորմացիոն հոսքի (traffic) ֆիլտրացում (Այ-Փի (IP) հասցեները, Թի-Սի-Փի (TCP) պորտերը),

2) որոշակի ինֆորմացիոն հոսքի (traffic) ձևերի կամ տեսակների արգելում,

3) հարձակումներից պաշտպանություն,

4) ցանցի մասին տվյալների գաղտնիության պահպանում:

119. Միջցանցային էկրանի (firewall) կառուցվածքը պետք է ապահովի.

1) կապի այն միջոցների ստուգման հնարավորությունը, որոնք կարող են հեշտությամբ կեղծվել (ԴՆՍ (DNS), ՖՏՊ (FTP), ՆՆԹՓ (NNTP), ՌԻՓ (RIP), ՍՄԹՓ (SMTP), Թելնեթ (Telnet), Յու-Յու-Սի-Փի (UUCP)),

2) այն փաթեթների բլոկավորումը, որոնք օգտագործվում են ծառայության մերժման (denial of service), հարձակումների համար (Այ-Սի-Էմ-ՓԻ էքո (ICMP Echo), Յու-Դի-Փի (UDP) և Թի-Սի-Փի էքո (TCP Echo), Չարջեն (Chargen) և Դիսքարդ (Discard)),

3) ինֆորմացիոն հոսքի (traffic) մերժումն այնպիսի հասցեներից, որոնք կարող են լինել ապօրինի ձեռք բերված (spoofed), (հասցեն պատկանում է ցանցին, բայց ստեղծումը եղել է ցանցից դուրս):

120. Միջցանցային էկրանները (firewall) ունակ են բլոկավորելու կապի որոշակի հարցումները, հիմնվելով.

1) հասցեի վրա (կոնկրետ IP հասցե),

2) պորտի վրա (ՖԹՓ (FTP) 20 և 21 կամ Թելնեթ (Telnet) 23):

121. Ֆիլտրացումը կատարվում է բանկի կողմից ընդունված կանոնների հիման վրա, որոնք.

1) մշակվել և փորձարկվել են ցանցային ադմինիստրատորի կողմից,

2) եղել են «ամենաքիչ հարցման» (least access) հիման վրա,

3) պարբերաբար վերանայվում են:

122. Նոր կամ փոփոխված կանոնները կարող են կիրառվել միայն դրանց թեստավորումից հետո:

123. Ցանցի մասին տեղեկատվության բացահայտումը սահմանափակվում է ցանցային մակարդակում հասցեները ձևափոխելու միջոցով (հասցեի փոխարինում ցանցից դուրս գալու դեպքում) և ծրագրային մակարդակում փրոքսի սերվերների (proxy server) օգտագործմամբ (էյչ-Թի-Թի-Փի (HTTP) հարցումները անցկացվում են էյչ-Թի-Թի-Փի (HTTP) փրոքսի սերվերի (proxy server) միջով):

124. Բանկն ունի համակարգ մուտք գործելու և աշխատանքներ կատարելու ժամանակների վերաբերյալ քաղաքականություն, որն առնվազն ներառում է՝

1) աշխատանքային օրերից և ժամերից դուրս համակարգ մուտքի արգելք՝ բացառությամբ գործադիր մարմնի գրավոր թույլտվության առկայության դեպքերի, որում նշվում է թույլտվություն ստացող անձի անունը, ազգանունը, թույլատրվող մուտքի օրը, ժամը, նպատակը, հասանելիության գոտիները և ենթադրվող տևողությունը,

2) պարապուրդի ժամանակ օգտագործողի համակարգից ավտոմատ անջատման պահանջ:

125. Բանկում մոնիտորինգի արդյունքներն առնվազն եռամսյակը մեկ ներկայացվում են գործադիր մարմնի քննարկմանը, որի արդյունքներն արձանագրվում են:

126. Բանկն ուսումնասիրում է գործող ցանցային սարքավորումների շահագործումը նորմալ և զբաղված վիճակում, այդ թվում՝

1) կիրառի ցանցի ավտոմատ մոնիտորինգ իրականացնող ծրագրեր,

2) պարբերաբար ուսումնասիրի ցանցի լոգ ֆայլերը,

3) հետազոտի ցանցի խցանումները և գերծանրաբեռնվածությունը,

4) համապատասխան համակարգերի միջոցով (Նեսուս (Nessus), Փինգուեյր (Pingware) կամ ՍԱԹԱՆ (SATAN)) ստուգի ցանցի և ցանցային սարքավորումների խոցելիությունը,

5) փնտրի չհավատարմագրված անլար (wireless) ցանցեր:

127. Անօրինական մուտքերի հայտնաբերման նպատակով բանկը ձեռնարկում է միջոցառումներ, որոնք ուղղված են.

1) հարձակման հայտնի ձևերը հայտնաբերելուն,

2) անօրինական մուտքի հայտնաբերման համակարգը պարբերաբար թարմացնելուն, հարձակման նոր ձևերի մասին տվյալներն ավելացնելուն,

3) անհասկանալի կամ չարտոնված գործողությունները համապատասխան գրանցամատյանում գրանցելուն,

4) անօրինական մուտքի հայտնաբերման համակարգը տարբեր տեսակի հարձակումներից պաշտպանելուն:

128. Բանկը պետք է ունենա հեռակա (remote) աշխատակայանի միջոցով աշխատելու ընթացակարգ, որում մանրամասն նկարագրվում են.

1) աշխատակայանից օգտվելու դեպքերը,

2) անվտանգության ապահովման միջոցները,

3) այն անձանց ցանկը, որոնց տրված են աշխատակայանից օգտվելու իրավասություններ:

129. Աշխատակայանում գրանցվում է անվտանգության պատասխանատու աշխատակից, որն ադմինիստրատորի հետ համատեղ տնօրինում է մուտքի գաղտնաբառը:

130. Հեռակա աշխատանքները (հեռակա թեստավորումը)՝

1) կատարվում են նախապես որոշված շրջանակներում, պլանավորված են և համաձայնեցված գործադիր մարմնի հետ,

2) տրամադրում են անհատական արտոնություններ,

3) տրամադրում են սահմանափակ արտոնություններ՝ կախված կանխորոշված աշխատանքի տեսակից,

4) գրանցվում են հատուկ գրանցամատյանում:

131. Հեռակա աշխատանքների ավարտից անմիջապես հետո կատարվում է հեռակա աշխատանքների լոգ ֆայլերի դիտարկում և կազմվում է արձանագրություն: Այն դեպքում, երբ կատարված հեռակա աշխատանքները դուրս են եկել բանկի գործադիր մարմնի հետ նախապես համաձայնեցված շրջանակներից, արձանագրությունը մանրամասն ուսումնասիրվում է գործադիր մարմնի կողմից:

132. Բանկի ծրագրային ապահովումները վերջնական ներդրումից առաջ թեստավորվում են բանկային ավտոմատացված համակարգերի աշխատանքի անխափանությունն ապահովելու նպատակով, ընդ որում՝ տեստավորման արդյունքներով կազմվում է արձանագրություն:

133. Այն դեպքում, երբ բանկն ինքնուրույն է մշակել ծրագրային համակարգը, պետք է առկա լինեն՝

1) հստակ մշակված տեխնիկական առաջադրանքը և պահանջները,

2) ծրագրային համակարգի մշակման մասնակիցների ցուցակը, մասնակիցների զբաղեցրած պաշտոնները և մասնագիտական կրթությունը,

3) ծրագրի մշակման լեզուն, ինտերֆեյսը,

4) ծրագրային կոդի գտնվելու վայրը,

5) ծրագրային կոդի մեջ փոփոխություններ կատարելու հնարավորություններ ունեցող աշխատակիցների ցուցակը,

6) թեստավորող խմբի անդամների ցուցակը, մասնագիտական որակավորումը, թեստավորման արձանագրությունը, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մնացած մասնակիցների ստորագրությունները,

7) այդ ծրագիրն օգտագործող ստորաբաժանումների աշխատակիցների՝ թեստավորմանը մասնակցությունը փաստող փաստաթղթերը,

8) ծրագրային ապահովման օգտագործողների ուղեցույցը կամ այլ ուղղորդող գրքեր, փաստաթղթեր:

134. Այն դեպքում, երբ բանկի ծրագրային համակարգը ստեղծվել է մշակող կազմակերպության կողմից, պետք է առկա լինեն՝

1) բանկի կողմից կիրառվող ծրագրային ապահովման վերաբերյալ տվյալ բանկի և մշակող կազմակերպության միջև կնքված պայմանագիրը,

2) մշակող կազմակերպությանը ներկայացված հստակ տեխնիկական առաջադրանքը և պահանջները,

3) նոր մշակված ծրագրային ապահովման թեստավորման արձանագրությունը և այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են թեստավորման արդյունքները, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր մարմնի ղեկավարի և մնացած մասնակիցների ստորագրությունները,

4) բանկի և մշակող կազմակերպության կողմից ստորագրված ընդունման-հանձնման ակտը,

5) մշակող կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ հեղինակավոր աուդիտորական կազմակերպության եզրակացությունը,

6) մշակող կազմակերպության՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխանությունը հավաստող վկայագիր կամ միջազգային հավաստագրման որևէ կազմակերպության կողմից թողարկված վկայագիր կամ որևէ ապահովագրական ընկերությունում ծրագրային համակարգի ապահովագրված լինելը հավաստող փաստաթուղթ:

135. Բանկի ծրագրային ապահովման նոր կամ թարմացված տարբերակը ներդրվում է միայն այն դեպքում, երբ այն՝

1) անցել է թեստավորման բոլոր փուլերը և առկա է թեստավորման արձանագրությունը,

2) ընդունվել է համակարգի պատվիրատուի (օգտագործողի) կողմից՝ ընդունման – հանձնման ակտի ստորագրությամբ:

136. Բանկն ունի արտակարգ իրավիճակներում գործողության կարգ:

137. Ցանցի խափանման դեպքում այդ մասին տեղեկացվում են պատասխանատու անձինք (ցանցի ադմինիստրատորը), արգելվում են աշխատակիցների կողմից բոլոր տեսակի գործողությունները մինչև ցանցի ամբողջական վերականգնումը:

138. Բանկը հայտնաբերում է ցանցի խափանման պատճառը, իսկ վերականգնողական աշխատանքների արդյունքներով կազմվում է արձանագրություն:

139. Ցանցի խափանման դեպքերը ավտոմատ կամ ոչ ավտոմատ կերպով գրանցվում են հատուկ գրանցամատյանում և դասակարգվում են ըստ տեսակի (ֆիզիկական խափանում, հարձակում) և ըստ հասցված վնասի:

140. Բանկը թեստավորման միջոցով պարզում է, թե արդյոք ցանցի խափանման կամ վերականգնման արդյունքում չի խաթարվել ցանցի անվտանգությունը: Թեստավորման արդյունքներով կազմվում է արձանագրություն:

141. Բանկը ցանցի վերականգնումից անմիջապես հետո ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ՝ նույնատիպ խափանումները ապագայում կանխելու նպատակով:

142. Ցանցի մեկ հատվածի խափանումից խուսափելու համար ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.

1) խափանման նշանի դեպքում ցանցի հոսքի ավտոմատ փոփոխում (re-routing),

2) կրկնակի կամ այլընտրանքային միջցանցային էկրանների (firewall), կոմուտատորների (switch) և հոսանքի աղբյուրների տեղայնացում:

143. Կարևոր ցանցային սարքավորումների և ծրագրային ապահովումների խափանման ռիսկի նվազեցման նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.

1) արտոնագրված, որակյալ սարքավորումների և ծրագրային ապահովումների ձեռքբերում,

2) պարբերական թարմացումների կատարում,

3) կարևոր սարքավորումների և ծրագրային ապահովումների կարճ ժամանակահատվածում փոխարինելիության ապահովում,

4) ցանցի նպատակին և կառուցվածքին համապատասխանող պրոտոկոլների (protocol) օգտագործում:

144. Միջցանցային էկրանների (firewall) թերությունների հայտնաբերման և վերացման նպատակով բանկն իրականացնում է միջցանցային էկրանների (firewall) պարբերական դիտարկումներ և թեստավորումներ՝ համապատասխան ծրագրերի միջոցով կամ բոլոր նախազգուշական ցուցումների դիտարկումների միջոցով:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 22-րդ և 23-33[1]-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը լրացնել նոր 90.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«90.1. Բանկը, բանկի մասնաճյուղը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս, իր տարածքից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա նշում է միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 մարտի 2008 թ., N 76-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ հոդվածների դրույթները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը հաստատելու հաստատելու մասին» թիվ 240-Ն որոշմամբ հաստատված «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը լրացնել նոր 46.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«46.2. Դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունը, դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս, իր տարածքից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա պետք է նշի միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 մարտի 2008 թ., N 78-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. մարտի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.04.08 թ. (ՀՀԳՏ N15 (289), 4.05.08):

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 578-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 578-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալը, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը լրացնել նոր 67.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«67.1. Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս իր տարածքից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա նշում է միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 մարտի 2008 թ., N 79-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, 49-րդ հոդվածի 1-ին կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին» թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի 59-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. մարտի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.04.08 թ. (ՀՀԳՏ N15 (289), 4.05.08):

«Իր տարածքից դուրս «Տարադրամի փոխանակման կետ» արտահայտությամբ վահանակ ունենալու դեպքում փոխանակման կետը վահանակի վրա նշում է միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 մարտի 2008 թ., N 80-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 15-ի թիվ 496-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 15-ի «Ինկասացիոն կազմակերպությունների և դրանց մասնագիտացված աշխատակիցների կողմից կանխիկ դրամի և այլ արժեքների ընդունման, փոխադրման (տեղափոխման), հանձնման և պահպանման կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 496-Ն որոշմամբ հաստատված «Ինկասացիոն կազմակերպությունների և դրանց մասնագիտացված աշխատակիցների կողմից կանխիկ դրամի և այլ արժեքների ընդունման, փոխադրման (տեղափոխման), հանձնման և պահպանման կարգն ու պայմանները սահմանելու մասին» կարգը լրացնել 5.3 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.3. Կազմակերպությունից մինչև ինկասացիոն մեքենա և ինկասացիոն մեքենայից մինչև կազմակերպություն կանխիկ դրամի փոխադրման (տեղափոխման) անվտանգության հետ կապված ինկասացիոն կազմակերպության և կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են նրանց միջև կնքված պայմանագրով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 մարտի 2008 թ., N 81-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. մարտի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.04.08 թ. (ՀՀԳՏ N15 (289), 4.05.08):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԱՊՐԻԼ 2008)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի մայիսի 5-ի նիստի «2008 թվականի մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնակարանային գնաճի) և արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի (բացառությամբ արտաքին առևտրի), դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնակարանային գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում: Դրամավարկային ցուցանիշները և ՀՀ միջազգային պահուստները հաշվարկված են հաշվեգրման սկզբունքով:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2008 թվականի մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի մայիսի 5-ի նիստի արձանագրություն 94

Իրական հատվածի ցուցանիշներ 99

Պետական բյուջեի ցուցանիշներ 102

Արտաքին հատվածի ցուցանիշներ 103

Դրամավարկային ցուցանիշներ 105

Ֆինանսական շուկա 116

Վարկային ներդրումներ 137

Առևտրային բանկերի ավանդներ 148

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 150

Վճարահաշվարկային համակարգ 154

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(05.05.2008)

2008 թվականի մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2008 թվականի մայիսի 5-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Վ. Մովսեսյանը, Վ. Գաբրիելյանը, Ա. Նորեկյանը և Կ. Մինասյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչև մայիսն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների զարգացումների և ապագա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:

Գնաճ

2008 թվականի ապրիլին մարտի համեմատությամբ արձանագրվել է 1.1% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 10.7%՝ շուրջ 4 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ տարվա վերջին արձանագրված մակարդակից: Ընդ որում, պարենային ապրանքների գներն ապրիլին 12-ամսյա կտրվածքով աճել են 13.8%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 4.4%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ 8.3%-ով:

Ապրիլին արձանագրված գնաճը, ինչպես և նախորդ եռամսյակում, շարունակել է հիմնականում պայմանավորվել «Հացամթերք», «Կենդանական և բուսական յուղեր» ապրանքախմբերով, որոնց գները 12-ամսյա կտրվածքով աճել են համապատասխանաբար 41.3%-ով (նպաստումը գնաճին՝ 6.1 տոկոսային կետ) և 38.5%-ով (նպաստումը գնաճին՝ 1.8 տոկոսային կետ): Շարունակել են բարձրանալ նաև ծառայությունների սակագները, որոնք ապրիլին ավելացել են 2.6%-ով, ընդ որում՝ սակագների էական աճ է արձանագրվել բուժսպասարկման և տրանսպորտային ծառայությունների ոլորտում:

Բնականոն գնաճի ապրիլի միտումները ևս վկայում են գների ընդհանուր մակարդակի բարձրացման մասին. նախորդ տարվա վերջի համեմատ բնականոն գնաճի մակարդակը բարձր է եղել շուրջ 3 տոկոսային կետով[1]:

Արտաքին միջավայր

2008 թվականի ապրիլին արտաքին հատվածից բխող գնաճային ճնշումները շարունակել են մնալ շատ բարձր, թեև նկատվել են թուլացման միտումներ: Որոշ ապրանքների գների աճը գերազանցել է կանխատեսված մակարդակը (օրինակ՝ նավթ, պղինձ, բրինձ), իսկ մյուս ապրանքներինը՝ ընդհակառակը (օրինակ՝ ոսկի և հացահատիկ): Նավթի միջազգային գները, շարունակելով պայմանավորված լինել հիմնականում աշխարհաքաղաքական զարգացումներով, ապրիլին մոտեցել են 120 ԱՄՆ դոլար բարելի դիմաց նշագծին՝ Նյու Յորքում գնանշվող Light Sweet տեսակի համար, և 117 ԱՄՆ դոլար բարելի դիմաց՝ Լոնդոնում գնանշվող Brent տեսակի համար:

Նմանօրինակ իրավիճակ է գրանցվել նաև պղնձի շուկայում. պղնձի գինը գերազանցել է 8700 ԱՄՆ դոլար տոննայի դիմաց մակարդակը՝ ամիսն ավարտելով 8575 ԱՄՆ դոլար գնանշմամբ՝ պայմանավորված կայուն բարձր պահանջարկով:

Ոսկու շուկայում նկատվել է որոշակի սպեկուլյատիվ տրամադրվածության թուլացում, որի արդյունքում ոսկու գինը մարտ ամսվա միջին 961 ԱՄՆ դոլար՝ ունցիայի դիմաց մակարդակից ապրիլին նվազել է մինչև 913 ԱՄՆ դոլար:

---

[1] *ՀՀ ԿԲ կողմից մշակված բնականոն գնաճի հաշվարկման նոր մեթոդաբանությունը տե՛ս «ՀՀ ԿԲ բանբեր, 2008 թ. 1-ին եռամսյակ» պարբերականում:*

Գնաճային ճնշումները շարունակել են դրսևորվել նաև բրնձի շուկայում, որտեղ մի քանի երկրների կողմից (Հնդկաստան, Վիետնամ և այլն) արտահանման սահմանափակումը հանգեցրել է գների թռիչքաձև աճի: 100 ֆունտ բրնձի գինը Չիկագոյի ապրանքահումքային բորսայում բարձրացել է մարտի միջին 18.2 ԱՄՆ դոլարից մինչև ապրիլի միջին 21.6 ԱՄՆ դոլար կամ 18.6 տոկոսով՝ ապրիլի վերջին հասնելով 23.2 ԱՄՆ դոլարի: Հացահատիկի գները որոշակի նվազել են մարտին գրանցված բուշելի դիմաց՝ 11.9 ԱՄՆ դոլարից մինչև ապրիլին գրանցված 9.9 ԱՄՆ դոլար՝ ամսվա վերջին հասնելով 9.1 ԱՄՆ դոլարի: Այս նվազման պատճառը 2008/2009 մարքեթինգային տարվա հացահատիկի լավ բերքի ակնկալիքներն են, ըստ որի՝ վերջին մի քանի տարիներին առաջին անգամ առաջարկը կարող է գերազանցել պահանջարկը և հանգեցրել պաշարների ավելացման:

Ինչ վերաբերում է մյուս ապրանքներին, մասնավորապես՝ շաքարավազին և կարագին, ապա այս շուկաներում էական շարժեր չեն գրանցվել, թեև գների մակարդակները բավականին բարձր են:

Ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի արժեզրկումը գերազանցել է սպասումները՝ ապրիլի վերջին հասնելով գրեթե 1.6 ԱՄՆ դոլար՝ եվրոյի դիմաց սահմանագծին: Դրա պատճառը ԱՄՆ և Եվրոգոտու տոկոսադրույքների տարբերության խորացումն է (դիֆերենցիալը) ու վերջինիս վերաբերյալ սպասումները: Եթե Ֆեդերալ Պահուստային համակարգն ապրիլին տոկոսադրույքները նվազեցրել է 25 բազիսային կետով, ապա Եվրոպական Կենտրոնական բանկը ամենայն հավանականությամբ տոկոսադրույքների փոփոխություն չի իրականացնի: Նշենք նաև, որ ապրիլ ամսին իրացվելիության սղության պատճառով տեղի է ունեցել LIBOR միջբանկային տոկոսադրույքների աճ, որը ստիպել է աշխարհի առաջատար կենտրոնական բանկերին իրացվելիության ներարկման նոր միջոցառումներ ձեռնարկել:

Այս ամենը արտաքին միջավայրի գնաճային ճնշումները և ռիսկերը դեռևս պահպանում է շատ բարձր մակարդակի վրա, թեև ուրվագծվում են կայունացման որոշակի միտումներ, որոնք մեծամասամբ կախված են ԱՄՆ և համաշխարհային տնտեսության ապագա զարգացումներից:

Համախառն առաջարկ

2008 թվականի առաջին եռամսյակում տնտեսական աճը կազմել է 8.8%: Ընդ որում, ինչպես և նախորդ տարի, այս տարի ևս այն ապահովվել է ծառայությունների և շինարարության ճյուղերում ավելացված արժեքի բարձր աճի հաշվին, մինչդեռ արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը չեզոք ազդեցություն են ունեցել տնտեսական աճի վրա:

Արդյունաբերության թողարկման ծավալները տարվա առաջին եռամսյակում նվազել են 0.7%-ով՝ պայմանավորված հանքագործական և սննդի արդյունաբերությունում արձանագրված նվազմամբ, ինչը ժամանակավոր բնույթ է կրում՝ կապված որոշ տեխնիկական հանգամանքների հետ[2]: Ի տարբերություն դրան, աճ է արձանագրվել էներգետիկայի, մետաղագործության և շինանյութերի արտադրության ենթաճյուղերում:

Շինարարության ճյուղում տարվա առաջին եռամսյակում արձանագրվել է շինարարության ծավալների 19.4% աճ: Այն պայմանավորվել է բնակարանային շինարարության, մշակող արդյունաբերության ենթաճյուղերում և ծառայությունների ոլորտում կապիտալ ներդրումների ավելացմամբ:

Ծառայությունների ոլորտում առաջին եռամսյակում արձանագրվել է 5.7% իրական աճ, որը զիջել է կանխատեսված ցուցանիշը: Ընդհանուր առմամբ, ծառայությունների հիմնական մասի աճի տեմպերի նվազումը փետրվար և մարտ ամիսների նախընտրական և հետընտրական զարգացումների արդյունք է: Միաժամանակ, մեծածախ առևտրի ծավալների կրճատումը պայմանավորվել է ցորենի ներկրման և ալյուրի արտադրության ծավալների նվազմամբ, իսկ ավտոմեքենաների առևտրի ծավալների աճը պահպանվել է բարձր մակարդակի վրա՝ 29%:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գրեթե չի փոխվել: Ընդ որում, բուսաբուծության ենթաճյուղում արձանագրվել է աճ, մինչդեռ անասնապահության թողարկման ծավալները փոքր-ինչ զիջել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

---

[2] Մասնավորապես՝ սննդի արդյունաբերությունում արձանագրվել է ալյուրի արտադրության նվազում, որը պայմանավորվել է ցորենի միջազգային գների համատարած ավելացման սպասումների հետևանքով 2007 թվականի վերջին ցորենի մեծածավալ ներկրմամբ, հետևաբար նաև ալյուրի արտադրության ծավալների զգալի աճով:

Ամփոփենք՝ առաջին եռամսյակում արձանագրված տնտեսության ճյուղային զարգացումները, փոքր-ինչ շեղվելով կանխատեսվածից, էական ազդեցություն չեն ունենա տարվա հաջորդ եռամսյակների կանխատեսումների վրա:

Աշխատանքի շուկա

2008 թ. առաջին եռամսյակում տնտեսության միջին անվանական աշխատավարձն աճել է 20.7%-ով[3] գնահատված 21.0%-ի փոխարեն: Գործազրկության միջին մակարդակը նվազել է 1 տոկոսային կետով և կազմել 6.4%՝ համընկնելով գնահատմանը: Աշխատանքի արտադրողականությունն ավելացել է ընդամենը 7.8%-ով, մինչդեռ կանխատեսված ցուցանիշը 9.2% էր: Արտադրողականության ցածր աճը հիմնականում պայմանավորվել է ՀՆԱ փաստացի իրական աճի՝ կանխատեսված մակարդակից ցածր լինելով:

Աշխատանքի արտադրողականության հարաբերականորեն ցածր աճը չեզոքացրել է աշխատանքի շուկայից առաջացող գնաճային ճնշումների ընդամենը 20%-ը: Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ աշխատավարձի աճը 12-ամսյա գնաճը խթանել է 1.0 տոկոսային կետով, մինչդեռ աշխատանքի արտադրողականության աճը գնաճը մեղմել է ընդամենը 0.2 տոկոսային կետով, որի արդյունքում աշխատանքի շուկայի զուտ ազդեցությունը գնաճի վրա եղել է 0.8 տոկոսային կետ խթանող:

2008 թ. առաջին եռամսյակում ոչ առևտրային փոխանցումների զուտ ներհոսքի տ/տ աճը կազմել է 46.6%, ինչը 6.0 տոկոսային կետով բարձր է վերջին գնահատումներից: Ընդ որում, գրանցվել է ոչ առևտրային բնույթի փոխանցումների ներհոսքի տ/տ 30.9% աճ՝ արտահոսքի 7.7% կրճատման պայմաններում:

Համախառն պահանջարկ

Մասնավոր հատվածի սպառման և ներդրումների 2008 թվականի առաջին եռամսյակի գնահատումները[4] մնացել են անփոփոխ: Ըստ այդ գնահատումների՝ մասնավոր ծախսումների իրական աճը կազմել է 10.5%. մասնավոր ներդրումներն ավելացել են 16.0%-ով, իսկ մասնավոր սպառումը՝ 9.8%-ով:

Առաջին եռամսյակում մասնավոր հատվածի սպառման և ներդրումների գնահատած աճը չի գերազանցել պոտենցիալը, և հետևաբար լրացուցիչ գնաճային ճնշումներ չեն առաջացել:

2008 թ. առաջին եռամսյակն ավարտվել է ապրանքների և ծառայությունների արտահանման[5] դոլարային ծավալների տ/տ 6.2% աճով, ինչը բավականին ցածր է վերջին գնահատումներից: Ծառայությունների առաջին եռամսյակի ցուցանիշները նույնպես գնահատվել են նվազման ուղղությամբ՝ հիմնականում տրանսպորտային ծառայությունների արտահանման ցուցանիշի հաշվին:

Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա աճի բարձր տեմպերը պահպանվել են 2008թ. առաջին եռամսյակում: Ապրանքների և ծառայությունների ներմուծման[6] դոլարային ծավալների տ/տ աճը ընթացիկ եռամսյակում կազմել է 30.3%: Վերջինս գրեթե համահունչ է վերջին գնահատումներին:

2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի նախնական ամփոփ ցուցանիշների համաձայն՝ եկամուտներն ապահովել են ծրագրված մակարդակը, իսկ ծախսերի գծով արձանագրվել են տնտեսումներ: Այս պարագայում հարկաբյուջետային ազդակն էապես շեղվել է կանխատեսվածից և ընդլայնողի փոխարեն կազմել է զսպող: Ընդ որում, նշված շեղումն արձանագրվել է ծախսերի գծով կանխատեսված ընդլայնող ազդակի նկատմամբ ավելի փոքր՝ 2.7 տոկոս ընդլայնող ազդակի ձևավորմամբ: Ծախսերի ազդակի շեղման պատճառ է հանդիսացել ծախսերի՝ կանխատեսվածի համեմատությամբ ընդամենը 10.0 մլրդ դրամի տնտեսումը, որն առաջին եռամսյակում ձևավորված ՀՆԱ մեջ զգալի կշիռ է կազմել:

---

[3] Տնտեսության միջին աշխատավարձի հաշվարկներում օգտագործված մարտ ամսվա ցուցանիշը գնահատական է (աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական զեկույցը):

[4] Գնահատումների հիմքում մասնավոր սպառման և ներդրումների 2007 թվականի չորրորդ եռամսյակի փաստացի ցուցանիշներն են:

[5] Հունվար-մարտին ապրանքների արտահանման (ՖՕԲ) ծավալների աճը կազմել է 1.5%: Ծառայությունների ցուցանիշները կանխատեսումներ են:

[6] Ապրանքների ներմուծման (ՍԻՖ) ծավալների աճը հունվար-մարտին կազմել է 31.5%: Ծառայությունների ցուցանիշները կանխատեսումներ են:

2008 թվականի առաջին եռամսյակում հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը գնահատող հարկաբյուջետային ազդակի նախնական փաստացի ցուցանիշը[7] կազմել է 1.1 տոկոս զսպող: Ընդ որում, եկամուտների ազդակը կազմել է կանխատեսված՝ 3.8 տոկոս զսպող, իսկ ծախսերի գծով՝ 2.7 տոկոս ընդլայնող:

Ինչ վերաբերում է հարկաբյուջետային հատվածի ապրիլ ամսվա ցուցանիշներին, ապա ըստ նախնական փաստացի ցուցանիշների, ամսվա արդյունքում հարկերը շուրջ 6.0 մրդ դրամով, իսկ ծախսերը շուրջ 10 մլրդ դրամով գերազանցել են ամսվա համար ծրագրված ցուցանիշները: Հարկ է նշել, որ ծախսերի ծրագրվածի համեմատությամբ գերակատարումը նպաստել է նախորդ եռամսյակից փոխանցված ծախսերի գծով առաջացած տնտեսումների չափի մեղմմանը:

Ամփոփենք՝ ներքին տնտեսության հատվածում, հարկաբյուջետային հատվածի կողմից զսպող ազդակի և աշխատուժի շուկայի կողմից ընդլայնող ազդեցության դրսևորման պարագայում, ընդհանուր առմամբ, եռամսյակի համար կանխատեսված գնահատումները մնացել են նույնը՝ գնաճի վրա ներքին պահանջարկի կողմից չեզոք ազդեցություն:

Փող և վարկ

2008 թվականի առաջին եռամսյակում՝ մասամբ պայմանավորված դրամայնացման գործընթացի փոքր-ինչ դանդաղմամբ, սպասվածից համեմատաբար քիչ տ/տ աճ է արձանագրվել դրամային զանգվածի բաղադրիչների ցուցանիշների գծով. դրամային զանգվածն աճել է 55.3%-ով, իսկ դրամային ավանդները՝ 62.5%-ով: Այս պայմաններում դրամայնացման գործակցի տ/տ աճը կազմել է 31.7%՝ անցած տարվա նույն եռամսյակում արձանագրված 37.6% աճի փոխարեն: Միաժամանակ, տնտեսության դոլարայնացումը[8] նվազել է 26.8%-ով և կազմել 20.6%՝ արտարժութային ավանդների 2.9% աճի պայմաններում:

Տնտեսության վարկավորման աճի բարձր տեմպերը պահպանվել են, և առաջին եռամսյակում վարկավորման 12-ամսյա աճը կազմել է 78.8%, միայն դրամով վարկավորման աճը՝ 98.1%:

Ապրիլի դրամավարկային ցուցանիշները համահունչ են եղել երկրորդ եռամսյակի համար ակնկալվող միտումներին. փողի բազան ավելացել է տ/տ 46.5%-ով, որը, դրամային բազմարկչի 4.6% աճի պարագայում, հանգեցրել է դրամային զանգվածի 53.3% աճի: Վերջինիս կառուցվածքում շարունակել են բարձր տեմպերով ավելանալ ինչպես դրամային ավանդները՝ 59.8%, այնպես էլ շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը՝ 49%: Արտարժութային ավանդները դրամային արտահայտությամբ աճել են ընդամենը 4%-ով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 21.1%-ով, որի արդյունքում փողի զանգվածն ավելացել է տ/տ 39.4%-ով: Շարունակում են բարձր մնալ տնտեսության վարկավորման աճի տեմպերը՝ տ/տ 75.6%: Ընդ որում, վարկերի ընդհանուր ծավալում աստիճանաբար փոխվում է դրամ/արտարժույթով տրամադրված միջոցների համամասնությունը հօգուտ դրամայինի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 58/42-ից դառնալով 61/39:

Արծանագրեցին.

Համաշխարհային պարենային շուկաներում բարձր գնաճային միջավայրը և դրանով պայմանավորված պարենային ապրանքների ներքին գների վրա ճնշումները շարունակել են պահպանվել, իսկ արտաքին միջավայրի հետագա զարգացումների անորոշությունը մնացել է բարձր: Միաժամանակ, պարենային ապրանքների գների բարձրացման երկրորդային ազդեցությունները առավել ուժգնացել են՝ մեծացնելով գնաճային ճնշումները ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների շուկաներում, և ավելացրել են գնաճային սպասումները:

Խորհուրդը համակարծիք է, որ 2008 թ. համար սահմանված գնաճի նպատակային թիրախի ապահովման էական ռիսկերի առկայության պայմաններում, որոնց չեզոքացումը դրամավարկային քաղաքականության միջոցով հնարավոր չէ, դրամավարկային

---

[7] Ազդակների հաշվարկման հիմքում ընկած համախմբված բյուջեի ցուցանիշների եռամսյակային բաշխվածությունը կատարվել է դրանց նախորդ տարիների սեզոնային միտումների և փորձագիտական գնահատումների հիմման վրա: Հաշվարկներն իրականացվել են համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված առաջին եռամսյակի ՀՀ պետական բյուջեի նախնական փաստացի ցուցանիշների հիման վրա կազմված ՀՀ համախմբված բյուջեի ցուցանիշների:

[8] Հաշվարկվում է որպես արտարժութային ավանդների և փողի զանգվածի հարաբերություն:

պայմանների աստիճանական խստացումը պետք է շարունակվի արտաքին զարգացումներով պայմանավորված երկրորդային ազդեցությունները մեղմելու և միջին ժամկետ հատվածում գնաճային սպասումները խարսխելու նպատակով:

2008 թ. առաջին եռամսյակի տնտեսական աճի ցուցանիշների որոշակի նվազման և արտաքին հատվածի զարգացումներում կայունացման միտումների պայմաններում ԿԲ խորհրդում գերիշխում էր վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդամենը 0.25 տոկոսային կետով բարձրացնելու մտադրությունը:

Որոշեցին.

Բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 6.75%: Ներգրավված ավանդների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար 3.75% և 9.75%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*Հունվար – մարտ*	*2008թ. հունվար – մարտի իրական աճի ինդեքսը 2007թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*Հունվար - ապրիլ*	*2008թ. հունվար - ապրիլի իրական աճի ինդեքսը 2007թ. հունվար - ապրիլի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	482580.2	108.9	696104.7	109.3
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	105.6	-	106.8
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	448.2	109.8	637.9	109.3
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	168858.5	100.2	226590.6	100.1
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	1722.4	105.9	2144.7	103.9
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	44799.8	100.5	64164.5	101.3
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	184341.6	104.5	253592.1	103.5
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	40772.8	122.5	71132.9	116.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	122553.7	110.2	171740.8	111.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	84738[2]	113.6[1,2]	85720[2]	112.6[1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1152.8	-	1165.1	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	73.2		73.8	-
Գործազրկության մակարդակը *(%)*	6.4	-	6.3	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2008 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.4	101.0	100.2	103.2
Փետրվար	101.1	102.0	100.6	101.3
Մարտ	101.4	99.6	101.0	90.9
Ապրիլ	101.1	102.3	127.5	95.2
2008 թ. հունվար – ապրիլը 2007 թ. հունվար – ապրիլի համեմատությամբ	108.6	104.0	110.3	101.3

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2006*	*2007*	*2008*	*2008*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.5	2.4	2.4	2.4
Փետրվար	0.2	0.2	1.1	3.4
Մարտ	0.1	-0.6	1.4	4.8
Ապրիլ	0.3	0.1	1.1	6.0
Մայիս	2.4	2.1		
Հունիս	-1.2	-0.3		
Հուլիս	-0.7	-3.2		
Օգոստոս	-0.9	-1.5		
Սեպտեմբեր	-0.3	0.7		
Հոկտեմբեր	0.2	3.1		
Նոյեմբեր	1.0	2.1		
Դեկտեմբեր	1.6	1.5		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	5.2	6.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	2.9	4.4		

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	*Նախորդ ամսվա նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**101.1**	**-**
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**100.5**	**0.27**
հացամթերք	105.6	1.54
բանջարեղեն և կարտոֆիլ	86.0	-1.22
մսամթերք	102.0	0.35
կենդանական և բուսական յուղ	104.6	0.35
միրգ	98.9	-0.05
Ոչ պարենային ապրանքներ	**100.6**	**0.10**
անձնական օգտագործման ապրանքներ և բենզին	102.1	0.07
կոշկեղեն	102.2	0.04
վառելիք	95.9	0.0
Ծառայություններ	**102.6**	**0.78**
բուժսպասարկման ծառայություններ	105.3	0.48
տրանսպորտի ծառայություններ	104.3	0.19
հանրային սննդի	103.4	0.05

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[1]

ժամանակաշրջան	*2006*	*2007*	*2008*
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.4	0.2	0.4
Փետրվար	-0.3	-0.1	0.8
Մարտ	0.0	-0.1	0.7
Ապրիլ	0.3	0.3	1.3
Մայիս	0.2	0.3	
Հունիս	0.0	-0.2	
Հուլիս	0.8	-0.2	
Օգոստոս	-0.2	-0.2	
Սեպտեմբեր	0.4	0.5	
Հոկտեմբեր	0.2	0.8	
Նոյեմբեր	0.2	0.8	
Դեկտեմբեր	0.0	0.3	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.90	1.97	2.91
Փետրվար	1.43	2.21	3.77
Մարտ	1.50	2.07	4.54
Ապրիլ	2.15	2.05	5.67
Մայիս	2.49	2.14	
Հունիս	2.64	2.05	
Հուլիս	4.01	1.03	
Օգոստոս	3.73	1.18	
Սեպտեմբեր	2.82	1.32	
Հոկտեմբեր	2.80	1.94	
Նոյեմբեր	2.64	2.45	
Դեկտեմբեր	2.09	2.70	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ 10 ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[1]

Անվանում	*Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)*
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**5.67**
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.9
Խոզի միս	0.6
Օդային տրանսպորտ	0.4
Կարագ	0.4
Ծառայություններ բժշկական լաբորատորիաների (ռենտգեն նկար)	0.4
Բենզին	0.4
Ծառայություններ միջին բժշկական անձնակազմի և լաբորանտների բուժագործությունների անցկացման ստացիոնարներում	0.3
Մակարոն	0.3
Ծառայություններ բժիշկ-մասնագետների և վիրաբույժների (խորհրդատվական)	0.2
Վճարովի ԲՈՒՀ	0.2

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:


[2]Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնացված կառավարման գրամաշրջանառության միջոցներ և ժամկետային ավանդներ	կենտրոնացված կառավարման այլ հաշիվներ	ՕԻԳ-երի միջոցներ դրամով	ՕԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2007									
Դեկտեմբեր [1]	0	4541	4541	93623	513	0	175	94311	**-89770**
2008									
Հունվար	0	4650	4650	111457	517	0	177	112151	**-107501**
Փետրվար	0	4266	4266	113865	519	0	177	114562	**-110295**
Մարտ	0	4113	4113	128159	520	0	94	128773	**-124659**
Ապրիլ	0	3934	3934	122435	518	2	92	123048	**-119113**

[1] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Ամվաճում	*2008 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2008 թ. հունվար – մարտը 2007 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*2008 թ. հունվար – ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)*	*2008 թ. հունվար – ապրիլը 2007 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	234.7	101.5	337.2	104.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	848.2	131.5	1194.2	137.2
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	613.5	148.3	857.0	156.6

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ 2007 - 2008 ԹԹ.

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2007 թվական					
	Հունվար – ապրիլ			Ընդամենը		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	216337	42969	173368	1078218	129126	949092
ԱՄՆ	25363	5379	19984	76571	23764	52808
Գերմանիա	3431	1951	1481	13210	7764	5446
Ուկրաինա	3373	2533	841	14646	10770	3876
Ֆրանսիա	2506	1331	1174	9659	4851	4808
Մեծ Բրիտանիա	1954	682	1272	7517	2717	4800
Շվեյցարիա	1051	1385	-334	4865	2151	2713
Թուրքիա	475	1762	-1286	2268	10338	-8070
ԱՄԱ	763	4330	-3567	2812	13339	-10528
Այլ երկրներ	29104	15840	13264	109713	56348	53364
Ընդամենը	284358	78162	206196	1319479	261170	1058310

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2008 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	100601	10361	90241	313315	35541	277774
ԱՄՆ	7251	2920	4331	20498	12258	8239
Գերմանիա	1287	424	863	4775	2073	2702
Ուկրաինա	2597	809	1787	7252	3380	3872
Ֆրանսիա	946	549	397	2782	1588	1194
Մեծ Բրիտանիա	1618	129	1489	3052	788	2264
Շվեյցարիա	1101	52	1049	2440	135	2305
Թուրքիա	313	459	-146	1138	1554	-417
ԱՄԱ	795	895	-100	2898	3571	-673
Այլ երկրներ	10522	3750	6772	34582	13794	20788
Ընդամենը	127031	20348	106683	392733	74683	318050

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ[1]

2007	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	119.2	120.7	117.6	113.9	118.8	121.3	117.8	116.9	114.8	118.2	122.5	129.1
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	209.1	212.8	210.0	204.7	210.1	216.1	217.2	219.2	215.5	217.6	222.9	233.4
2008	**Հ**	**Փ [2]**	**Մ [2]**	**Ա [2]**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	129.5	129.1	126.2	127.2								
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	230.3	229.1	223.1	223.7								


[1] Հաշվարկված է ՀՀ 9 հիմնական գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների նկատմամբ՝ 1999-2003 թթ. կշիռներով:
[2] Ըստ ԿԲ գնահատումների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2007	2008			
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	1659.2	1628.1	1621.7	1606.0	1595.2
Համախառն միջազգային պահուստներ	1659.2	1628.1	1621.7	1606.0	1595.2
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	9.7	9.8	7.2	7.5	19.8
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	1649.5	1618.3	1614.5	1598.5	1575.4

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 07 [3]	Հ - 08	Փ - 08	Մ – 08 [3]	Ա - 08
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1,2]	***445999***	***435704***	***432751***	***424073***	***424318***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-18881***	***-43718***	***-43436***	***-43252***	***-19757***
Կառավարություն	-89770	-107501	-110295	-124659	-119113
Բանկեր	24596	22053	20153	30429	35415
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	10188	10521	7151	14524	19321
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0
Ավանդներ (-)	0	-3000	-2000	-100	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-48958	-49666	-38771	-35982	-27858
Զուտ այլ ակտիվներ	95251	91396	85477	86961	91800
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***427118***	***391987***	***389315***	***380822***	***404561***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	350274	330681	333451	325751	329178
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	37445	31378	27285	22566	28740
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	38421	28877	27610	31445	45691
Այլ հաշիվներ	979	1051	969	1060	952
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	941	1022	955	1045	952
Այլ հաշիվներ (արտարժույթով)	38	29	14	15	0
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-10295***	***-2953***	***-8678***	***245***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-24837***	***281***	***185***	***23495***
Կառավարություն	-	-17731	-2795	-14364	5546
Բանկեր	-	-2543	-1901	10276	4986
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3000	-1000	-1900	-100
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	708	-10895	-2789	-8123
Զուտ այլ ակտիվներ	-	-3855	-5918	1483	4839
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-35132***	***-2672***	***-8494***	***23739***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-19592	2769	-7700	3428
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-6067	-4093	-4719	6173
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-9545	-1267	3835	14246
Այլ հաշիվներ	-	72	-82	91	-107
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	81	-67	90	-92
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-9	-15	1	-15
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-2.3***	***-0.7***	***-2.0***	***0.1***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-131.5***	***0.6***	***0.4***	***54.3***
Կառավարություն	-	-19.8	-2.6	-13.0	4.4
Բանկեր	-	-10.3	-8.6	51.0	16.4
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	1.4	-21.9	-7.2	-22.6
Զուտ այլ ակտիվներ	-	-4.0	-6.5	1.7	5.6
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-8.2***	***-0.7***	***-2.2***	***6.2***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-5.6	0.8	-2.3	1.1
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-16.2	-13.0	-17.3	27.4
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-24.8	-4.4	13.9	45.3
Այլ հաշիվներ	-	7.4	-7.8	9.3	-10.1

